ԼՈՒՍԱՓԱՅԼ

1977

Դ

ԱԶԻ 146



ԼԴ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Վաղարշապատ

Էջմիածնի Վեհարանի Գրադարան

1977

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(1977 թ. ապրիլի 10)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. ամէն:

«Զի՞ խնդրէք զկենդանիս ընդ մեռեալս: Չէ աստ՝ այլ յարեաւ» (Ղուկ. ԻԴ 6):

«Ինչո՞ւ եք փնտրում նրան մեռելների մեջ, որը կենդանի է: Նա այստեղ չէ, այլ հարություն առավ»:

Սիրելի հավատացյալներ,

Ղուկաս ավետարանչի վկայությունն է այս Հիսուսի մասին: Վկայություն, որ դարեր ու սերունդներ բազում իրար փոխանցեցին մինչև մեր օրերը որպես մեծագույն ավետիս: Անցնող երկու հազար տարիների մարդկային ոգեկանության ու ողջ պատմության առանցքը՝ անիմանալի հրաշքն է Հիսուսի հարության:

Գողգոթայի բարձունքում, չարչարանաց խաչի վրա, Հիսուս ավանդել էր Իր վերջին շունչը, ապա Նրա մեռյալ մարմինը հանձնվել էր հողին, գերեզմանը թաղելով ծանր մի քարի տակ և հռոմեացի զինվորներին թողել այնտեղ որպես պահակներ: Կատարվել էր մի մեծ ողբերգություն: Բոլոր արդար սրտերը ողբում էին Հիսուսի մահը և դրանում տեսնում շիջումը իրենց երազանքների իրականացման, որովհետև դարերով սպասված ու գտնված Մեսիան խորտակվել էր ու գերեզմանվել: Խոնարհ մարդկանց հոգիների երկնքում հանգել էին աստղերը հույսի: Խավարն ու հուսահատությունն էր տիրում արդարության ծարավի խոնարհ բազմությունների սրտերում: Այս հոգեմաշ ապրումներով սկեկոծ՝ բարեպաշտ կանայք եղան առաջինները, որ միաշաբաթի վաղ առավոտյան եկան Հիսուսի գերեզմանին խունկ և յուղ բերելու: Բայց հազիվ մոտեցած, զարհուրանքով տեսան, թե գերեզմանի մեծ քարը թավալված է մի կողմ, և ինքը գերեզմանը դատարկ է մնացել: Այդ պահին է, որ երևացին նրանց, ինչպես երանելի մի երազի մեջ, լուսավոր կերպարանքներով երկու մարդիկ, որոնք մեղմիկ, սակայն

պայծառ ձայնով ասացին նրանց. «Զի՞ խնդրէք զկենդանիս ընդ մեռեալս. չէ աստ՝ քանզի յարեաւ. յիշեցէք որպէս խօսեցաւ ընդ ձեզ մինչ էրն ի Գալիլիայ և ասէր թէ պարտ է Որդւոյ մարդոյ մատնիլ ի ձեռս մարդոց մեղաւորաց և ի խաչ ելանել և յերրորդ աւուր յառնել»:

Հիսուս մեռելներից հարություն էր առել: Մանը պարտվել էր հաղթությամբ, ինչպես պիտի ասեր հետո Պողոս առաքյալը: Հաղթություն՝ ընդդեմ մեղքի, ընդդեմ չարի, ընդդեմ անարդարության: Հաղթություն՝ որ մարդկային հոգու ազատ աշխարհում բացեց մի նոր ճանապարհ, ճանապարհը՝ նյութի կապանքներից ազատվելու, ճանապարհը մահը հեգնելու, ճանապարհը փրկության, ճանապարհը հավերժ ապրելու:

Հիշեցին այն ժամանակ երուսաղեմացիք, և հիշում ենք մենք էլ այսօր, մարգարեական խոսքը Հիսուսի, թե՝ «Ես կենդանի եմ և դուք կենդանի լինելոց էք»:

Հոգու աշխարհի բարձունքներում, Հիսուսի հարությունը դարձավ ավելի իրական, քան ինքը նյութական իրականությունը: Անիմանալին դարձավ ստուգություն, դարձավ հավատք, դարձավ ստեղծարար ուժականություն, դարձավ մարդու կյանքը իմաստավորող փարոս, դարձավ առաջնորդող լույս: Դարձավ անկարելիի ու կարելիի սահմանների վրա բարձրացած նյութեղեն պարիսպը տապալող փոթորիկ: Դարձավ կերտիչ մարդկային պատմության:

Եվ չմոռանանք, որ մարդը իր մարդկային էությամբ ամեն բանից վեր՝ ոգեկան մի իրականություն է, բնության նյութականության ծոցում: Իր բոլոր նյութական պայմանավորումներով հանդերձ, մարդը բարձրանում է իր հոգեկանով նոր մակարդակի վրա, ստեղծում է նոր որակ նյութի տիեզերքում: Այդ նոր որակով է, որ բնորոշվում է մարդու մարդկայնությունը:

Հիսուս Իր գերբնական հարությամբ մահավանդ, հավիտենական երաշխիքն է հանդիսանում ոգեկանի, այսինքն՝ մարդկայինի իրականության:

Մարդիկ և սերունդներ բազում հավատացին և պիտի հավատան միշտ, որ Հիսուսի գերեզմանի քարը տապալող անտեսանելի և անիմանալի ուժը, կտապալի և միշտ պիտի տապալի բոլոր արդար հույսերի և երազանքների վրա ծանրացած գերեզմանաքարերը, ինչքան էլ անհնար թվա այդ, գերեզմանող անիրավ ձեռքերին:

Մեր հինավուրց ժողովուրդը, հայ ազգը, շատ դարեր առաջ, քրիստոնեության արշալույսի առաջին իսկ շողարձակումների օրերին, հավատաց հարության հրաշքին, հավատաց Քրիստոսի հարության շնորհներով մարդկային կյանքը հեղաշրջելու և պայծառակերպելու աշխարհասասան ստեղծարար գաղափարին:

Նոր կազմավորվող ու իր լինելության ուղին փնտրող հայ հոգին, հարուցյալ Քրիստոսի Ավետարանով գտավ իմաստը իր գոյության և ձևերը իր ոգեկանության: Ավետարանի լույսով շաղախվեց ու արգասավորվեց իր հոգին: Մշակույթը և պատմությունը հայոց՝ արգասիքներն են այդ լույսի, ազգային ինքնատիպ ձևերի ու կաղապարների մեջ: Լեզուն և գրականությունը, գիտությունը և դպրությունը, հարտարապետությունն ու քանդակագործությունը, երաժշտությունն ու նկարչությունը, այն գիտակցությունը բարոյականի, ծարավը ճշմարիտի ու արդարի, տենչը ազատ ապրելու, զգացումը ընտանեկան սրբության, հերոսական ըմբոստումը հայրենիքի սիրո,— անհա անկորնչելի արժեքներ, որոնք Քրիստոսի շնորհներով աճեցին ու ծաղկեցին հայոց ողջ պատմության ընթացքում: Ինչքան խոր ճշմարտություն կա՝

Ավարայրի ճակատամարտի նախօրյակին ս. Վարդան զորավարի արտասանած ճառի մեջ, թե՝

«Հազկերտը կարծում է, թե մենք քրիստոնեությունը իբրև զգեստ ենք կրում. բայց այն մենք չենք կարող փոխել, ինչպես գույնը մեր մարմնի»:

Եվ անավասիկ մենք ևս, այսօրվա հայերս, կանգնած ենք մեր քրիստոնեական ազգային ոգեկանության նույն պատվանդանի վրա, նույն լինելության ու արգասավորման ճանապարհին, նույն հավատքով, նույն ստեղծարար կամեցողությամբ, նույն բարոյական ու հայրենասիրական իդեալներով ոգեշնչված: Մենք նույն հայերն ենք, ինչպես Տիգրան Մեծի, ինչպես ս. Մեսրոպ Մաշտոցի և Վարդան Մամիկոնյանի օրերին: Մեզանից ամեն մեկը հայ է երեք հազար տարիներից ի վեր:

Այս զգացումներով, այս մտորումներով ու տենչանքներով մենք՝ հայ քրիստոնյաներս, ողջունում ենք մի անգամ ևս հրաշքը Քրիստոսի հարության և վերանորոգում մեր սրբազան ուխտը հավատարիմ մնալու մեր լուսաբնակ նախնյաց հրաշագործ հավատքին, միշտ բարձր պահելու աշխարհի և պատմության առջև ջահը հայկական ոգեկանության, միշտ կենդանի ու պայծառ պահելու մեր մայրենի հարազատ լեզուն, մեր հոգիները միշտ սնելու և ազնվացնելու հայ հոգևոր մշակույթի արժեքներով, միշտ ամեն բանից թանկ դավանելու վերածնված արդի մայր երկիրը մեր՝ հավիտենական Հայաստանը ամենայն հայոց, որ իր նոր կյանքով, իր նոր լույսերով, իր նոր սխրանքներով ու իդեալներով, ուղիղ գծով համալրումն է հայ ազգային ոգեկանության և շարունակությունը հայոց պատմության հերոսական երթի: Դուք բոլորդ, բոլորդ անխտիր, սիրեցյալ զավակներ Մեր, Հայաստանից թե սփյուռքի ճամփաներից, սուրբ Զատկի ավետաբեր այս պահին լայն բացեք դռները ձեր սրտերի և ընդունեցեք Աստուծո օրհնությունը սուրբ Էջմիածնի նվիրական սեղաններից և կարոտալի ողջույնը մայր հայրենիքի, ձեր հավատակից եղբայրների և քույրերի:

Զատիկ է այսօր, սիրելիներ, ցնծացեք և ուրախ եղեք, զի դատարկ է գերեզմանը խաչյալ Քրիստոսի: Ցնծացեք և ուրախ եղեք նաև, զի դատարկ է նույնպես գերեզմանը մեր նահատակված ժողովրդի:

Փա՜ռք Քրիստոսի հրաշափառ Հարության:

Փա՜ռք հայոց ազգի ու հայրենիքի լուսաշող վերածնունդին:

Եվ արդ, «Գնացէք սիրով որպէս և Քրիստոս սիրեաց մեզ և մատնեաց զանձն իւր վասն մեր պատարագ», «զի թէպէտ և երբեմն էիք խաւար, արդ լոյս էք ի Տէր, իբրև զորդիս լուսոյ գնացէք» (Եփես. Ե 2, 8):

«Զի յարեաւ Քրիստոս ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց». ամեն:

Բոլոր Եկեղեցիներ

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ
ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ
ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական կաթոլիկ եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻՆ (Հռոմ),

Կոստանդնուպոլսի հունաց տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),

Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),

Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկեայի հունաց ուղղափառ եկեղեցու
Պատրիարք, Նորին Սրբություն ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-ԻՆ
(Ալեքսանդրիա),

Երուսաղեմի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Ա-ԻՆ (Երուսաղեմ),

Ղպտի ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԵՆՈՒԴԱ Գ-ԻՆ (Ալեքսանդրիա),

Անտիոքի և համայն Արևելքի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն ԷԼԻԱՍ Դ-ԻՆ (Դամասկոս),

Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲՈՒՆԱ ՏԵԿԼԵ ՀԱՅՄԱՆՈՏԻՆ (Ադիս-Աբեբա),

Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա-ԻՆ (Քոթայամ),

Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն ԴԱՎԻԹ Ե-ԻՆ (Թբիլիսի),

Ռումին օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԺՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (Բուխարեստ),

Բուլղար օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),

Անտիոքի և համայն Արևելքի հույն կաթոլիկ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Դամասկոս),

Անտիոքի ասորի կաթոլիկ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՆԵԿ Բ-ԻՆ (Բեյրութ),

Քենթրբերիի արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՖՐԵԴԵՐԻԿ ԴՈՆԱԼԴ ԿՈԳԱՆԻՆ (Լոնդոն),

Աթենքի և համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք),

Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն ՀԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),

Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՎԱՍԻԼԻԻՆ (Վարշավա),

Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ԴՈՐՈՖԵԻՆ (Պրագա),

Հայ կաթողիկե եկեղեցու Պատրիարք, Նորին Ամենապատվություն ՀՄԱՅԱԿ-ՊԵՏՐՈՍ ԿԵՏԻԿՅԱՆԻՆ (Բեյրութ),

Կիպրոսի արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն ՄԱԿԱՐԻՈՍԻՆ (Նիկոզիա),

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. ՖԻԼԻՊ ՓՈԹԸՐԻՆ (Ժնև),

Վատիկանի պետական քարտուղար, Նորին Ամենապատվություն կարդինալ ԺԱՆ ՎԻԼԼՈՅԻՆ (Վատիկան),

Վիեննայի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ ՖՐԱՆՑ ԿՅՈՆԻԳԻՆ (Վիեննա),

Փարիզի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ ՖՐԱՆՍՈՒԱ ՄԱՐՏԻՆ (Փարիզ),

Լիոնի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌԸՆԱՐԻՆ (Լիոն),

Քրիստոնեական միության քարտուղարության նախագահ, Նորին Ամենապատվություն կարդինալ ԺԱՆ ՎԻԼԼԲՐԱՆԴՍԻՆ (Վատիկան),

Մարսելի արքեպիսկոպոս, Գերաշնորհ ՌՈԺԵ ԷՉԵԳԱՐԱՅԻՆ (Մարսել),

Լատվիական ՍՍՀ ավետարանական-լութերական եկեղեցու արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն Յ. Պ. ՄԱՏՈՒԼԻՍԻՆ (Ռիգա),

Էստոնական ՍՍՀ ավետարանական-լութերական եկեղեցու արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն ԱԼՖՐԵԴ ՏՈՈՄԻՆԳԻՆ (Տալլին),

Միջին Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ,
Վերապատվելի ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ (Բեյրութ),
Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ
ՄԱՈՒՐԻԼԻՈ ՍԱԿԿԻԻՆ (Երուսաղեմ),
Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի գլխավոր քարտուղար
դոկտ. ԿԱՐՈԼԻ ՏՈԹԻՆ (Պրագա),
Իրաքի պապական նվիրակ, Գերաշնորհ
ԺԱՆ ՌՅՈՒՊԻՆ (Բաղդադ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր
ՊՈՂՈՍ վարդապետ ԱՆԱՆՅԱՆԻՆ (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր
ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),
Վերապատվելի ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԵԼՎԱՃՅԱՆԻՆ (Մարսել),
Վերապատվելի ՎԱՀԱՆ Հ. ԹՈՒԹԻԿՅԱՆԻՆ (Նյու Յորք),

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Երջանիկ ենք հույժ, Մեր այս սիրո գիրը հղելու Ձերդ Սրբության Քրիստոսի լուսափայլ Հարության ավետիսով և բարի մաղթանքներով, որ Տերը Ձեզ շնորհի քաջառողջ ու իաղաղ կյանք, երկար արևոտ տարիներ, որպեսզի շարունակեք Ձեր հովվապետական սրբազան առաքելությունը, հաջողություն ձեր հոգիների և ձեր փառավոր ու պատմական եկեղեցու սպասավորների և հավատավոր ժողովրդի:

Աղոթում ենք նաև անձանձրույթ, որ մեր օրերի մարդիկ ու ժողովուրդները բոլոր, լուսավորված ամենահաղթ շնորհներովը աշխարհի Փրկչի հարության, միասիրտ ու միակամ գործակցությամբ որոնեն ու գտնեն ճշմարիտ ուղին իրենց կյանքի խաղաղության, անվտանգության ու երջանկության:

Եղբայրական սիրո ողջագուրանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության շնորհավորական գրություններին ի պատասխան ստացվել են քույր եկեղեցիների հոգևոր պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների՝ այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական եղբայրության ու համագործակցության արտագին ոգին քույր եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Աստվածակառույց սուրբ Էջմիածնի բարձունքից երջանիկ ենք Ձեզ վերստին բերելու մեծ ավետիսը ամենահաղթ Հարության Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի: Լուսաշող շնորհները հրաշալի Հարության, թող առատապես բաշխվեն տիրախնամ սուրբ Աթոռիդ բոլոր եկեղեցական համայնքներին հառավել շինություն մեր հավատավոր և հավատացյալ ժողովրդի հոգեվոր ու ազգային մշակութային կյանքի:

Ձեզ, սիրելի Սրբազան Եղբայր, ձեր եկեղեցիների ուխտապահ սպասավորներին ու ձեր եկեղեցյաց վարչական մարմինների բոլոր անձնվեր անդամներին, մաղթում ենք մշտանորոգ հոգևոր հերշնչանքներ ու անսպառ եռանդ, շարունակելու ձեր կրոնական ու ազգապահպան սրբազան առաքելությունը:

Աղոթում ենք նաև անձանձրույթ, որ լուսավորված աշխարհի Փրկչի Հարության շնորհներով, մեր օրերի մարդիկ ու ժողովուրդները համայն գտնեն ճշմարիտ ուղին իրենց կյանքի խաղաղության, համերաշխ գործակցության ու բարօրության:

«Արդ, Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց՝ առաջին պտուղ ննջեցելոց, քանզի մարդով եղև մահ, և մարդով յարութիւն մեռելոց: Որպէս Ադամաւն ամենեքին մեռանին, նոյնպէս և Քրիստոսիւ ամենեքեան կենդանացցեն» (Ա Կորնթ. 20—22):

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:



ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Ապրիլի 10-ին, կիրակի. Զատիկ. Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Դարձյալ Զատիկ է. քրիստոնեական եկեղեցու ցնծության և բերկրանքի տոնը:

Գարուն է. բնության մեջ և մարդկանց հոգիներում:

Վաղ առավոտյան մայրավանքի շրջապատում տիրում է աշխույժ տրամադրություն: Հազարավոր հավատացյալներ Մայր Աթոռ են փութացել՝ ներկա լինելու զատկական մեծ տոնակատարությանը և սուրբ պատարագին:

Ճիշտ ժամը 11-ին ուրախ զողանջներով հնչում են Մայր տաճարի զանգակները:

Ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետը, տոնական հանդիսավորությամբ, շրջապատված Մայր Աթոռի միաբանությամբ, եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու զատկական ս. պատարագ:

Վեհ ու խրոխտ հնչում են «Գովեա Երուսաղէմ զՏէր» և «Յարեաւ Քրիստոս» հոգեզմայլ տաղերը Մայր տաճարի երգչախմբի կատարմամբ՝ ղեկավարությամբ Խորեն Մելիքանեջյանի:

Ս. պատարագին ներկա են ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող լիբանանահայ ծանոթ հասարակական գործիչներ՝ Ավետիս Դեմիրճյանը, «Արարատ» օրաթերթի խմբագիր Ժիրայր Նահիրին:

Ս. պատարագին և հայրապետական քարոզին ներկա են նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով բովանդակ հայության Զատիկը, քարոզում է ս. Հարության տոնի հոգևոր և պատմական նշանակության մասին: Հայրապետական սույն քարոզը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 3): Զատկական սույն քարոզը նաև ձայնասփռվում է երեկոյան ժամը 24-ին Երևանի ռադիոյից:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է Վեհարան, ուր ընդունում է շնորհավորանքներ զատկական տոնի առիթով:

Այստեղ Վեհափառ Հայրապետը ողջունում և բարի գալուստ է մաղթում Զատկվա տոների առիթով ուխտավորաբար ս. Էջմիածին ժամանած ֆրանսահայերի մի մեծ խմբի՝ գլխավորությամբ Փարիզի կրոնական ընկերակցության ներկայացուցչական ծողովի անդամ Արմենակ Գուլումջյանի: Վեհարանում Հայոց Հայրապետի Զատիկը աջահամբույրով շնորհավորում են և՛ ֆրանսահայ ուխտավորները, և՛ մայր հայրենիքում սովորող սփյուռքահայ երիտասարդաց խումբը:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը

տրվում է զատկական ճաշ, որին ներկա են լինում տ. Կոմիտաս, տ. Վահան, տ. Արսեն սրբազանները, տ. Անանիա, տ. Եզնիկ, տ. Մոմիկ և տ. Թորգոմ վարդապետները և սարկավագաց դասը:

Հրավիրյալների թվում էին պրն. Սարգիս Գասպարյանը, պրն. Անդրանիկ Հասրաթյանը, պրն. Ավետիս Դեմիրճյանը, պրն. Ժիրայր Նահրին, պրն. Արմենակ Գուլումջյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, Մայր Աթոռի ղեկավար անձինք և ուրիշներ:

Օրվա տոնի առթիվ Վեհափառ Հայրապետն Իր բարձր գնահատությանն է արժանացնում Մայր Աթոռի վերոհիշյալ չորս երիտասարդ ու խոստումնալից վարդապետների ծառայությունը՝ զարդարելով նրանց կուրծքը վարդապետական լանջախաչերով:

Հանուն իր ընկերների, որդիական երախտագիտության և շնորհակալության ջերմ խոսք է ասում տ. Թորգոմ վրդ. Մուշեղյանը:

Զատկական ճաշն ավարտվում է Վեհափառ Հոր օրհնությամբ:

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ Տ. ԺՈՒՍՏԻՆԻԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ՀԱՆԳԻՍՏ ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԺՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ

Սույն թվականի մարտի 27-ին Բուխարեստում, 76 տարեկան հասակում, ի Տեր հանգչավ ռումին օրթոդոքս եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Ժուստինիանը: Ռումին օրթոդոքս եկեղեցին մեծ ու ծանր կորուստ կրեց:

Հանգուցյալ Սրբազան Պատրիարք Հոր գահակալության 29 տարիներին ռումին օրթոդոքս եկեղեցին ապրեց հոգևոր վերազարթոնքի, եկեղեցական-վանական շինության, հոգևոր կրթական գործունեության բեղմնավոր և արդյունաշատ մի շրջան: Նորին Սրբությունը եղավ նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անձնական բարեկամը, ինչպես նաև հայ եկեղեցու և Մայր Աթոռ ս. Էջմիածնի նկատմամբ ջերմ սիրով տոգորված մի Հովվապետ: Ամենայն Հայոց Հայրապետի և Տ. Ժուստինիան Պատրիարքի գահակալության օրերին Է՛լ ավելի սերտացան ու խորացան երկու քույր եկեղեցիների եղբայրական հարաբերությունները էկումենիկ ոգով՝ փոխադարձ այցելություններով, ինչպես նաև ամրապնդվեցին ռումին և հայ ժողովուրդների հոգևոր, մշակութային պատմական կապերը:

Այս մտածումներով առաջնորդված, Հայոց Հայրապետը որոշեց ներկա լինել հանգուցյալ ռումին Պատրիարքի թաղման արարողությանը՝ անձամբ տանելու Մայր Աթոռ ս. Էջմիածնի, հայ եկեղեցու և հայ հավատացյալների ցավակցությունները և Իր եղբայրական սրտաբուխ խոսքերով սփոփելու ռումին օրթոդոքս եկեղեցու կրած վիշտը:

Մարտի 29-ին, երեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը մեկնեց Մոսկվա: Հայոց Հայրապետին ընկերակցում էր Գերագույն հոգևոր խորհրդի անդամ և Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲՈՒԽԱՐԵՍՏՈՒՄ

Մարտի 30-ին, չորեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը ժամանեց Բուխարեստ: Օդանավակայանում Նորին Սուրբ Օծությանը դիմավորեցին առաջնորդ տ. Տիրայր եպիսկոպոսը, առաջնորդական փոխանորդ տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանը, քահանայից դասը և թեմական, թաղական խորհուրդների անդամներ:

Այստեղ Հայոց Հայրապետին, հանուն ռումին օրթոդոքս եկեղեցու սինոդի, դիմավորեցին Օլդենիայի միտրոպոլիտ Թեոկտիստը, ինչպես նաև ռումին դավանությանց խորհրդի նախագահի ներկայացուցիչը և Ռումինիայում Սովետական Միության դեսպանության առաջին քարտուղարը:

Ապրիլի 31-ին, հինգշաբթի օրը, կատարվեց հանգուցյալ ռումին Սրբազան Պատրիարք Հոր թաղման հանդիսավոր արարողությունը: Թաղման արարողությանը մասնակցելու համար ժամանել էին քույր եկեղեցիների պատվիրակությունները:

Առավոտյան ժամը 10-ին Բուխարեստում, ռումին օրթոդոքս եկեղեցու պատրիարքարանի սինոդի դահլիճում, տեղի ունեցավ սգո հանդիսավոր նիստ՝ նախագահությամբ Մոլդավիայի տ. Ժուստին միտրոպոլիտի:

Սույն արարողությանը ներկա եղան պետական բարձր պաշտոնատարներ, այդ թվում՝ Պետական խորհրդի նախագահի տեղակալ Շտեֆան Վոյտեկը, դավանությանց խորհրդի նախագահ Ռոշիանուն և ուրիշներ:

Սգո հանդիսավոր նիստը բացեց պատրիարքական նորընտիր տեղապահ տ. Ժուստին միտրոպոլիտը՝ վեր հանելով հանգուցյալ Պատրիարքի կյանքի և պատրիարքական 29 տարիների գործունեության ընդհանուր պատկերը:

Այնուհետև նիստի դահլիճում ցավակցական սրտառուչ ճառերով հանդես եկան հունաց Տիեզերական պատրիարքության, Հունաստանի օրթոդոքս եկեղեցու, Երուսաղեմի հունաց պատրիարքության, հռոմեական կաթոլիկ եկեղեցու, անգլիկան եկեղեցու, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ներկայացուցիչները և ուրիշներ:

Սգո նիստում խոսք առան նաև Ռումինիայում կաթոլիկ, բողոքական և մովսիսական համայնքների հոգևոր պետերը:

Սգո սույն հանդիսավոր նիստից հետո բոլոր ներկաները եկեղեցական թափորով առաջնորդվեցին պատրիարքարանի Մայր տաճար, ուր դրված էր հանգուցյալ Սրբազան Պատրիարքի դագաղը: Այստեղ, տպավորիչ իրադրության մեջ, կատարվեց հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոն:

Արարողությունից հետո խոսք առան բուլղար օրթոդոքս եկեղեցու պետ Նորին Սրբություն Մաքսիմ Պատրիարքը, դավանությանց խորհրդի նախագահ Ռոշիանուն և ռուս պրավոսլավ եկեղեցու ներկայացուցիչ Տալլինի տ. Ալեքսեյ միտրոպոլիտը:

Մայր տաճարում խոսք առավ նաև Հայոց Հայրապետը:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Խոր վշտով գալիս ենք ս. Էջմիածնի մեր Մայր Աթոռից, բերելով՝ հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու քրիստոնեական մի վերջին ողջույն Նորին Սրբություն Ժուստինիան Պատրիարքին, Մեր շատ սիրելի եղբորն ի Քրիստոս, որի հոգին բարձրանում է այժմ դեպի հավիտենական օթևանները երկնային:

Տխրության և հուսո այս պահին, Մենք այստեղ ենք, ձեր կողքին, ջերմապես աղոթելու հոգվո հանգստյան և լուսավորության համար ռումին աստվածասեր ժողովրդի մեծ Հովվապետի, որը Իր ողջ կյանքում եղավ այնքան արևելյան ուղղափառության և հուժկու պայքարող ի խնդիր աշխարհի խաղաղության սրբազան դատի:

Որպես Ռումինիայի հայոց թեմի նախկին եպիսկոպոս և ապա, որպես կաթողիկոս Հայաստանյայց եկեղեցու, տարիներ շարունակ, մոտ երեք տասնամյակներ Մենք էլ ականատես եղանք Նրա հերոսական ջանքերին և հիշարժան պատմական իրագործումներին՝ նվիրված միայն ու միայն նախնյաց ս. եկեղեցու ծաղկմանը և ռումին անվեհեր ժողովրդի բարօրությանն ու հառաջդիմությանը, մի ժողովուրդ, որն այսօր համազգային կառուցման տարիներին և ընկերային արդարության հասարակարգի պայմաններում, սավառնում է դեպի այն ոսկյա ապագան, որ դեռ մի դար առաջ երազել էին ռումին ազգի հայրենասեր մեծ զավակները:



Հայոց Հայրապետը ընթերցում է Իր ցավակցական խոսքը

Ի Տեր ննջեցյալ Ժուստինիան Պատրիարքը իրապես պատերազմեցավ բարվոք պատերազմը, և պաշտպանեց հավատքը, իսկ այժմ իր ընթացքի ավարտին հասած՝ արժանի է ընդունելու արդարության պսակը (Բ Տիմոթեոս Դ 6—8):

Սրտով՝ լի քրիստոնեական սուրբ և փրկարար հույսով, ծնրադիր աղոթում ենք, որպեսզի հոգնաշատ Հովվապետի հիշատակը միշտ պայծառ մնա թե՛ երկնքում և թե՛ այստեղ՝ ռումինացիների թանկագին հողի վրա:

Տարիներ պիտի անցնեն, սերունդներ իրար պիտի հաջորդեն, և Ժուստինիան Պատրիարքի անունը առավել պիտի փայլի փառքի մեջ: Նա չի մահանալու, որովհետև Իր մահկանացու մարմինը անմահություն զգեցավ, և մահը պարտվեց հաղթությամբ, ըստ Բանին Պողոս առաքյալի (Ա Կորնթ. ԺԵ 54):

Թող Աստուծո սուրբ Հոգին հավետ իջնի ռումին օրթոդոքս սուրբ եկեղեցու վրա և հաջողությամբ պսակի նրա սպասավորների ձեռաց գործերը:



Թող հավիտյան օրհնյալ լինի ի Տեր հանգուցյալ Ժուստինիան Պատրիարքի փառավոր հիշատակը: Ամեն:

Հոգեհանգստյան արարողությունից հետո կազմվեց թաղման թափոր, որն ուղղվեց Ռադու Վոդա եկեղեցի, որ վերջերս էր վերանորոգվել հանգուցյալ Պատրիարքի կողմից: Հենց այստեղ էլ ամփոփվեց նորոգ հանգուցյալ Տ. Ժուստինիան Պատրիարք Հոր աճյունը:

Թաղմանական թափորը դեպի եկեղեցի

Այնուհետև պատրիարքարանի սեղանատանը տրվեց հոգեճաշ:

Տ. Ժուստինիան Սրբազան Պատրիարքի ազգ հանդեսի, հոգեհանգստյան և թաղման արարողություններին Հայոց Հայրապետի հետ մասնակցեցին տ. Կոմիտաս, տ. Տիրայր սրբազանները և տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանը:

ԱՅՑ ՏԵՂԱՊԱՀ Տ. ԺՈՒՍՏԻՆ ՄԻՏՐՈՊՈԼԻՏԻՆ

Ապրիլի 1-ին, ուրբաթ օրը, Վեհափառ Հայրապետն Իր մեկնումի առիթով այցելություն տվեց տեղապահ տ. Ժուստին միտրոպոլիտին: Հայոց Հայրապետին ուղեկցում էին տ. Կոմիտաս և տ. Տիրայր սրբազանները:

Հայոց Հայրապետն այս առթիվ կրկին Իր խորազգաց ցավակցությունը հայտնեց ռումին օրթոդոքս եկեղեցու և հավատացյալների կրած մեծ կորստի համար: Տեղի ունեցավ ջերմ զրույց, որի ընթացքում Հայոց Հայրապետը հետաքրքրվեց մարտի 4-ին Ռումինիայում պատահած տարերային ա-

ղետի՝ երկրաշարժի հետևանքով երկրում ստեղծված տխուր իրավիճակով: Շուրջ 500 ռումին եկեղեցիներ քանդված են: Միայն Բուխարեստում լուրջ վնասվածքներ են ստացել 10—15 ռումին եկեղեցիներ: Այս առթիվ Հայոց Հայրապետը ցանկություն հայտնեց Մայր Աթոռի միջոցներով վերանորոգելու ս. Պանթելիմոն եկեղեցին, որը գտնվում է այն թաղամասում, ուր անցել է Վեհափառ Հայրապետի մանկությունը: Այս նպատակի համար Վեհափառ Հայրապետը հանձն առավ, հանուն Մայր Աթոռ ս. Էջմիածնի, հոգալ տասնհինգ հազար դոլլարի սահմաններում, վերոհիշյալ եկեղեցու վերանորոգման ծախսերը: Հայոց Հայրապետի սույն եղբայրական վերաբերմունքը ջերմորեն ընդունվեց տեղապահ սրբազանի կողմից:

ՀՐԱԺԵՇՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապրիլի 1-ին, ուրբաթ օրը, Վեհափառ Հայրապետը, տ. Կոմիտաս և տ. Տիրայր սրբազանների ուղեկցությամբ, այցելեց Բուխարեստի հայոց գերեզմանատուն, ուր երկրաշարժի հետևանքով վնասվել էին 29 մարմարակերտ հուշարձաններ, և հոգվոց արտասանեց երկրաշարժի հետևանքով զոհվածների, ինչպես նաև նախապես այնտեղ թաղված բոլոր հայ ննջեցյալների հոգիների խաղաղության համար:

Ապրիլի 2-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետը հայոց առաջնորդարանում ընդունեց բազում ազգայինների այցելությունները և հանգամանորեն հետաքրքրվեց նրանց եկեղեցական, ազգային, մշակութային կյանքով:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ

Ապրիլի 3-ին, կիրակի. Ծաղկազարդ:

Առավոտյան ժամը 10-ին առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվեց Բուխարեստի թեմական և թաղական խորհուրդների միացյալ նիստ, որին ներկա եղավ նաև առաջնորդարանի պաշտոնեությունը՝ ընդամենը շուրջ 20 հոգի:

Այս առթիվ Հայոց Հայրապետը բոլոր ներկաներին բաշխեց Իր օրհնությունները և հետաքրքրվեց երկրաշարժի հետևանքով հայ համայնքի ծոցում ստեղծված տխուր իրավիճակով: Հայկական եկեղեցիներից լրջորեն վնասվել են Ցաշիի ս. Աստվածածինը՝ կառուցված 1395 թվականին, Ֆոկշանի ս. Աստվածածինը՝ կառուցված 1780 թ.: Վնասվել են նույնպես Կոստանցայի, Գալացի, Պիտեշտի, Թրկու-Օգնայի և Բրաիլայի հայկական եկեղեցիները: Որոշ վնասների է ենթարկվել նաև Բուխարեստի հայոց առաջնորդարանի շենքը: Երկրաշարժին զոհ են գնացել 7—8 հայեր, այդ թվում նաև թեմական խորհրդի փոխնախագահ, իրավաբան Պերճ Կարապետյանը:

Առաջնորդ սրբազանը, թեմական և թաղական խորհուրդները և ողջ հայկական համայնքը եռանդուն ճիգեր են ի գործ դնում՝ երկրաշարժից տուժած եկեղեցիների, շենքերի վերանորոգման գործը անհապաղ ավարտելու համար:

Այնուհետև նիստում խոսք առավ Հայոց Հայրապետը և շեշտեց, որ Իր համար հոգեկան մխիթարություն եղավ ներկա լինել Տ. Ժուստինիան Պատրիարքի թաղման արարողությանը և միաժամանակ տեսակցել հայ համայնքի պաշտոնական անձնավորությունների հետ: Հայոց Հայրապետը, խորապես զգացված երկրաշարժի հետևանքով տուժած հայ եկեղեցիների վիճակով և առաջնորդարանի ու թեմական խորհրդի ծանր բեռը թեթևացնելու մտահոգությամբ, Մայր Աթոռի համեստ եկամուտներից հինգ հազար

դոլլարի նվիրատվություն կատարեց վերանորոգման ծախսերի համար: Նորին Սրբության հայրական այս հոգածությունը ջերմորեն ողջունվեց երախտագիտական զգացմունքներով:

Ժամը 11-ին Բուխարեստի հայոց ս. Հրեշտակապետաց եկեղեցում, Ծաղկազարդի տոնի առթիվ, պատարագեց տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը: Տաճարը լիքն էր հայ և ռումին հավատացյալներով:

Ս. պատարագին ներկա էր նաև ռումին օրթոդոքս եկեղեցու սինոդի կողմից Օլդենիայի տ. Թեոկտիստ միտրոպոլիտը:

Հավարտ ս. պատարագի Հայոց Հայրապետի հանդիսադրությամբ կատարվեց հոգեհանգստյան պաշտոն հանգուցյալ Տ. Ժուստինիան Պատրիարքի հիշատակին:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետը նախ խոսեց հայերեն և ապա ռումին լեզվով՝ ծանրանալով հանգուցյալ Պատրիարքի 29-ամյա արդյունավետ հոգևոր, եկեղեցական, հայրենասիրական, միջեկեղեցական ու խաղաղասիրական բեղուն գործունեության վրա ու ներկայացնելով նրան որպես մեր ժամանակի եկեղեցական մեծ անձնավորություն:

Ապա խոսք առավ տ. Թեոկտիստ միտրոպոլիտը՝ հանուն ռումին եկեղեցու սինոդի, երախտագիտություն հայտնելու Հայոց Հայրապետին, որ սուրբ Էջմիածնից եկել էր Բուխարեստ՝ եղբայրաբար բաժանելու ռումին օրթոդոքս եկեղեցու, ռումին հավատացյալ ժողովրդի կրած մեծ վիշտը:

Արարողության ավարտին հուզիչ ճառով հանդես եկավ նաև առաջնորդ տ. Տիրայր եպիսկոպոսը, որը ռումինահայ թեմի հոգևորականության, ազգային իշխանության և հավատացյալ ժողովրդի անունից ցավակցություն հայտնեց ռումին Սրբազան Պատրիարքի մահվան առիթով, Պատրիարք, որ միշտ եղավ անկեղծ բարեկամը Հայոց Հայրապետի, հայ եկեղեցու և Ռումինիայում հովանավորողը հայ համայնքի և հայ եկեղեցիների: Իր խոսքի ավարտին տ. Տիրայր սրբազանը որդիական երախտագիտություն հայտնեց նաև Հայոց Հայրապետին՝ Նրա օրհնաբեր ներկայության համար, և խնդրեց օրհնել հայ և ռումին եկեղեցիների ու հավատացյալների անխախտ բարեկամությունն ու եղբայրությունը:

ՎԵՐԱԴԱՐՁ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ապրիլի 4-ին, կիրակի օրը, Վեհափառ Հայրապետը վերադարձավ Մոսկվա: Առավոտյան Նորին Սրբությունը տ. Թեոկտիստ միտրոպոլիտի առաջնորդությամբ այցելեց Բուխարեստի մոտ մայրապետների Ցիգանեշտ պատմական վանք, ուր գտավ սրտաբաց ընդունելություն: Բարեպաշտ կույսերը Հայոց Հայրապետին և Նրան ընկերակցող անձանց պատվեցին ջերմ հյուրասիրությամբ: Հայոց Հայրապետն օրհնեց անձնվեր քույրերի այս միաբանությունը, դրվատեց նրանց քրիստոսանվեր կյանքն ու ծառայությունը և հրաժեշտ տվեց լավագույն տպավորություններով:

Երեկոյան Բուխարեստի օդանավակայանում Հայոց Հայրապետին ճանապարհեցին տ. Տիրայր սրբազանը, թեմական և թաղական խորհուրդների անդամները և հավատացյալների բազմությունը:

Հայոց Հայրապետին, հանուն ռումին եկեղեցու սինոդի, բարի ճանապարհ մաղթեցին տ. Թեոկտիստ միտրոպոլիտը և այլ պաշտոնական անձինք:

Ապրիլի 5-ին, երեքշաբթի օրը, ժամը 15-ին, Մոսկվայից Մայր Աթոռ ժամանեց Վեհափառ Հայրապետը:

ԵՐԵՎԱՆ. ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ. ԴԵՊԻ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆ



ԱՊՐԻԼԻ 24-Ը ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 24-ին, կիրակի.—Յիշատակ բիւրաւոր նահատակացն մերոց, որք կատարեցան յընթացս համաշխարհային առաջին պատերազմի.

Ապրիլյան եղեռնի 62-րդ տարելիցն է այսօր:

Առավոտյան ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Երուսաղեմի հայոց պատրիարք տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի, Արևմըտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանի, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանի, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանի, Մայր Աթոռի վարդապետ ու սարկավագ միաբանների և Մայր Աթոռի պաշտոնեության ներկայացուցիչների, Արարատյան թեմի թեմական խորհրդի ատենապետի և անդամների ընկերակցությամբ, այցելում է Ծիծեռնակաբերդի Հայ նահատակաց հուշարձան:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Հանուն Հայոց Հայրապետի և Երուսաղեմի հայոց պատրիարքի, Նահատակաց հուշարձանին դրվում է խաչանշան մեծ ծաղկեպսակ, հետևյալ հիշատակությամբ. **«Ամենայն Հայոց Վազգեն Ա կաթողիկոսի և Երուսաղեմի հայոց տ. Եղիշե պատրիարքի կողմից»:**

Այնուհետև Վեհափառ Հայրապետը, պատրիարք սրբազանը և Նրանց ուղեկցողները բոլորվում են հավերժական կրակի շուրջ և կատարում հոգեհանգստյան պաշտոն: Հայոց Հայրապետը «Հոգւոց» է արտասանում բոլոր հայ նահատակների և ի մասնավորի՝ 1915 թվականի զոհվածների հիշատակին:

Ապա բոլորը մեկ բոպե լռությամբ հարգում են նահատակաց անմահ հիշատակը:

Վեհափառ Հայրապետը, պատրիարք սրբազանը և ուղեկցողները վերադառնում են Մայր Աթոռ, որտեղ ազգային մեծ սուգի առիթով Մայր տաճարում ս. պատարագ էր մատուցում տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյանը:

Հակառակ վատ և անձրևոտ եղանակին, Մայր տաճարը լեփ-լեցուն է հավատավոր բազմությամբ:

Հավարտ ս. պատարագի պատարագիչ սրբազանը քարոզում է եղեռնի մասին՝ ծանրանալով 20-րդ դարի առաջին ցեղասպանության վայրագ ծրագրի իրագործ-

մամբ հայ ժողովրդի կրած անմոռանալի նահատակության պատմության վրա:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ Մայր տաճարի ատյանում նատարվում է հոգեհանգստյան արարողություն, որին ներկա են լինում ուխտավորաբար մայր հայրենիքում գտնվող ափյուռքահայեր:

Ժամը 15-ին վանական սեղանատանը տրվում է հոգեճաշ:

Ժամը 17-ին հոգևոր ճեմարանի ուսանողությունն ուղևորվում է Ծիծեռնակաբերդ՝ բազմահազար ժողովրդի հետ խոնարհվելու և աղոթելու հայ նահատակաց հուշարձանի առջև:

1915 թվականի ապրիլին Արևմտյան Հայաստանում եղեռնի զոհ դարձավ շուրջ երկու միլիոն հայություն: Մեր նահատակները գերեզման իսկ չունեցան, բայց նրանք սրբությամբ ապրում են հայ ժողովրդի սրտում: Մեր այսօրվա վերածնված մայր հայրենիքը փառավոր ու հավերժական հուշարձանն է Ապրիլյան եղեռնի մեր նահատակների:

ԵՐԵՎԱՆ. ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ. ՀՈԳԵՀԱՆԳՍՏՑԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԿԱՏԱՐՈՒՄ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՆՄԱՐ ԿՐԱԿԻ ՄՈՏ



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 3-ին, կիրակի.—Ծաղկազարդ.

Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Երեկոյան ժամը 17-ին Մայր տաճարում ավանդական հանդիսությամբ կատարվում է «Դոնբացէք»-ի արարողությունը՝ հանդիսադրությամբ տ. Հուսիկ եպիսկոպոսի:

* * *

Ապրիլի 7-ին, Աւագ հինգշաբթի.—Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և Աւետումն ս. Աստուածածնի.

Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը: Ս. պատարագի ընթացքում, «Հայր մեր»-ից առաջ, լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոսն ընթերցում է Բարսեղ Կեսարացի Հայրապետի ճառը՝ նվիրված ս. Հաղորդության խորհրդի հաստատմանը:

Երեկոյան ժամը 17-ին Մայր տաճարում, Ավագ սեղանի առաջ, կատարվում է «Ոտընլուայ»-ի արարողությունը՝ Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ:

Նույն օրը, ժամը 20-ին, «Ի գիշերին հընկումն է»: Հսկման արտառուչ արարողությանը նախագահում է Վեհափառ Հայրապետը և ապա քարոզում՝ օրվա խորհրդի հոգևոր և փրկագործական նշանակության մասին:

* * *

Ապրիլի 8-ին, Ավագ ուրբաթ.—Յիշատակ չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի.

Առավոտյան ժամը 10-ին Մայր տաճարում կատարվում է «Կարգ խաչելութեան»:

Երեկոյան ժամը 17-ին Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ Մայր տաճարում կատարվում է «Կարգ թաղման» և ապա Մայր տաճարի շուրջ՝ «Թափօրն թաղմանն»:

*
* *

Ապրիլի 9-ին, Աւագ շաբաթ.—Ծրագալոյց Ջատկի.

Մայր տաճարում կատարվում է առավոտյան ժամերգություն: Երեկոյան՝ «Ծրագալոյց»-ի ժամերգությունն ու ս. պատարագը: Հոգևոր ճեմարանի սաներն ընթերցում են Դանիելի գիրքը և «Երից մանկանց» օրհներգությունը:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է «Նախատօնակ Ջատկի»:

Այնուհետև եկեղեցական թափորն ուղղվում է, երգով ու շարականով, վանական սեղանատուն, որտեղ օրհնվում է Մայր Աթոռի աղն ու հացը: Ապա միաբանությունը և ուսանողությունը ճաշակում են նավակատյաց սեղանը:

*
* *

Ապրիլի 11-ին, երկուշաբթի.—Մեռելոց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը: Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգիստ՝ «վասն հանգչեցելոց»:

*
* *

Ապրիլի 17-ին, կիրակի.—Կրկնազատիկ (Նոր կիրակէ). Յիշատակ բիւրաւոր նահատակացն մերոց համաշխարհային առաջին և երկրորդ պատերազմաց: Կատարի հոգեհանգիստ համայն եկեղեցիս Հայաստանեայց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Այդ զի տեսերդ զիս հաւատացեր, երանի՞ որոց ոչ իցէ տեսեալ՝ և հաւատասցեն» (Հովհ. Ի 29) բնաբանով:

*
* *

Ապրիլի 21-ին, հինգշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Մայր տաճար է այցելում Հայաստանում գտնվող Մեծ Բրիտանիայի պաղամենտական պատվիրակությունը՝ գլխավորությամբ համայնքների պալատի լեյբորիստական կուսակցության խմբի նախագահ Քլեդվին Հյուզի:

Հյուրերը հետաքրքրությամբ դիտում են Մայր տաճարը, ապա լինում են Մայր տաճարին առընթեր եկեղեցական արվեստի նմուշների բաժնում:

Այնուհետև Ամենայն Հայոց Հայրապետը Վեհարանում ընդունում է պատվիրակության անդամներին: Վեհափառ Հայրապետի և պատվիրակության անդամների միջև տեղի է ունենում բարեկամական ջերմ զրույց:

*
* *

Ապրիլի 27-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական բացառիկ հերթական հավաքույթ, որին ներկա են լինում ներքին թեմերի թեմակալ առաջնորդները, ս. Գեղարդ վանքի վանահայրը, թեմերում պաշտոնավարող հոգևոր հովիվները, Մայր Աթոռի եպիսկոպոս, վարդապետ և սարկավագ միաբանները՝ շուրջ 20 հոգի:

Ժամը 17-ին թեմակալ առաջնորդները, հոգևոր հովիվները և Մայր Աթոռի միաբանները ներկա են լինում երեկոյան ժամերգությանը, որի ավարտին լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը ողջունում և բարի գալուստ է մաղթում բոլորին՝ նշելով միաբանական սույն բացառիկ հավաքույթի նպատակը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի նախագահությամբ Վեհարանում գումարվում է միաբանական սույն հավաքույթը: Վեհափառ Հայրապետը ջերմ սիրով ողջունում է միաբանների ներկայությունը Վեհարանում և ապա հանգամանորեն խոսում մեր օրերում հայ հոգևորականության ու հատկապես Մայր Աթոռի միաբանության՝ հայ ժողովրդի կյանքում կատարելիք քրիստոնեական քարոզչության, հայրենասիրական և խաղաղասիրական գործունեության մասին: Հայոց Հայրապետն Իր խոսքի մեջ նշում է նաև հայ հոգևորականությանը հետաքրքրող մի շարք այժմեական հարցերի մասին, հարցեր, որոնք այսօր դրված են մեր եկեղեցու առջև:

Վեհափառ Հայրապետի սույն զրույցը լսվում է մեծ գոհունակությամբ և հոգեկան բավականությամբ:

Հավաքույթի ավարտին, հանուն բոլոր ներկաների, տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը որդիական երախտագիտության և շնորհակալության խոսք է ուղղում Հայոց Հայրապետին՝ շեշտելով նման հավաքույթների անհրաժեշտությունը և օգտակարությունը Մայր Աթոռի միաբանության համար:

Այնուհետև բոլորը աջահամբույրով ստանում են Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

*
* *

Նույն օրը հոգևոր ճեմարանի դահլիճում ուսանողության համար զեկուցումով հանդես եկավ ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ռումինիայի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ տ. Զավեն ծ. վրդ. Պարոնյանը՝ «Հայ եկեղեցու պատարագի կարևորությունը ժամանակակից էկումենիկ տեսակետից» թեմայով:

*
* *

Ապրիլի 28-ին, հինգշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողությունը, տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանի գլխավորությամբ և ուղեկցությամբ դասախոսների, ուխտագնացության է մեկնում Արտաշատի շրջանի Խորվիրապ սրբավայր, որի պատմությունը սերտորեն կապված է ս. Գրիգոր Լուսավորչի գործունեության հետ:

Այնուհետև ուսանողությունն այցելում է Դվինի ավերակներ, որտեղ մեծ հետաքրքրքրությամբ դիտում են հնությունների թանգարանը:

Երեկոյան ուսանողությունն անմոռաց տպավորություններով վերադառնում է Մայր Աթոռ:





ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ԱՊՐԻԼԻ 24. ԵՐԵՎԱՆ

Գրեցի այս ամսաթիվը թղթի վրա բոլոր մյուս ամսաթվերի պես, որոնցով սահա մոտ երկու ամիս է սկսում եմ ուղեգրությանս յուրաքանչյուր օրը: Եվ սակայն ցավի ու խռովքի այնպիսի մի հորձանք բարձրացավ ներսս, որ երկար ժամանակ չեմ կարողանում ետ մղել, ամբարտակել այդ հորդումը՝ որպեսզի հնար լինի կարգավորել այն ու տող առ տող բաց թողնել թղթի վրա:

Ինչո՞ւ է այդպես: Ինչո՞ւ աշխարհում բոլորը օրացույցներից այս ապրիլ 24-ն էլ մյուս օրերի պես պոկում, մի կողմ են նետում, իսկ մենք... ինչո՞ւ գարնանային ծիծաղկուն այս ամիսը, այս ապրելու ապրիլը դարձավ մեզ համար մահվան տարեվերջ և մահով մնաց մեր տարեգրքերում... Պատասխան տալ այս «ինչուներին»՝ ասել է գրել հայոց ողջ պատմությունը ու գրելուց հետո նորից հարցնել՝ «ինչո՞ւ մեզ վիճակվեց ունենալ այսպիսի պատմություն»...

Ես ուզում եմ ամբարտակից թղթին թողնել հենց այս պահի ապրումս, սակայն այնտեղից համառորեն դուրս են հորդում տարիներ առաջ գրած իմ չափածոն, և ես զգում եմ, որ նորովի ասել այն, ինչ ալեկոծել է ինձ կյանքիս վերջին երկու տասնամյակում ու գրել տվել «Մտորումներ ճանապարհի կեսին» պոեմը,—չեմ կարող.

Օ՜, հայ արյունին խառնված մորմոք,
Այդ ե՞րբ զարթնեցիր իմ երակներում,
Մագաղաթների փոշու հե՞տ արդյոք
Եկար, փուվեցիր դու իմ աչքերում:
Պոկված վիրավոր մի ավերակի՞ց
Դու՝ խեղված խոյակ՝ սրտիս ծանրացար,
Թե՞ քամվելով մեր արցունքոտ երգից՝
Կաթ-կաթ ծորացիր, մեջս ծով դարձար:
Իմ խորքերի մեջ կայի՞ր երևի,
Դվինում թաղված մի սափորի պես,
Որ տարեցտարի նոր պեղումներից
Զգվեցիր, ելար դու արևերես...

Այո՛, գոյություն ունի սերունդների հավաքական հիշողություն, որն անցնում է դարից դար և արյունից արյուն: Եվ ինչքան բազմադարյան է լինում ժողովուրդը, այնքան այդ դարերը ավելի շատ են կուտիմարզում նրա հիշողությունը, որովհետև դրանով, այդ հիշողությամբ է, որ երկար ու տարընթաց դարերը կարող են չպոկպկվել, այլ կապվել-ագուցվել իրարու, կարող են մի դարի թողածը պահել ու հասցնել մյուսին: Անշուշտ դեր ունի նաև ժողովրդի, տվյալ դեպքում՝ հայ ժողովրդի, լինելիության կերպը, նրա տեսլականությունը, հոգեկան սլացումներին հանձնվելու կարողությունը, հավատարմությունը անցյալին, հիշատակներին, գաղափարներին: Այսպե՛ս է, որ ահա հազար հինգ հարյուր և ավելի տարիներ սերունդների մեջ ապրել է Վարդանանց պատերազմի և նրա նահատակների հիշատակը, որ Նարեկացու բարդ և անբռնելի մատյանը դարերով պաշտվել է, սրբագործվել, փոխանցվել դարից դար ու դրվել հիվանդի բարձի տակ, որպես ապաքինման հույս ու թալիսման: Այսպես է, որ Նոր-Նախիջևանցի ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանցի մատիտը հանկարծ գծեց-կանգնեցրեց հազար տարիներ տապալված ու փոշիներում թաղված սյուներն ու խոյակները, որ Զանգեզուրի գյուղում գլուխը կախ իր վար ու ցանքն անող Ռաֆայելի որդու, գաղթ ու կոտորածի երես չտեսած Պարույր Սևակի սրտում հաք տվեցին ու

ժայթքեցին, «Անլռելի զանգատան» էջերի՛ն լցվեցին՝ տարիներ առաջ գաղթ ու կոտորածի դաշտերից բարձրացած, ժամանակի ու տարածության մեջ անէացած, բայց սերունդների հիշողության մեջ ինչ-որ տեղ խտացած, հուր ու խառնարան դարձած, մահապարսուր աղաղակները... Եվ այդ նույն, այդ նույն խառնարանի՛ց են դուրս ժայթքում ամեն տարի ապրիլյան այս սեծախորհուրդ առավոտին երիտասարդ, դեռ նոր զարթնող հոգիների մեջ բռնկող անիմանալի, հաստության խալտանքի պես քաղցր ու տանջող խռովքները, ինքնաճանաչման պահ առ պահ պայծառացող լույսը.

Ամիսն ապրիլ էր,
Եվ օրը—լցված:
Հրապարակներում՝ ձույլ բազմությունն էր ծովացած-փոված,
Փողոցների մեջ՝ մարդկային գետեր,
Որ չգիտեին ո՛ւր էին գնում,
Բայց—գնո՜ւմ էին...
Ասես դարերի խորքերից եկող ալիք մի անտես,
Դարերի խորքում վաղ տեղադրված ոգեղեն մի սարք՝
Գերհզոր ռադիո-ճառագայթներով
Իր ծիրի մե՜ջ էր պահում այդ երթը,
Վարում էր նրա ընթացքն ու հոգին,
Տանում դեպի ե՛տ՝ դեպի Դեր-Էլ-Զոր, Անի, Ավարայր
Ու տանում դեպի գալիք դարե՛րը...

Եվ—գնո՜ւմ էին...
Սասնա Դավթի պես խակ պատանիներ,
Դավթի նման ծո՜ւռ,
Բայց մեն մի օրում այրացա՛ծ արդեն,
Աչքերում՝ կսկիծ, բողոք ու հարցում՝
Դեռ գնո՜ւմ էին.

— Հորողբե՜ր Օհան,
Ասա՛, հե՞ր էիր պահել ինձանից
Տեղերանքն իմ հոր, իմ հոր գերեզման,
Իր ձին—Զալալին, իր Թուր—Կայծակին,
Հորողբե՛ր Օհան, հորողբե՜ր Օհան...
— Ասեք, ո՜ւր էիք պահել մեզանից
Եղելությունը «եղեռն» անունով.
Աշխարհ սպանող այս դավի մասին,
Մեր սուրբ զոհերի,
Մեր սուրբ հողերի,
Մեր ցավի մասին
Այսքան տարիներ ո՜ւր էիք լռել...

Եվ—գնում էին՝
Ինչ-որ վեհացած,
Ինչ-որ վերացած
Ամեն մեկն իր մեջ
Ինչ-որ հո՜ւն բացած,
Ինքնաճանաչման գյուտից նորացած,
Հորդ՝ գնո՜ւմ էին:

Գնում էին, որ
Տե՛ր կանգնեն իրենց որբ մեռելներին, որբ շիրիմներին,
Զոքեն-համբուրե՜ն Մարութա վանքի մասունքները որբ,
Ետ տանեն հողը և հանեն հողից Թուրը-Կայծակին,
Ետ տանեն քարը և հանեն գոմից Քուռկիկ-Զալալուն,
Ասեն՝ զորո՛ւ ենք թամբելու մեր հոր վիշապաքաղ ձին,
Ասեն, որ՝ տե՛րն ենք, տե՛րն ենք Սասնա տան
Ու Սասնա դատին...
Ամիսն ապրիլ էր, Եվ օրը-արդար...

Ծիծեռնակաբերդի հուշարձանը ծնվել է այս ամենի՛ց՝ ցավով ու արևով ջրդեղված ապրիլյան առավոտներից և ցավով ու արեվով ջրդեղված մեր դարերից: Սոսկ ու սովորական մի հուշարձան չէ դա: Քարեղեն պոռթկում է բազմակն մի կուտակումի՝ սուգի, ցասման ընդվզումի: Ընդհանրական մի ներաշխարհի նյութակերտ պատկերն է դա, ուր ամեն գիծ ու կորի մեջ առկա է մի հուժկու ինքնատիրապետում, Հռիփսիմեի վանքի զսպություն, ուժ, ապրելու կամք...

Միշտ այս նույն արտահայտությունը կա նրանց դեմքին, ովքեր գալիս, դեպի այդ համակառույցն են բարձրանում Ծիծեռնակաբերդի լանջին ձգվող նորաբաց ճանապարհով: Գալիս են տղամարդիկ, կանայք, երիտասարդներ, իրենց թոռնիկների ձեռքից բռնած պապիկներ, որդիներին հենված, դողդոջուն մայրեր, միայնակ, կորամեջք ծերունիներ՝ հազիվ ոտ փոխելով, հաճախ կանգնելով, շունչ առնելով, և սակայն քայլում են, բարձրանում...

Ի՜նչ եղերական պատմություններ են նրանց հետ բարձրանում այդ ճանապարհով, ի՜նչ անուններ են հարություն առնում գաղթ ու կոտորածի մոխիրներից, ի՜նչ կանչեր կան նրանց բոլորի ունկերում, ու քայլ առ քայլ ի՜նչ սրբազան խոսքեր են հասունանում նրանց արյան տրոփներում:

Համալսարանի ուսանողները պսակ են տանում: Աղջիկների, երեխաների ձեռքին ծաղիկներ կան, շարքերի վրա՝ Վարուժանի, Սիամանթոյի, Զոհրապի դիմանկարները: Հաշվիչ մեքենաների ինստիտուտը տանում է Կոմիտասի մետաղակուռ պատկերը: Սփյուռքահայ ուսանողները քայլում են ավելի կենտրոնացած, ինչ-որ լարված, հանդիսավոր և «Սուրբ-սուրբ» են երգում:

Ես Սփյուռքի կոմիտեի աշխատակիցների հետ եմ: Տանում ենք խոշոր մի ծաղկեպսակ: Պսակը մի կողմից պահել են հայաստանցիները, մյուս կողմից՝ սփյուռքի հյուրերը: Մոտենում ենք, պսակը դնում հուշարձանի սալաքարին:

Խոնարհված տասներկու սալաքարերը շրջան կազմելով՝ իրենք էլ քարե պսակ են դարձել հավերժական կրակի շուրջը: Քարե պսակ, քար կտրած վիշտ, քարեքար զարնվել, քարե կարկուտ, քարսիրտ աշխարհ, քար լռություն—մեր հողի ու մեր հնօրյա ճակատագրի պես քարքարոտ է նաև մեր լեզո՛ւն...

Մեջտեղում վառվում է կրակը. հսկա մոմ է ասես, որ վառել է ամբողջ մի ժողովուրդ՝ իր մեռյալների հիշատակին: Նրա բոցից հալվում-ծխում է խնկաբույր մի երաժշտություն:

Դանդաղ իջնում ենք սանդուղքներից, շարժվում դեպի կրակը, մի պահ կանգնում ենք, խոնարհվում նրա առաջ ու դեմի սանդուղքներով բարձրանում, ելնում ենք դուրս:

Դրսում լույս է, գարնան արևի նուրբ, վերքը շոյող լույս, և այդ լույսի մեջ՝ Երևանն է: Նա՛ էլ է շրջան կազմել հավերժական կրակի շուրջը, սակայն այնպիսի շրջան, որ մեր հնամյա կոթողներին քանդակված՝ հավերժության խորհրդանշանն է հիշեցնում, կենաց խորհրդանշանը...

Երևա՛նը, շարունակությունը եղեռնի հուշարձանի, նրա լրացո՛ւմը, նրա ավա՜ղտը...

(«Խճանկար հոգու և քարտեզի գույներից», Երևան, 1976, էջ 221—225)



ՄԱՐԿ ՌԻԺԿՈՎ

Հայ մարդու հոգում, հիշողության մեջ,
Այս վերքը բերդ է դարձել անառիկ.
Ոչ մի ուրիշ թիվ, ուրիշ վերք ու վեհ
Չի կարող ջնջել թիվը՝ տասնևհինգ...
Իսկ ես, ես՝ ծնված երեսունհինգին,
Ես մի ռուս մանչուկ՝ հեռվում մեծացած,
Սոսկ հիմա հասան իմ ջահել ունկին
Այս բոթ բառերը՝ «եղեռն, կոտորած»...
Գնդակը՝ պայթած տասնևհինգ թվին,
Սոսկ հիմա խոցեց սիրտս անապակ.
Անեծ՛ք, բյուր անե՛ծք դահճին այն վայրագ,
Անեծք՝ անվանը, անեծք՝ աճյունին...
Իսկ Հայաստանը, նա ապրո՛ւմ է, կա՛.
Իսկ Հայաստանը՝ պատանու մի սիրտ.
Բիրտ ուժը արդեն անուժ է հիմա,
Սիրուց են ծնվում մանուկները միշտ:
Բայց հայի հոգում խոր գծվում է դեռ
Սուրբ Կոմիտասի խաչակիր ուղին,
Գծվում է, ձգվում սերունդների դեմ,
Որ քայլեն զգաստ, որ քայլեն ուղիղ,
Որ կյանքո՛վ հաղթեն դավին ու մահվան,
Որ երկրպագեն արարիչ լույսին...
...Հին խաչքարերը ծերերի նման
Հանդարտ պատմում են հավերժի մասին...
Իսկ եթե նորից թռչուններն այստեղ
Թևածեն ահից նենգ տարաժամին,
Ու նորից իջնի աղետ մի ահեղ
Իմ նո՞ր, նո՛ր գտած իմ Հայաստանին,—
Երդվում եմ, վկա այս հողը արդար,
Ես էլ կդառնամ զինվորը նրա,
Ու թե հարկ լինի՝ կընկնեմ իր համար
Իր տաք, վիրավոր քարերի վրա...

Սվերդլովսկ

Թարգմանություն՝ **Սիլվա Կապուտիկյանի**





ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ

Եթե հետևեմք օրերը հաշվելու հրեական սովորության, Ավագ հինգշաբթիին համար գրեթե ոչինչ պիտի գտնեմք արձանագրված Ավետարանի էջերուն մեջ, բացի Զատկական ընթրիքի **պատրաստութենեն:** Այն կարևոր արարողությունը որ կատարվեցավ հինգշաբթի երեկոյին, հիրականին կիյնա Ավագ ուրբաթի սահմանին մեջ, քանի որ արևը մար մտնելև հետո կսկսեր հաջորդ օրը ըստ հրեական սովորության: Այսուհանդերձ քանի որ մեր տոնացույցի մեջ այս օրվան դիմաց նշանակված է՝ «ՅԻՇԱՏԱԿ ԸՆԹՐԵԱՑ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ», մենք ալ այսօրվան ներքև պիտի անդրադառնանք այս երեկո պատահածներուն, որոնք երեք են թիվով. ՈՏՔՆԼՎԱ, ՎԵՐՋԻՆ ԸՆԹՐԻՔ, և ՎԵՐՋԻՆ ԿՏԱԿ:

Օրվան շարականները ամբողջությամբ Ոտնալվայի և Վերջին ընթրիքի խորհուրդի շուրջ են:

Ավետարանները ինչպես լուռ անցած էին Ավագ չորեքշաբթի առավոտյան Հիսուսի գործունեության վրայեն, նույնպես կլռեն Ավագ հինգշաբթի ցերեկի մասին: Հիշվածը լոկ նույն երեկոյին ըլլալիք պասեքի կամ Զատկական ընթրիքի պատրաստության մասին է, հետևյալ բառերով.

«Բաղարջակերաց առաջին օրը, երբ պասեքի գառնուկները կմորթվեին, աշակերտներն ըսին Հիսուսի. «Ո՞ւր կուզես որ երթանք ու պատրաստենք պասեքի ընթրիքը: Հիսուս կղրկե իր աշակերտներեն երկուքը պատվիրելով անոնց. Քաղաք գացեք. երբ կմտնեք անկե ներս, ձեզի պիտի պատահի մարդ մը, որ ուսին վրա ջուրի սափոր մը կկրե. հետևեցեք անոր, և որ տունը որ կմտնե ըսեք տանտիրոջ. Վարդապետը կըսե. ո՞ւր է այն իջևանը, ուր աշակերտներովս պասեքի ընթրիքը պիտի ընեմ. ու ան ձեզի պիտի ցուցնե կահավորված մեծ վերնատուն մը, այնտեղ ըրեք ձեր պատրաստությունները: Ու անոնք քաղաք եկան, գտան այնպես ինչպես Հիսուս ըսած էր ու այնտեղ պատրաստեցին պասեքի ընթրիքը» (Մրկ. ԺԴ 12—16):

Սերտ նմանություններ կան Հիսուսի Երուսաղեմ մուտքի և Վերջին ընթրիքի նախապատրաստական պարագաներուն միջև (Բաղդատե Մրկ. ԺԱ 1—6): Երկուքին ալ Հիսուս կփափագի հանդիսական հանգամանք մը տալ, քանի որ երկուքին մեջ ալ կարևոր և նշանակալից հայտնություններ և տնօրինություններ ունի կատարելիք: Առաջինի ընթացքին հանդիսական ձևով պիտի հայտարարվեր Իր Մեսիական հանգամանքը. իսկ երկրորդով՝ Իր փրկարար զոհի խորհուրդը, նույնքան դրամատիկ իրադրությանց մեջ:

Ուրեմն ներկայացնենք ընթրիքի ընթացքին կատարված եղյակ նշանակալից պատահարները:

ՎԵՐՋԻՆ ԸՆԹՐԻՔԸ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ
(Մրկ. ԺԴ 12—25)

Ավագ շաբաթը սկսված էր հաղթանակով մարդկային չարության կամ չկամության վրա: Պիտի վերջանար հաղթանակով՝ սարված մարդու մեծագույն թշնամիին՝ մահվան վրա: Իսկ այսօր, Ավագ հինգշաբթի գիշերը, հաղթանակ կտարվի մեղքին վրա:

Հիսուս իր վերջին ընթրիքի ընթացքին կհաստատե մեծագույնը և սրբազնագույնը եկեղեցիի խորհուրդներուն՝ պարզագույն արարմունքով մը, պարզագույն բառերով ու պարզագույն տառերով: Հաց մը կառնե սեղանեն. կօրհնե զայն. երկուքի կբաժնե և մեկ կեսը կուտա իր աջ կողմի աշակերտին, իսկ մյուս կեսը՝ ձախին, ըսելով. «Առեք, կերեք, այս է իմ մարմինս»: Բեկանված հացը առնողներ իրենց կարգին մաս մը կկտրեն անկե ու կուտեն և մնացյալը կփոխանցեն իրենց հաջորդ ընկերոջ: Ապա բաժակ մը գինի կառնե Հիսուս, կօրհնե զայն ևս և գոհություն կմատուցանե Աստուծո ու կըսե, խոսքը Առաքելոց ուղղելով. «Խմեցեք ասկե, որովհետև ասիկա Նոր Ուխտի իմ արյունս է, որ կթափվի շատերու մեղքերուն համար»: Ու կուտա բաժակը իր քովի աշակերտին, որ ումպ մը առնելե հետո անկե, կանցնե զայն իր քովի ընկերոջը. և այսպես բաժակը ամենքի ձեռքին մեջ իր շրջանը ընելե հետո սպառած կվերադառնա իր առաջվան տեղը:

Հակառակ այս պարզության, սակայն, մեր եկեղեցին զայն կկոչե «Խորհուրդ խորին, անհաս, անսկիզբն»: Եվ շատ իրավամբ: Թերևս ոչ մեկ ծեսի կամ լեզվին մեջ այնքան հարմարապես որակված է այս խորհուրդը, որքան մեր պատարագի առաջին երգի առաջին այս տողին մեջ: Արդարև տարակույս չի վերցներ անոր «խորին» և «անհաս»—անհասանելի, անհասկնալի—խորհուրդ մը ըլլալը. բայց ինչո՞ւ ըլլա նաև «անսկիզբն», քանի որ սկիզբ առավ Քրիստոսե Ավագ հինգշաբթի գիշերը: Հոս է արդեն հիշված շարականին ինքնատպությունը և հայտնութենական ներշնչումը: Հաղորդություն կնշանակե բանի մը միասնաբար մասնակցիլ, ինչ որ հասարակաց կապ մը կստեղծե երկուստեք: Օրինակ նույն հացին կամ խրախճանքին մասնակցիլ, նույն ցավով տառապիլ, նույն գաղափարով ոգևորվիլ: Այս իմաստով հավիտենապես «հաղորդություն» կա ս. Երրորդության երեք անձերուն մեջ. և հետևաբար Աստվածության պես «անսկիզբ» է այս խորհուրդը: Հորը, Որդվույն և ս. Հոգիին, այսպես ըսենք, Իրարու հետ ունեցած հարաբերությունը լավագույնս կբացատրվի ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ բառով. Հաղորդ են Ամենասուրբ Երրորդության Երեք Անձերը, մեկ և նույն կյանքին, մեկ և նույն սիրո, մեկ և նույն իմաստության և անհուն զորության: Որով, Որդին, որ մեզմե մեկը եղավ ու մեզի հետ խոսեցավ երկրի վրա, կրնար ըսել. «Ես եւ Հայր իմ մի եմք». կամ՝ «որ ինչ իմ է՝ ամենայն քո է, Հայր, եւ որ ինչ քո է՝ այն իմ է» (Հովհ. ԺԷ 3): Կամ «Հայր յիս է, և ես ի Հայր» (Հովհ. ԺԷ 21): Կամ ակնարկելով ս. Հոգիին կըսե. «Ցիմմէ անտի առնուցու» (Հովհ. ԺԶ 14): Այսինքն՝ իմինես պիտի առնե:

Ուրեմն հաղորդության խորհուրդի հաստատումով Հիսուսի նպատակն էր Աստվածության մեջ գոյություն ունեցող ներդաշնակ հարաբերությունը և նույն սիրո ու նույն կյանքի հաղորդակցությունը փոխադրել նաև երկրի բնակիչներուն մեջ. նախ վերահաստատելով բնականոն հարաբերությունը Աստուծո ու մարդկության միջև և ապա՝ մարդու և իր ընկեր արարածին միջև:

Թեև «Խորին» և «անհաս» խորհուրդ մըն է այս, բայց պահ մը փորձենք թափանցել անոր խորության մեջ, և ճիգ ընենք հասկնալու զայն, իր զանազան երեսներուն, այսինքն իմաստներուն մեջ: Բազմակողմանի և բազմերես խորհուրդ մը ըլլալուն, անոր տված է զանազան անուններ, որոնք կշեշտեն անոր բազմերանգ իմաստներեն մեկ կամ մյուս երեսը: Ուրեմն անոր մասին ընդհանուր գաղափար մը կազմելու լավագույն ձևն է ներկայացնել այս անուններեն յուրաքանչյուրը: Այդ անուններեն ամեն մեկը լրիվ ներկայացնելու համար էջեր հարկավոր են: Մենք զմեզ պիտի սահմանափակենք կարելի կարճության մեջ:

1.—ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԸՆԹՐԻՔ.—Այս անունը առնված է նույնինքն այն ճաշեն, որուն ընթացքին հաստատվեցավ Հաղորդության խորհուրդը: Առհասարակ ծես չունեցող բողոքականներ կգործածեն զայն խուսափելու համար անոր «Խորհրդական» հանգամանքեն, և կատարած ըլլալու համար զայն լոկ իբրև հիշատակը Հիսուսի փրկագործ մահվան՝ խաչին վրա: Այսուհանդերձ զուրկ չէ այս անվանակոչությունը յուրահատուկ իմաստե, քանի որ կբացատրե Հաղորդության խորհուրդին արտաքին և ընկերային կարևոր մեկ երեսը:

Ճաշի սեղաններ սովորաբար կսարքվին ընտանեկան ու բարեկամական շրջանակներու մեջ. ուստի ճաշերը նշան են սիրալիր և բարեկամական հարաբերությանց: Մեր լեզվի «ընկեր» բառը իր ծագումը կպարտի կերակուրի սեղանին: Ընկերը, կամ անոր ավելի ուղիղ և սկզբնական ձևը, «ընդկեր»-ը այն անձն է որուն հետ մենք սեղան կնստինք, կամ ժողովրդային բացատրությամբ, որուն հետ աղուհաց կուտենք: Ուրեմն՝ «ընկերություն» բառին սկզբնական իմաստը սեղանակցություն է: Որով՝ մարդկային ընկերության կորիզը կազմված է ընտանեկան կամ բարեկամական սեղաններուն շուրջ: Հետևաբար մարդկային ընկերության մեջ էլ պետք է տիրապետե այն ոգին և վերաբերմունքը որ կը-

հայտնաբերվի սեղաններու շուրջ բազմած «ընկեր»-ներու միջև:

Հիսուս իր հիմնական տնօրինությունը սեղանի մը շուրջ հաստատելով ուզեց շեշտել այն իրողությունը, թե իր հետևորդները մեկ և նույն հոգևոր ընտանիքի անդամները պիտի ըլլային, կապված իրարու այն սերտությամբ ու սրտակցությամբ, որով ընտանիքի անդամներ և հարազատ բարեկամները կապված կըլլան իրարու:

Ամեն մեկ ս. պատարագ Տերունական ընթրիք մըն է, որ կատարվի մեր եկեղեցիներու ս. Սեղաններու վրա: Արդարև ամեն մեկ պատարագի արարողության ընթացքին նիրականանա այն ինչ որ ս. պատարագի կեդրոնական շարականներեն մեկուն մեջ կերգենք:

«Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ.
Որ Էնն Աստուած աստ բազմեցաւ.
Խաղաղութեան ձայն հնչեցաւ.
Սուրբ ողջունի հրաման տուաւ»:

Հիսուս է Սեղան սարքողը, հրավիրողը, հյուրընկալը և տանտերը: Մենք հրավիրյալներ ու հյուրեր ենք: Ս. պատարագի այս իմաստը գրեթե մոռացության տրված է: Առնվազն կիրակիե կիրակի սարքվող Տերունական ընթրիքի հրավերը քանի՞ հոգի կընդունի. կամ մասնակցողներս կնկատե՞նք զմեզ արդարև հյուրերը և հրավիրյալները Հիսուսին: Հուսկ ապա՝ ունի՞նք այն սրտակից վերաբերմունքը որ սեղանակիցներ ունին իրարու հանդեպ: Եթե անդրադարձ ակնարկ մը նետենք մեր առօրյա կյանքին վրա, ու եթե քննական աչք մը պտտցնենք ս. պատարագի մեր ներկա լինելու կերպին վրա, վերոհիշյալ հարցումներուն պատասխանը միշտ էլ դրական պիտի չըլլա:

Զնապես քրիստոնյա համայնք մը մնալով հանդերձ, շատոնց դադրած էինք ամենօրյա պաշտամունքի ներկա լինելե. իսկ ներկայիս ալ գրեթե կդադրինք կիրակնօրյա զանգակներուն հրավերներուն պատասխանելե: Հաշիվ ըրա՞ծ եք, թե սովորական կիրակիներուն մեր համայնքին հարյուրին քանի՞ տոկոսը ներկա կըլլա Տերունական ընթրիքին: Հազիվ մեկը կամ երկուքը: Ու եթե պատահաբար տարին քանի մը անգամ ավելի մեծ թիվով ներկա կըլլանք՝ այդ արդյունք է տարբեր կանչերուն քան Տերունական կոչին: Ներկա ենք եկեղեցի, որովհետև կամ Զատիկ-Ծնունդ է. կամ որովհետև այդ օր «հանդիսավոր» պատարագ կա. և կամ մեր մեկ ծանոթին համար հոգեհանգիստ պիտի կատարվի:

Բացահայտ է, թե այս նահանջին մեջ շատ կարևոր դեր ունին մեր ժամանակները և փոխված մտայնությունները. սակայն նույնքան կարևոր դեր ունի՝ մեր մոռցած ըլլալը, թե ս. Սեղանին վրա մատուցվող ս. պատարագը միաժամանակ հոգևոր ճաշ մըն է, որուն կհրավիրվինք Քրիստոսի հետևորդներս հավաքաբար: Ստույգ է, ոմանք կուգան դրդված ս. սովորութենե, որ սակայն գիտակցական վիճակի չէ վերածված դեռ: Եկեղեցվո մեջ ունեցած ատոնց «միամիտ սրտի և կատարեալ հաւատով» ընթացքը որքան ալ հարգանք ու խանդաղատանք ստեղծեն մեր մեջ անոնց նկատմամբ, սակայն չի կրնար վարակիչ դառնալ, քանի որ անընդօրինակելի են: Ուրիշներ կուգան առհասարակ առհավական բնազդե մը առաջնորդված. երբեք չեն անդրադարձած թե ինչո՞ւ կուգան: Իրենց բոլոր շարժումները մեքենական են. եկեղեցի մտնելը, մոմ վառելը, խաչ հանելը, տեղ մը գրավելը, շուրջը բոլորը դիտելը, ամենքը «ռոպոթային» են: Այսպիսի անձ մը կրնա եկեղեցիեն ելլել որևէ ատեն, մինչև իսկ «Առեք կերեք» ըսված ատենը: Ուրիշ խոսքով թեև ներկա է, բայց հայտնապես հրավիրյալ մը չէ: Եթե մեկը, որ մտադիր է եկեղեցիին ավելի գիտակից անդամը դառնալու և եկեղեցիին ետևը կեցած քննական աչքով մը հետևի այսպիսի մարդոց շարժումներուն, երբեք պիտի չուզեր անոնց ընկերակցությամբ Տերունական ընթրիքի ներկա ըլլալ:

Ավելին կա սակայն: Ոմանք ալ եկեղեցի կուգան Ի ՊԱՇՏՈՆԵ. այսինքն դեր ունին կատարելիք այնտեղ. ոմանք Տերունական Սեղանը պիտի պատրաստեն և պիտի սպասարկեն անոր. ուրիշ մը տեսանելի կերպով Քրիստոսի տեղը պիտի գրավե պատարագի ընթացքին. Անոր խոսքերը պիտի կրկնե: Ատոնք են որ ամենեն վճռական դերը կկատարեն Տերունական ընթրիքին ուրիշները հրավիրելու կամ հեռացնելու մեջ. ներկա ըլլալիքներուն թիվը ավելցնելու կամ պակսեցնելուն մեջ: Սակայն դերակատարներուն ընթացքը, դժբախտաբար, երբեմն այնքան տնավարի, այնքան անոգի ու այնքան անպատկառ է, որ կարծես թե իրենց տան սովորական սեղանն ըլլար սպասարկվածը քան՝ Տերունական ընթրիք: Երգեցողությունները երբեմն ավելի բմայք և քաշքշուք են, քան թե սիրով, հարգանքով ու պատկառանքով լեցուն մասնակցություն: Հոգևոր հակում ունեցողներ պարզապես համ պիտի չկրնան առնել այս կերպ մասնակցութենե:

Այո, ընտիր է մատուցված ընթրիքը. անոթի են արդարև հրավիրյալները, սակայն սխալ է հաճախ մատուցման եղանակը: Այս իսկ պատճառով սնունդը և սեղանին հրավիրյալները զիրար չեն գտներ երբեմն, ու

եկեղեցի եկողները, սեղանին մասնակցողները, անոթի կելլեն հաճախ անկե:

2.—ՊԱՏԱՐԱԳ.—Մեր մեջ ամենեն շատ գործածական բառն է Վերջին ընթրիքին Հիսուսի կողմե հաստատված խորհուրդին համար: Այսպես է նաև արևելյան բոլոր մյուս եկեղեցիներու մեջ, որոնց հետ մեր եկեղեցին դեռ ձևապես հաղորդակցության մեջ է: Անոնք կկոչեն զայն «Գուրբան» որ մեր պատարագ բառին հետ նույն իմաստն ունի: Պատարագ կնշանակե նվեր, ընծա, և ավելի կհիշեցնե Հին Կտակարանի մեջ Աստուծո ընծայված արգադիր նվերները և ողջակեզները, որոնք բոլորն էլ կկոչվեն պատարագ:

Պատարագը միշտ երկու կողմ ունի. տվող և առնող, մատուցող և ընդունող: Երբ կողմերեն մին պակսի, պատարագը կդադրի գոյություն ունենալե:

Այս խորհուրդը պատարագ է այն իմաստով, որ անոր մեջ Քրիստոս հանուն և ի դիմաց մեզի, մեղավորներուս, ինքզինք Աստուծո կընծայե, ի քավություն և ի թողություն մեր մեղքերուն, ինչպես գործնականապես ըրած էր Գողգոթայի վրա: Հին Կտակարանի «քավության նոխազ»-ին կամ գառնուկին պես, որ իբրև ողջակեզ Աստուծո կընծայվեր, նվիրողներու մեղքերուն համար:

Եթե **ընթրիքի** գաղափարը զմեզ կհամակե հոգևոր սիրո-սեղանի մը մասնակցելու երջանիկ տրամադրությամբ, **պատարագի** գիտակից ըմբռնումը սակայն մեզի պիտի համակեր ահավոր զգաստությամբ և ծանր լրջությամբ: Պահ մը երևակայել որ ս. Սեղանին բերված սկիհը, իր մեջի հացով և գինիով, կներկայացնե զգալապես և խորհրդական հանգամանքով, նույնինքն մեր Փրկիչը, որ եկած է պատարագվելու մեր մեղքերու քավության և թողության համար: Հաճախ կմոռնանք, հատկապես կմոռնան ս. պատարագը մատուցանողները և սպասարկողները, այս սահմոկեցուցիչ իրականությունը: Հաճախ մոռացության կտրվի մեր ս. պատարագի արարողության հիմնական հայտարարություններեն մեկը. «ՊԱՏԱՐԱԳ ՔՐԻՍՏՈՍ ՄԱՏՉԻ ԱՆԱՐԱՏ ԳԱՌԸՆ ԱՍՏՈՒԾՈՅ». այսինքն. «Քրիստոս, Աստուծո անարատ գառնուկը, իբրև պատարագ Աստուծո կընծայվի»: Ասոր փոխարեն կշեշտենք վերևի խոսքին կցորդը. «Ողորմութիւն և խաղաղութիւն ու ՊԱՏԱՐԱԳ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ»: Եվ արդարև այսօրվան մեր պատարագները ավելի հոգևոր երգերու ընծա մըն են Աստուծո մատուցված, քան Քրիստոսի պատարագումը «ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց մերոց»:

Յ.—ԳՈՀՈՒԹՅՈՒՆ.—Հունարեն բառն է, «Եվխարիստիա» որ կնշանակե շնորհակալություն: Ս. խորհուրդի այս անունը առնված է՝ Հիսուսի կողմե հացի և գինիի վրա կատարված Աստուծո գոհություն մատուցանելու գործողութենեն, ինչպես կհիշվի Ավետարանի մեջ. «գոհացավ»: Այս բառը առավելաբար գործածական է օրթոդոքս ու կաթոլիկ եկեղեցիներու կողմե, ինչպես նաև՝ պատարագ և ծես ունեցող բողոքականներու մեջ, որոնք հունարեն բառը իրենց լեզվին տառադարձելով պահած են գրեթե նույնությամբ:

Այս անունն ալ թեև մեր մեջ գործածական չէ եղած, բայց իրականին մեջ մեր ս. պատարագը գրեթե ծայրե ի ծայր գոհության և օրհնության պատարագ մըն է: Կսկսինք զայն «Օրհնեալ Թագաւորութիւնն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ» գոհաբանական մաղթանքով և կշարունակենք սարկավագի ազդարարությամբ. «Եւ գոհացարուք զՏեառնէ բոլորով սրտիւ»: Ս. պատարագի մեջտեղերը ունինք ծանոթ գոհաբանական երգը. «Գոհութիւն և փառաբանութիւն մատուցանեմք քեզ Տէր Աստուած մեր, վասն սուրբ և անմահ պատարագիս որ ի վերայ սրբոյ Սեղանոյս»:

Ինչպես նաև՝ սա գեղեցիկ երգը.

«Յամենայնի օրհնեալ ես Տէր.
Օրհնեմք զՔեզ, գովեմք զՔեզ,
ԳՈՀԱՆԱՄՔ ԶՔԷՆ...»:

Ս. պատարագը իր ավարտին կբերվի երբ կերգենք «ԳՈՀԱՆԱՄՔ զՔԷՆ Տէր, որ կերակրեցեր զմեզ յանմահական սեղանոյ Քոյ. բաշխելով զմարմինդ և զարիւնդ ի փրկութիւն աշխարհի և կեանք անձանց մերոց»:

Ճաշի սեղաններուն նպատակն է մարդիկը կշտացնել և գոհունակ տրամադրությամբ լեցնել. այնպես որ, սեղանին մասնակցողին ինքնաբերաբար շրթունքին գան գոհունակության սա խոսքերը, նախ առ Աստված ուղղյալ. «Գոհություն Աստուծո». կամ «Փառք Աստուծո»: Իսկ եթե խոսքը սեղան պատրաստողին կամ տվողին է, կարենա ինքնաբերաբար ու անկեղծ սրտով ըսել. «Շնորհակալություն»: Ուրեմն լավ սեղանը գոհունակություն տվող սեղանն է:

Կրնա ըլլալ որ մեր սեղանները առատ և սնուցիչ կերակուրներ պարունակեն. սակայն երբ կմատուցին անմաքուր ամաններով, աղտոտ սփոցներու վրա, կամ երբ մեջը աղ չկա կամ պղպեղը շատ նետված է, այն ատեն այդ սեղանը վայելելու մեր ախորժակը կկտրի բոլորովին: Նման երևույթներ կրնան պատահիլ նաև մեր «անմահական սեղաններուն» վրա: Անփույթ, թափթփված ձևով կամ անպատկառ ոգվով

կատարված ս. պատարագը անոնց կնմանի:

Ս. պատարագը իսկապես Գոհության խորհուրդի վերածելու համար, որչափ ալ սեծագույն դերը պիտի ունենա մեր հավատքը և հոգեկան կեդրոնացումը, նույնքան կարևոր դեր ունի եկեղեցիի ընդհանուր բարոյական և ընկերային մթնոլորտը: Անհրաժեշտ են լրջություն և պատկառանք՝ թե՛ խորհուրդը կատարողներուն և թե՛ անոր մասնակցողներու կողմե, ստեղծելու համար այս մաքուր մթնոլորտը: Ս. պատարագով մենք Աստուծո գոհություն պիտի մատուցանենք որ Իր Միածին Որդին տված է մեզի, մեր մեղքերու քավության և թողության համար, արժանի ըրած է մեզ անարժաններս, «հաղորդել Մարմնոյ և Արեան Քրիստոսի»:

4.—Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ.— Ամենեն ընդհանրական բառն է, գործածված գրեթե բոլոր եկեղեցիներեն: Այս անունը կուգա Խորհուրդին Հոգիեն, այսինքն՝ այն նպատակեն, որուն համար հաստատված է ան, որ է՝ հաղորդակցության մեջ դնել արարածը Արարչին հետ, մեղավորը՝ Քավչարարին, փրկվածը՝ Փրկչին հետ: Այս խորհուրդը կենսական կապ է քրիստոնյայի և Քրիստոսի միջև:

Քրիստոսի միացողներ, Անոր անձին մեջ միացած կըլլան նաև իրարու, և կկազմեն Քրիստոսի մարմինը: Եղբայրության նոր շրջանակ մը կստեղծվի, որ մեկ կապ միայն կնանչնա, հավատքի կապը, Քրիստոսի հետ ունեցած կապը: Այլևս իրենց նշանակությունը կկորսնցնեն և գրեթե կանտեսվեն բոլոր այն կապերը, որոնք մարդիկը զանազան խումբերու բաժնելու կծառայեն. այսինքն արյունի, ցեղի, գույնի, լեզվի, ազգի, տոհմի և ընտանիքի: Հաղորդությունը կըխորտակե բոլոր խտրության պատերը. ի Քրիստոս սնը և ճերմակը կեղբայրանան, աղքատը և հարուստը կհավասարին. ազատոր և ծառան Աստուծո որդի կըլլան:

Ս. հաղորդությունն է, որ իրավամբ կըստեղծե այն համամարդկային հավասարությունը և եղբայրությունը, զոր մարդիկ կերազեն ունենալ այնքան ուժգին բաղձանքով և զոր ստեղծելու համար հանախ այնքան արյուն կթափեն, այնքան անիրավություններ կգործեն, ի վերջո հանգելու համար նոր խտրությանց, նոր ատելությանց և նոր անհավասարությանց: Հաղորդությամբ եղբայրացածները ոչ միայն սերտորեն կապված են իրարու, այլ նաև իրենց կապերը չեն խզեր իրենցմե դուրս մնացած մարդոց հետ, իբրև թեկնածուներ այս նոր միության, որոնց համար ևս տրամադրելի է Քրիստոսի քավչարար պատարագը, որովհետև եկեղեցիի գերագույն նպատակն է զանոնք ալ քրիստոնեական գավիթեն ներս առնել:

Եթե զանազան եկեղեցիներու միջև տեսանելի և զգալի հաղորդությունը չի կիրարկվիր, սա ինքնին պարզագույն փաստն է, որ ասոնցմե մին կամ մյուսը կամ երկուքն ալ, ի հաղորդության չեն Քրիստոսի հետ: Այլապես, այսինքն եթե երկու կողմերն ալ ի հաղորդության ըլլային կյանքի և սիրո Ակին հետ, անկարելի էր որ ի հաղորդության չըլլային իրարու հետ: Եկեղեցի ըսվածը այս իսկ է. ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՍՐԲՈՑ. այսինքն՝ հաղորդություն Քրիստոսի հետ, հաղորդություն իրարու հետ: Առանց այս հաղորդության չկա իրական եկեղեցի, թե իսկ գոյություն ունենան այդ անունով հավաքականություններ: Իրական քրիստոնյան այն չէ, որ մկրտված է և եկեղեցիի հավատամքը գոց գիտե. այլ՝ այն որ կրնա ըսել կապրիմ ես, սակայն ոչ թե ես, այլ՝ Քրիստոս է որ կապրի իմ մեջս (Գաղտ. Բ 20): Արդարև իրարու հակասական երևույթներ են նույն քրիստոնեական շրջանակին մեջ գոյությունը հաղորդության և ատելության: Հակասական է հաղորդական անդամ ըլլալ եկեղեցիին և մյուս կողմեն քեն և ոխ սնուցանել եկեղեցիի մյուս անդամներուն հանդեպ կամ շահագործել զանոնք: Հակասություն է հայտարարել ու հավատալ որ եկեղեցին մեկ գլուխ ունի, և մյուս կողմեն մեկե ավելի գլուխներու գոյության սկզբունքն ընդունիլ. գլուխներ որոնք իրարու հետ ոչ մեկ կապ ունին, և որոնք իրարմե ոչխարներ կգողանան կամ իրարու վիճակները կհափշտակեն:

Ստույգ է, սերտորեն իրարու կապված շրջանակներ չեն պակսիր մեր մեջ. բայց ասոնք առհասարակ զուտ աշխարհիկ ու ընկերային շրջանակներ են. այսինքն կա՛մ կուսակցական, կա՛մ գաղափարական, կա՛մ գեղարվեստական շրջանակներ: Կան բարեկամական բազմաթիվ բջիջներ, որոնք սակայն սեղանակից են իրարու ավելի կերուխումի, խաղի և «խումար»-ի համար, քան եղբայրսիրության նպատակներով: Ո՞ւր պետք է փնտրել այն ազնիվ ընկերային կցորդությունը, որ հիմնական հատկանիշը պիտի կազմեր քրիստոնյա հավաքականության: Ո՞ւր կրնանք գտնել Տիրոջ սեղանով կապված սրտակցությունները: Քանի՞ ընտանիքներ կան, որոնք երբ իրարու տուներ հավաքվին, ոչ միայն բաժնեկից կդառնան իրարու անշահախնդիր սիրույն, այլ նաև կրնան խոսակցիլ ս. Գրքեն, եկեղեցիեն, և կյանքի առավել ազնվացման՝ և առողջ նկարագրի կերտման հետ կապ ունեցող հարցերու մասին: Ո՞ւր պետք է գտնենք

փաղանգը մարդոց, որոնք կարենան ըսել, ու կյանքով հաստատել, թե ի հաղորդության են Տիեզերքի Արարչին հետ:

Եթե կպակսի հավատացողներու և նույն եկեղեցի հաճախողներու միջև սիրո շաղկապը, դա ինքնին նշան է որ հաղորդություն չկա իրենց և Աստուծո միջև: Եթե Աստուծո սիրույն և կյանքին հաղորդ եղած ըլլայինք, ինքնաբերաբար հաղորդ պիտի ըլլայինք իրարու սիրույն: Այս երկուքը իրարմե կախյալ են և զիրար կենթադրեն: Ունենալ սեր հանդեպ Աստուծո և չունենալ մարդոց նկատմամբ սեր՝ անկարելիություն մըն է: «Եթե մեկը ըսե, որ Աստված կսիրեմ, և իր եղբայրը կատե, սուտ է: Մեկը որ չի սիրեր իր նմանը, զոր կտեսնե, ի՞նչպես կրնա սիրել զԱստված, զոր չի տեսներ» (Ա Հովհ. Ե 20):

(Ավագ շաբաթ, Պեյրութ, 1974, էջ 96—97, 104—112):





ՍՈՒՐԲ ԿՅՈՒՐԵՂ ՀԱՅՐԱՊԵՏ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑԻ*
(375—444)

Ս. Կյուրեղ Հայրապետի գործերի հայերեն թարգմանությունները

Մեր եկեղեցական-թարգմանական գրականության մեջ չափազանց ընդարձակ և մեծ թիվ են կազմում Կյուրեղ Ալեքսանդրացու գործերից և ուղղակի հունարեն բնագրից կատարված թարգմանությունները, որոնցից ոմանց սկզբնագրերը դեռ չեն հայտնաբերված հունական եկեղեցական մատենագրության մեջ:

Ս. Կյուրեղ Հայրապետը ևս թողել է բազմաժանր ու մեծարժեք մատենագրական ժառանգություն: Նրա «երկասիրությանց մեծագույն մասն մը պահված է նաև ի մեր մատենագրության, որոնցմե շատերը թարգմանություն են ութերորդ դարու, ի ձեռն Ստեփանոսի Սյունեցվո. և ոմանք ավելի հնագույն ժամանակաց կվերաբերին, և հավանականաբար հինգերորդին: Հույն բնագրին ու մեր թարգմանությանց մեջ տեղ-տեղ կարևոր տարբերություններ կտեսնվին, ավելի ընդարձակագույն գտնելով զբնագիրըն մանավանդ Հնգամատյանին, Հեսվա, Դատավորաց և Թագավորությանց մեկնաբանությանց մեջ: Թերևս բուն հեղինակին ձեռքով և կամ հայոց համառոտված օրինակաց վրա եղած է մեր թարգմանությունը»[48]:

«Ս. Կյուրեղի մի քանի գրվածքները կըրկին անգամ են հայերեն թարգմանվել, և երկրորդ թարգմանությունը անկախ չի եղել հավանականորեն, այլ՝ նախկինը սրբագրելով»[49]:

Ինչպես ս. Աթանաս Հայրապետի, այնպես էլ ս. Կյուրեղ Ալեքսանդրացու գործերի հայերեն թարգմանության մասին դժվար է հստակորեն ասել, թե ե՞րբ և ո՞ր թարգմանիչ վարդապետների կողմից են թարգմանվել հայերենի:

Ստույգ պատմական տեղեկություններ ունենք միայն ս. Կյուրեղի «Պարապմանց գիրք»-ի հայերեն թարգմանության մասին, Ը դարում, Ստեփանոս Սյունեցու ձեռքով:

Մատենագրական, ձեռագիր Ցուցակների և պատմական այլ աղբյուրների վկայությամբ մեր թարգմանիչ վարդապետները Ե և ապա Ը դարերում հայերենի են վերածել Կյուրեղ Ալեքսանդրացու հետևյալ աշխատությունները.

1. **Սրբոյն Կիւրղի եպիսկոպոսապետին Աղեքսանդրացւոյ ԱՐԱՐԱԾՈՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ, Եւից, Ղևտացւոց, Թուոց և Երկրորդումն օրինաց, Հնգամատեանի գրքերի մեկնություն:**
2. **Ի Յեսու որդւոյ Նաւեայ Կիւրղի:**
3. **Նորին Կիւրղի ի դատաւորս:**
4. **Նորին Կիւրղի ի թագաւորութիւնսն:**
5. **Մեծին Կիւրղի Աղեքսանդրացւոյ Մեկնութիւն սուրբ Աւետարանին որ ըստ Ղուկայ:**

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1977 թ. № Գ-ից:

[48] Մատենադարան, Հայկական թարգմանությանց նախնյաց, դար Դ—ԺԳ, Վենետիկ, 1889, էջ 504:

[49] Նույնը հատատոյ, էջ LII:

6. Երանելոյն Կիւրղի Աղեքսանդրացւոյ Հայրապետին ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՌԱԿԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ըստ Ղուկայ:

7. Երանելոյն Կիւրղի Աղեքսանդրու Հայրապետի Ի ՄԵԿՆՈՒԹԵՆԷ ԵՍԱԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ:

8. Սրբոյն Կիւրղի եպիսկոպոսապետի Աղեքսանդրու Ի ՄԵԿՆՈՒԹԵՆԷ ՅՈՎԵԼԵԱՅ:

9. Ի մեկնութենէ մարգարէին ԶԱՔԱՐԻԱՅ:

10. Սրբոյն Կիւրղի եպիսկոպոսապետի Աղեքսանդրու ՅԵԲՐԱՅԵՑԻՈՑ ԹՂԹՈՅՆ ՄԵԿՆՈՒԹԵՆԷ:

11. Սրբոյն Կիւրղի եպիսկոպոսապետի Աղեքսանդրու Հայրապետին ՊԱՐԱՊՄՈՒՆՔ, յաղագս մարդանալոյ Միածնին:

12. Հաւատարիմ քահանայապետի Քրիստոսի, մտերիմ ծառայի Աստուծոյ՝ սրբոյդ Կիւրղի Աղեքսանդրացւոյ ի Տիրերեայ քահանայէ և յեղբարց:

13. Տեառն սրբոյն Կիւրղի Աղեքսանդրացւոյ առ բարեպաշտ թագաւորն Թէոդոսիոս, յաղագս տաւնի սրբոյ Զատկի:

14. Երանելոյն տեառն Կիւրղի եպիսկոպոսապետի Աղեքսանդրացւոյ առ բարեպաշտ թագուհին Եւդոքսիա, կին Թէոդոսի բարեպաշտ թագաւորի:

15. Յաղագս հնազանդութեան Քրիստոսի:

16. Յաղագս սրբելոյն Քրիստոսի և նորին քահանայութեան իմացելոյ:

17. Յաղագս ասելոյն փառս առնով Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

18. Յաղագս ասելոյն յառնել Քրիստոսի ի մեռելոց փառաւք Հօր:

19. Յամաւթ հակառակորդացն ասացեալ. «Այժմ անձն իմ խռովեալ է»:

20. Նորին տեառն Կիւրղի եպիսկոպոսապետի առ բարեպաշտ թագուհի կուսանսն Քրիստոսի քոյր ուղղափառ թագաւորին Թէոդոսի Արկադեայ և Մարինեայ:

21. Սրբոյն Կիւրղի Աղեքսանդրի եպիսկոպոսի առ բարեպաշտ թագաւորն Թէոդէոս, յաղագս ուղղափառ հաւատոյ, որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս:

22. Նորին Կիւրղի Աղեքսանդրու առ բարեպաշտ թագաւորին Թէոդոսիոս, յեռ դառնալոյն ի բնակութիւնս իւրեանց եկեալքն ի սուրբ ժողովոյն Եփեսոսի:

23. Երանելոյն Կիւրղի եպիսկոպոսի Աղեքսանդրի թէ մի է Քրիստոս, զոր խընդրեաց Երէմիաս, ընդդէմ ամբարշտին Նեստորի:

24. Կիւրղի եպիսկոպոսապետի Աղեքսանդրի առ Սուկեսոս եպիսկ. Դիոմիդիրեայ քաղաքի Իսուրացւոց գաւառի, թուղթ առաջին, թուղթ երկրորդ:

25. Կիւրղի եպիսկոպոսապետի Աղեքսանդրի առ Ակակիոս եպիսկ. Մաղատիանեաց (Մելիտինէ):

26. Կիւրղի եպիսկոպոսապետի Աղեքսանդրի պատասխանի թղթոյն առ Յովհաննէս եպիսկոպոս Անտիոքայ:

27. Վկայութիւնք յանդիմանութեան ամբարշտին Նեստորի:

28. Սիրելեաց և փափաքողաց Անաստասու Մարտինիանեայ Յովհաննու և այլոց ուղղափառ հարց միայնակեցաց և որոց ընդ ձեզ միայնական ճգնին վարս, հաւատով Աստուծոյ սերտացելոյ Կիւրղի եպիսկոպոսի ի Տէր խնդալ:

29. Մեկնութիւն հաւատոյն որ յընդհանրական եկեղեցիս միշտն ասի, զոր կարգեցին սուրբ հարքն ի Նիկիացւոց ժողովն:

30. Երանելոյն Կիւրղի եպիսկոպոսին Աղեքսանդրի խոսք ի սուրբ Աստուածածինն, ասացեալ ի ժողովն Եփեսոսի ընդդէմ չարափառին Նեստորի:

31. Նորին ի սուրբ Աստուածածինն և ի միշտ կոյսն Մարիամ ընդդէմ Նեստորի:

32. Սրբոյն Կիւրղի եպիսկոպոսի առ Նեստոր զի տայր նմա տեղի ապաշխարութեան, յառաջ քան զմերժիլն նորա յեպիսկոպոսութենէն չև ևս էր լիեալ սուրբ Սինոդոս, որ կամօքն Աստուծոյ ժողովեցան յԵփեսոս, թուղթ Կիւրղի առ Նեստոր[50]:

33. Նորին Կիւրղի եպիսկոպոսի Աղեքսանդրացւոց առ Նեստոր հայհոյիչ:

34. Երանելոյն տեառն սրբոյն Կիւրղի եպիսկոպոսապետի Աղեքսանդրացւոյ, գիրք որոյ անուն Գանձ է:

35. Աղօթք սրբոյն Կիւրղի Աղեքսանդրացւոյ ասացեալ է վասն զոչման և սրտասաց[51]:

Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրերի Մատենադարանում էլ պահվում են ս. Կյուրեղ Ալեքսանդրացու մատենագրական վաստակն ամփոփող բազում ձեռագրեր[52]:

Ս. Կյուրեղ Հայրապետի հայերեն տպագիր աշխատությունները

Կյուրեղ Ալեքսանդրացու մատենագրական վաստակի հայերեն առաջին տպագրությունը նրա մեծարժեք «Գիրք Պարապմանց» աշխատության հրատարակությունն

---

[50] Այս թղթին ապա կցված են Նեստորի դեմ Կյուրեղ Հայրապետի 12 նզովքները:

[51] Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, (դար Ժ—ԺԳ), 1889, էջ 503—524:

[52] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Երևան, 1965, հատոր Ա, «Կյուրեղ Ալեքսանդրացի», էջ 1515, հատոր Բ, 1970, էջ 1342:

է, կատարված 1717 թվականին Կ. Պոլսում[53]:

Կյուրեղ Ալեքսանդրացու սույն աշխատությունը, ինչպես նաև նրա հայերենի թարգմանված այլ գործերը հայ եկեղեցու դավանաբանական պատմության համար հանդիսացել են առաջնակարգ և շատ կարևոր աղբյուրներ: Հայ դավանաբանները միշտ ս. Կյուրեղի գրվածքները օգտագործել են իրենց հակաճառությունների մեջ, ուղղափառությունը պաշտպանելիս:

Հայ եկեղեցին միշտ էլ սերտ եկեղեցական, մատենագրական հարաբերությունների մեջ է եղել Ալեքսանդրիայի Աթոռի հետ: Այս իսկ պատճառով մեր թարգմանական գրականության մեջ շատ կարևոր տեղ են գրավում և մեծ թիվ են ներկայացնում Ալեքսանդրիայի Աթոռի ուղղափառ հայրապետների, այդ թվում մանավանդ ս. Աթանասի և ս. Կյուրեղ Ալեքսանդրացու գործերի հայերեն թարգմանությունները ու տպագրությունները:

Կյուրեղ Ալեքսանդրացու «Գիրք Պարապմանց»-ը ըստ ձեռագիրների հիշատակարանների և Ստեփանոս սրբեպ. Օրբելյանի (1260?—1304) վկայության, թարգմանվել է Կ. Պոլսում 715 թվականին. «Թարգմանեցաւ Գիրքս Պարապմանց և թղթոց սրբոյն Կիւրղի եպիսկոպոսապետին Աղեքսանդրիայի, ի ստոյգ օրինակացն, ի Կոստանդինապոլսի, ի ձեռն Դաւթի հիւպատոսի և թագաւորական սեղանի կենառի և ի ձեռն Ստեփանոսի քերթողի՝ աշակերտի Մովսիսի Սիւնեաց եպիսկոպոսի»[54]:

Ըստ Օրբելյանի վկայության, Ստեփանոս Սյունեցին Կյուրեղ Ալեքսանդրացու «Գիրք Պարապմանց» և «Գանձք» աշխատությունները գտնում է Կ. Պոլսի արքայական մատենադարանում, ուղղափառ եկեղեցական հայրերի այլ երկերի հետ. «Եւ անդ գտեալ մատեան ոսկետառ սուրբ հարցն վասն ուղղափառ հաւատոյ» և ապա գնում է Հռոմ «և գտանէ անդ այլ ևս երից մատեանս» և թարգմանելով դրանք իր հետ բերում է Դվինի հայրապետանոց[55]:

«Գիրք Պարապմանց»-ը տպագրվում է 1717-ին Կ. Պոլսում, Աստվածատուր Համադանցի (1715—1725) «Քահանայապետի և Ընդհանուր Հայոց Մեծաց կաթողիկոսի» օրով և նրա հրամանով, «Տիրաշէն Աթոռոյն Էջմիածնայ» ուղարկված ընտիր մի ձեռագրի հիման վրա: Մայր Աթոռից հայոց կաթողիկոսի կողմից ուղարկված տուփի մեջ եղել են Կյուրեղ Ալեքսանդրացու «զերիս գրեանս, զԳանցուցն, զՊարապմանցն, և զԼուծումն նորին»[56]:

Աստվածատուր կաթողիկոսը Մայր Աթոռից սույն երեք ձեռագրերը ուղարկում է Կ. Պոլսի Հովհաննես Կոլոտ մեծանուն պատրիարքին (1715—1741) տպագրության համար, հետևյալ գեղեցիկ և բովանդակալից ընծայականով. **«Ես նրուատ ծառայս ի Քրիստոս, Տէր Աստուածատուր Հայոց Մեծաց կաթողիկոս, ի տիեզերանոչակ Աթոռս սուրբ Էջմիածնի, դաւանակից գոլով վասն ամենայնի առ Կիւրղոս Աստուածաբան Հայրն մեր երանելի, և առ սուրբ վարդապետն Գրիգոր Տաթևացի. կնքեալ հրաման արարի ըստամբել զսուրբ Գիրքս Գանձուց և Պարապմանց ընդ Լուծմանցս, որք առ ամենասուրբ Երրորդութիւնն և տնօրէնութիւնն Քրիստոսի Աստուածաբանէն, աստուածահաճոյ և ուղղափառ դաւանութեամբ»**[57]:

Տպագիր «Գիրք Պարապմանց»-ը, որը սովորական անվանաթերթ չունի, բացվում է «Պաղդասար դպրի» «Զայն առ Բաղձալին» ձոնով, որին հաջորդում է, հավանաբար, նույն Պաղդասար դպրի «Աստուծով հանդերձ բան առ վերծանողաց բարեմիտ» բովանդակալից և հոգեբուխ Հառաջաբանը՝ հետևյալ բառերով. «Զոր արար սուրբն Կիւրեղ այրն երանելի ընդդէմ մարդադաւան Նեստորի չարաբաստին թշուառի, յորում ցուցանի հաւատոյս, որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ ուղղափառութեանն սահմանն անսխալ»[58]:

Այնուհետև գրքի 19—490 օջերում տպագրվել են Կյուրեղ Ալեքսանդրացու հետևյալ 44 ճառերը.

Գլուխ Ա. Թէ զինչ նշանակէ Քրիստոսդ անուն.

Գլուխ Բ. Զինչ եղանակաւ պարտ է իմանալ Էմմանուէլ.

Գլուխ Գ. Զինչ է Յիսուս.

Գլուխ Դ. Ընդէ՞ր ասի մարդ՝ Բանն Աստուծոյ.

Գլուխ Ե. Ընդէ՞ր ասի ունայնացեալ Բանն Աստուած.

Գլուխ Զ. Զիա՞րդ մի է Քրիստոս.

Գլուխ Է. Զիա՞րդ մի Էմմանուէլ.

---

[53] Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցանկ, 1512—1800, Երևան, 1963, էջ 78, Կյուրեղ Ալեքսանդրացի, Գիրք պարապմանց, Կ. Պոլիս, տպ. Աստվածատուր Կ. Պոլսեցի, ԸՃ (800) էջ:

[54] Մատենադարան, նույնը, էջ 519, նաև Մեսրոպ վարդ. Գրիգորյան, Ստեփանոս Սյունեցի, Բեյրութ, 1958, էջ 30—31:

[55] Նույնը, էջ 519—520:

[56] Հիշատակարան սույն գրքի տպագրության, էջ ԷՃՂԱ—ԷՃՂԲ (791—792):

[57] Հիշատակարան տպագրության, էջ ԷՃՂԲ (792):

[58] Հառաջաբան, էջ Բ—ԺԲ:

Գլուխ Ը. Զիա՞րդ ասեմք լինել զմիութիւն.

Գլուխ Թ. Ցաղագս կայծականն որ է յարացոյց Քրիստոսի.

Գլուխ Ժ. Յերգս երգոց... ես ծաղկեալ դաշտաց՝ շուշան հովտաց.

Գլուխ ԺԱ. Զի թէն ի միաւորութիւն ճըշմարիտ եկեալ առ մարդկութիւնն, անշփոթ մնացին գոյացութիւնքն.

Գլուխ ԺԲ. Զի Աստուած գոլով Բանն, եղև մարդ.

Գլուխ ԺԳ. Զի Յիսուս Քրիստոս ասի մարդ եղեալ Բանն Աստուծոյ.

Գլուխ ԺԴ. Յարացոյցք յԱստուածաշունչ գրոց թէ եկաց մնաց յԱստուծոյ Բանն, և յետ մարդանալոյն՝ Աստուած.

Գլուխ ԺԵ. Ի նոյն խորհուրդ.

Գլուխ ԺԶ. Այլ ի նոյն խորհուրդ.

Գլուխ ԺԷ. Զի ոչ աստուածազգեստ մարդ էր Քրիստոս, և ոչ ի մարդ բնակեցաւ Բանն Աստուծոյ, այլ յաւէտ զի եղև մարմին, այսինքն կատարեալ մարդ ըստ գրոց.

Գլուխ ԺԸ. Խորհրդածութիւն վասն այսր.

Գլուխ ԺԹ. Բանք առաքելականք, որովք Աստուած անուանի Քրիստոս.

Գլուխ Ի. Այլ՝ զի Աստուած է Քրիստոս.

Գլուխ ԻԱ. Զիա՞րդ պարտ է իմանալ զԲանն մարմին եղև և բնակեցաւ ի մեզ.

Գլուխ ԻԲ. Զիա՞րդ իմացի Աստուածածին՝ կոյսն.

Գլուխ ԻԳ. Վկայութիւնք յաղագս Քրիստոսի.

Գլուխ ԻԴ. Զի Աստուած անուանի և մարդ՝ երևեալ Միածինն.

Գլուխ ԻԵ. Ցաղագս չարչարանացն Քրիստոսի. Եւ թէ՝ պիտոյ է այլև այլ ի վերայ միոյ ասել և նորին, և ոչ անջատել յերկուս.

Գլուխ ԻԶ. Առ այնոսիկ որք ասեն թէ միայն վերաբերութեամբ վայելեն Աստուծոյ մարդկօրէնքն.

Գլուխ ԻԷ. Թուղթ ի Տիբերեայ քահանայէ և յեղբարցս առ Կիւրեղ (վասն այլ և այլ խնդրոց).

Գլուխ ԻԸ. Լուծմունք սրբոյն Կիւրղի խնդրոցն Տիբերեայ.

Գլուխ ԻԹ. Թուղթ սրբոյն Կիւրղի առ բարեպաշտ թագաւորն Թէոդոսիոս, յաղագս տօնի սրբոյ Զատկին.

Գլուխ Լ. Թուղթ սրբոյն Կիւրղի առ բարեպաշտ թագուհին Եւդոկիա, կին՝ Թէոդոսի բարեպաշտ թագաւորի.

Գլուխ ԼԱ. Ցաղագս հնազանդութեան Քրիստոսի.

Գլուխ ԼԲ. Ցաղագս սրբելոյն Քրիստոսի և նորին Քահանայութեանն իմացելոյ.

Գլուխ ԼԳ. Ցաղագս ասելոյն փառս առնուլ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Գլուխ ԼԴ. Ցաղագս ասելոյն յառնել Քրիստոսի ի մեռելոց փառօք Հօր.

Գլուխ ԼԵ. Յամօթ հակառակորդացն ասացեալ.

Գլուխ ԼԶ. Թուղթ սրբոյն Կիւրղի առ միշտ կուսանսն՝ քորս ուղղափառ թագաւորին Թէոդոսի, Արկադիա և Մարինա, և վկայութիւնք սրբոց Հարցն:

Գլուխ ԼԷ. Թուղթ սրբոյն Կիւրղի, առ թագաւորն Թէոդոս, Ցաղագս ուղղափառ հաւատոյ.

Գլուխ ԼԸ. Թուղթ սրբոյն Կիւրղի, առ թագաւորն Թէոդոս, յետ դառնալոյ ի սուրբ ժողովոյն (Եփեսոսի).

Գլուխ ԼԹ. Թուղթ սրբոյն Կիւրղի, թէ՝ մի՛ է Քրիստոս զոր խնդրեաց Երեմիաս ընդդէմ Նեստորի.

Գլուխ Խ. Թուղթ (Ա.) սրբոյն Կիւրղի առ Սեկունդոս, եպիսկոպոս Դեոկերտայ քաղաքի Սուրացոց գաւառի.

Գլուխ ԽԱ. Թուղթ (Բ.) Նորին Կիւրղի առ Սեկունդոս եպիսկոպոս.

Գլուխ ԽԲ. Թուղթ սրբոյն Կիւրղի առ Սակակիոս Մելիտինոյ եպիսկոպոսի, յորժամ զեկոյց նմա թէ զիարդ գրեաց յարևելեայս.

Գլուխ ԽԳ. Թուղթ սրբոյն Կիւրղի, պատասխանի թղթոյն առ Յոհաննէս եպիսկոպոս Անտիոքու մեծի, քանզի կամէր շահել զսա, զի զՆեստորին խորհէր Յովհաննէս.

Գլուխ ԽԴ. Վկայութիւնք ի սրբոց Հարցն եպիսկոպոսաց, զոր ժողովեաց ի յոլովից ճառից սուրբն Կիւրեղ, առ ի յանդիմանութիւն անբարշտութեանն Նեստորի.

Գլուխ ԽԵ. Թուղթ սրբոյն Կիւրղի, առ Նեստոր, զի տայր նմա տեղի ապաշխարութեան, յառաջ քան զմերժիլն նորա եպիսկոպոսութենէն, զի չև ևս էր լեալ սուրբ Սիւնհոդոսն որ կամօքն Աստուծոյ ժողովեցաւ յԵփեսոս.

Գլուխ ԽԶ. Նորին Կիւրղի եպիսկոպոսի Աղեքսանդրացւոյ, առ Նեստոր հայհոյիչ, ճառ ԺԲ նզովից, և մեկնութիւն:

Այստեղ, 490-րդ էջում ավարտվում է Պարապմանց գրքի բովանդակությունը. «Կատարեցաւ Պարապմունքս Աստուծով». (էջ 490):

«Գիրք Պարապմանց»-ից հետո, 491—506 էջերում, տպագրվել է ս. Աթանասի թուղթը կորնթացիների Եպիկտետոս եպիսկոպոսին ուղղյալ «Ցաղագս ուղղափառ հաւատոյ», և որին հաջորդում է «Ցանկ սրբոյ մատենիս» և «Ցիշատակարան» Խաչատուր վարդապետի, «Գիրք Պարապմանց»-ի մեր եկեղեցու և ուղղափառության համար ունեցած պատմական մեծ նշանակության մասին, «որ յաղթակա՛նն է համայնից դիպաշունչ հերձուածողացն դասուց, մանաւանդ՝ չարահնարն Նեստորի և թիւր իմաստն Եւտիքեայ, զորս քարամբք աստուածաշունչ կապարճիւ հերքէ և ի բաց հանէ յեկեղեցւոյս

գաւթէ որպէս զգայլս ապականիչս հօտին Քրիստոսի և հաստատէ զանանջատ և զանշփոթ միաւորութիւն միոյ Որդւոյն Աստուծոյ Յիսուս Քրիստոսի, Փրկչին մերոյ»:

«Գիրք Պարապմանց»-ը գրվել է «ամենայն ընդդիմողական առարկութեանց առ ի կարկումն և ի պապանձումն երկաբնակ աղուեսաբարոյ փնտռտնաքատակ (բզեզ, միջատ) հերձուածողաց» և հանդիսացել է «ջան անշիջանելի, յաւէտ լուսատու Հայց. եկեղեցւոյ, ճշմարտախոհ, ուղղադատան մեռոյինս հաւատոյ»[59]:

Գրքի 522—523 էջերում տպագրվել են Պաղդասար դպրի երկու ոտանավոր ձոները Կյուրեղ Ալեքսանդրացուն նվիրված:

«Գիրք Պարապմանց»-ի 529—764 էջերում տպագրվել է ս. Գրիգոր Տաթևացու «Լուծմունք ի Պարապմունս սրբոյն Կիւրղի» ընդարձակ և հմտալից մեկնությունը:

Տաթևացին նախ բացատրում է, թե Կյուրեղ Ալեքսանդրացու սույն աշխատությունն ինչո՞ւ է կոչվում «Գիրք Պարապմանց». «Նախ քան զամենայն գիտելի է զիա՞րդ է կոչի Գիրք Պարապման, վասնզի իւրաքանչիւր հերձուածողաց ի տնօրէնութիւնն Քրիստոսի՝ ամենայն բանիցն երանելի սուրբն Կիւրեղ ի մատենիս՝ լի և անթերի ի պատասխանիս եղև **պարապեալ**, վասն այնորիկ ասի Գիրք Պարապմանց» (էջ 529):

Այնուհետև սույն հատորի 529—764 էջերում տպագրվել է ս. Կյուրեղ Հայրապետի «Պարապմանց գրքի» 44 ճառերի վրա գրված ս. Գրիգոր Տաթևացու՝ «աշակերտի Յոհաննու Որոտնեցւոյ քաջ հոետորի» «Լուծմունք»-ը, հոյակապ մի մեկնություն, աստվածաբանական - քրիստոնեաբանական, մեկնողական, եկեղեցագիտական խոր գիտելիքներով և ուղղափառ վերլուծություններով հագեցած «ոչ ամենևին ընդ անկոխն ընթացեալ ուղի, այլ սակաւ ինչ հաւաքեալ ի քրտանց առաջնոց Հարցն և իր ինչ ի լուսաւոր բանից Լուսաւորչին մերոյ և զբովանդակքն իսկ յառատաձեռն շնորհաց»:

Տաթևացին «Գիրք Պարապմանց»-ի «Լուծմունք»-ը գրել է «ի պէտս բեմբասացութեան և ի կարգս գրուցատրութեան» և «միայն զուղղափառ տեսութիւնն» ներկայացնելու մտահոգությամբ, «բազմաշխատ ամօք ընծայեցի զսա եկեղեցւոյս Հայաստանեայց»:

«Ցիշատակարան տպեցման սրբոյ մատենիս»-ում կարդում ենք, որ «քրիստոնեական, լուսակատոյց, երկնահանդէս Աթոռոյն Էջմիածնի, արքի և պանծալի Վեհապետին և սրբազան Քահանայապետին Տեառն Աստուածատրոյ ընդհանուր Հայոց Մեծաց կաթողիկոսի» հրամանով է տպագրվել «Գիրք Պարապմանց»-ը:

Հայ եկեղեցում ս. Աթանասից հետո միայն Կյուրեղ Ալեքսանդրացու գրվածքներն են կանոնական հեղինակություն ստացել:

Կյուրեղ Ալեքսանդրացու «Գիրք Պարապմանց»-ն ու «Գանձք» գրքերը շատ հարգի են եղել մեզանում, հաճախ արտագրվել են, ուսուցման և լուծմանց առարկա են դարձել[61]:

Մայր Աթոռի միաբան Կարապետ եպիսկոպոսի (Տեր-Մկրտչյան) «Կնիք հաւատոյ» ժողովածուի հրատարակության առթիվ իր գրած «Ներածություն»-ում նշում է, որ այդ ժողովածուում, «ս. Կյուրեղ Ալեքսանդրացու երկերից քաղված վկայությունները ամենից ընդարձակ տեղն են գրավում մեր ժողովածուի մեջ»[62]:

Սույն ժողովածուում կան Կյուրեղ Ալեքսանդրացու բազում գործերից վկայություններ և ամբողջական աշխատություններ. «Ի սուրբ Երրորդութիւնն» (էջ 51), «Ի մեկնութենէ յեբրայեցոց թղթոյն» (էջ 156—167), «Ի մատենէն որ առ թագուհին» (էջ 170—177), Ղուկասու, Հովհաննու Ավետարաններից, Առաքելական և Ընդհանրական թղթերից հատված-մեկնություններ (էջ 177—205), «Ի Բանէն որ յաղագս ներմարդութեանն» (էջ 205—210), «Ի շրջանական թղթոյն, որ զՆեստորէ» (էջ 210—211), «Մեկնութիւն հաւատոյ, որ ՅԺԸ (318) Հայրապետացն» (էջ 211—229), «Երկոտասան նզովք» Նեստորի դեմ, «Նզովք և մեկնութիւն» (էջ 229—241), «Ի գանձէն» (էջ 279—280), «Ի մատենէն որ առ թագուհին» (էջ 356), «Յեբրայեցոց գլխոյն» (էջ 364—366):

Կյուրեղ Ալեքսանդրացու մի այլ ընդարձակ աշխատություն «առ Նեստոր զի տայր նմա տեղի ապաշխարութեան յառաջ քան զմերժիլն նորա, զի չև ևս էր լեալ սուրբ Սիւնհոդոսն որ կամաւբն Աստուծոյ ժողովեցան յԵփեսոս, թուղթ Կիւրղի առ Նեստոր» տպագրվել է «Գիրք թղթոց»-ում[63]:

«Կանոնք Կիւրղի Աղեքսանդրացւոյ» (գլուխք Ե) տպագրվել է «Կանոնագիրք հայոց»-ում (հատոր Բ, Երևան, 1971, աշ-

---

[59] Ցիշատակարան սրբոյ մատենիս, Խաչատուր վարդապետ, էջ 515—516:

[60] Նույնը, «Ցիշատակարան լուծմանցս», էջ 764—765:

[61] Կնիք հաւատոյ, էջ LII:

[62] Նույնը:

[63] Գիրք թղթոց, Մատենագիտութիւն նախնեաց, Թիֆլիս, 1901, էջ 369—406:

խատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, էջ 59—61, և «Ծանոթագրություններ», էջ 327, նաև «Հայոց եկեղեցու իրավունք», Ա գիրք, Շուշի, 1903, էջ 253):

Մեր եկեղեցին տարին երկու անգամ տոնում է հիշատակը ս. Կյուրեղ Ալեքսանդրացու: Առաջինը՝ հունվար ամսվա մեջ՝ ս. Աթանաս Հայրապետի հետ[64], իսկ երկրորդը՝ հոկտեմբերի մեջ՝ «Սրբոց երկոտասան վարդապետաց» տոնի առիթով[65]:

Ս. Կյուրեղը եղել և մնում է Ալեքսանդրիայի Աթոռի և ընդհանուր քրիստոնեական եկեղեցու մեծահանճար և ամենից մեծ հեղինակություն վայելող հայրապետներից մեկը, մանավանդ «Եփեսոսի ժողովից հետո ոչ մի նոր ժողով և դավանական որոշում չընդունող մեր եկեղեցվո համար»[66]:

Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

[64] Օրացույց, ս. Էջմիածին, 1977, էջ 33:
[65] Նույնը, էջ 132:

[66] Կնիք հաւատոյ, Կարապետ եպս. (Տեր-Մկրտչյան), էջ LII:



ՍԻՈՆԻ...

Գրիգոր Փիրկիրեան



* Սույն շարականի մշակման և դաշնավորման հեղինակը Նյու Յորքի հայոց ս. Վարդան Մայր տաճարի երգչախմբի ղեկավարն է:


mp
Ճու-----ան-----ջ գոհ-----ա ան-----ան գիր. ան---- թէ գիտ-----ան
mp
Ճու-----ան-----ջ գոհ-----ա ան-----ան գիր. ան---- թէ գիտ-----ան
Ճու-----ան-----ջ գոհ-----ա ան-----ան գիր. ան---- թէ գիտ-----ան
Ճու-----ան-----ջ գոհ-----ա ան-----ան գիր. ան---- թէ գիտ-----ան
fn յա-----ռու-----ցեալ յաղ-----թեալ-----ս Տա-----հու
fn յա-----ռու-----ցեալ-----ն յաղ-----թեալ-----ս Տա-----հու
fn յա-----ռու-----ցեալ-----ն յաղ-----թեալ-----ս Տա-----հու
fn յա-----ռու-----ցեալ-----ն յաղ-----թեալ-----ս Տա-----հու


p
f
mp.
mp.
f


f
ա՜, եր-զեա՛ եր-զ հո՛-ր յա՛-ր-ու՛-ր կե՛-ցու՛-ն
f
կա՛-ր-դո՛ւ-ք, եր-զեա՛ եր-զ հո՛-ր յա՛-ր-ու՛-ր կե՛-ցու՛-ն
կա՛-ր-դո՛ւ-ք, եր-զեա՛ եր-զ հոր յա՛-ր-ու՛-ր կե՛-ցու՛-ն
կա՛-ր-դո՛ւ-ք, եր-զեա՛ եր-զ հո՛-ր յա՛-ր-ու՛-ր կե՛-ցու՛-ն
f
հը-ա՛-զե՛-կե՛-ցու՛ կե՛-հայ ա՛ռ-ա-ր-ու՛-ն։
rit.
հը-ա՛-զե՛-կե՛-ցու՛ կե՛-հայ ա՛ռ-ա-ր-ու՛-ն։
rit.
հը-ա՛-զե՛-կե՛-ցու՛ կե՛-հայ ա՛ռ-ա-ր-ու՛-ն։
rit.
հը-ա՛-զե՛-կե՛-ցու՛ կե՛-հայ ա՛ռ-ա-ր-ու՛-ն։
rit.
rit.

ԽԱՉԱՏՈՒՐ ԿԱՆԱՅԱՆ

ԷՋՄԻԱԾՆԻ ՆՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺԸ ԴԱՐՈՒՄ*

Նվիրակությունը Սիմեոն Երևանցի կաթուղիկոսի օրով (1763—1780)

Սիմեոն Երևանցի կաթուղիկոսի օրով թե՛ արևմտյան, թե՛ արևելյան և թե՛ Ռուսաստանի հայկական տիրախնամ թեմերին նվիրակներ են ուղարկվում՝ ամրապնդելու համար հոգևոր-եկեղեցական կապերն այդ համայնքների և Մայր Աթոռի հետ ու ապահովելու նյութական անհրաժեշտ օժանդակություններ մայրավանքի շինարարական-վերանորոգչական կարիքների և Մայր Աթոռի բարեզարդության և պայծառության համար:

Սիմեոն Երևանցին 1766 թվականի օգոստոսի 3-ի պաշտոնական գրությամբ դիմում է ռուսաց Եկատերինա կայսրուհուն, որ նա իր հովանու տակ առնի կայսրության մեջ ապրող հայերին: Այս առթիվ Հայոց կաթուղիկոսը Դավիթ վարդապետի գլխավորությամբ պատգամավորություն է ուղարկում կայսրուհու մոտ և, «ի նշան հոգևոր սիրոյ», նրան ս. Կարապետի, ս. Հռիփսիմեի, ս. Գևորգ զորավարի և Նոյան տապանից մասունքներ է նվիրում: Սիմեոն կաթուղիկոսի ցանկությունը կայսրուհին կատարում է և իր կայսրության մեջ ապրող հայությանը մի հրովարտակով առնում է իր հովանավորության ներքո[30]:

Սիմեոն Երևանցին հատուկ ուշադրություն է դարձնում, որ Մայր Աթոռից ուղարկված նվիրակները լինեն հավատքի և գիտության մարդիկ՝ օժտված հոգևոր ու բարոյական բացառիկ բարեմասնություններով, արտաքնապես էլ ունենան վայելուչ դեմք, գեղեցիկ հասակ, որպեսզի կարենան պատկառանք ազդել ժողովրդի վրա: Նա ամենայն խստությամբ Մայր Աթոռի յուրաքանչյուր կոպեկի համար հաշիվ էր պահանջում նվիրակներից: Նա պատժում էր հանցավոր նվիրակներին, որպեսզի նվիրակությունն իր բարձրության վրա գտնվի միշտ հաչս ժողովրդի:

Նվիրակները Մայր Աթոռից մեկնելիս իրենց հետ տանում էին կնքված սրբալույս մեռոն, որպես անհարդախ, իսկական մեռոն ս. Էջմիածնի և որպես հոգևոր կապ ու շաղախ Մայր Աթոռի ու թեմերի միջև:

«Ամենայն ազգն մեր ցրուեալ են ընդ ամենայն իշխանութիւնս և ընդ ծագս տիեզերաց՝ հեռացեալք և տարակացեալք ի մէնջ: Եւ զի սովորութիւն է մեզ ոչ մնալ առանց մեռոնի, զի այնու կատարին օրէնք մեր, վասնորոյ ամենայն ազգն մեր ուր և իցեն, և ընդ որով իշխանութեամբ և բնակիցեն, ի մեզ հային և մեզ կարօտին վասն սրբալոյս մեռոնին, առանց որոյ կալ ոչ կարեն: Ուստի առաքեմք ամ ըստ ամէ զվարդապետս թղթով մերով և սրբալոյս մեռոնաւ առ հեռաւոր և մերձաւոր ազգս մեր, զի զմե-

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1977 թվականի № № Բ—Գ-ից:

[30] **Մ. Մաղրեանց,** Պատմութիւն կաթողիկոսաց, Էջմիածին, էջ 161: «Ջամբռ», էջ 39—40:

ոնն բաշխեսցեն նոցա, և զկամաւոր տուրս ինչ առեալ ի նոցունց բերեցին վասն մեր»: Այնուհետև շարունակում է Վեհը, որ նրանք՝ նվիրակները, իրենց շրջագայության միջոցին պատահում են պես-պես բռնավորների, որոնք, սակայն, ս. Աթոռի և կաթուղիկոսի պատվի համար նվիրակներին չեն դիպչում: Ապա հիշեցնում է, որ եթե նվիրակների վերաբերմամբ որևէ բռնություն նկատելի լինի, պարտավոր են իրեն դիմելու, թե մեր օրենքով և թե «ըստ թագաւորականացն հրամանաց»[31]:

Սիմեոն կաթուղիկոսի «Հիշատակարանը», որ ընդամենը պարունակում է յուր մեջ մի քանի տարվա պատմություն—տալիս է մեզ այնչափ նվիրակների անունները: Անշուշտ նրա ժամանակվա նվիրակների թիվը այդ չափով չի սահմանափակվում. նա յուր կաթուղիկոսության երկար տարիներում, անշուշտ, դեռ շատ ու շատ նվիրակներ է կարգել տարագիր հայության այս և այն կողմերում. միայն ափսոս որ աղբյուրները պակասում են տակավին երջանկահիշատակ կաթուղիկոսի շրջանի նվիրակության պատկերը ամբողջացնելու և պարզ ու մեկին տեսնելու այն:

IV
Նվիրակությունը Ղուկաս կաթուղիկոսի օրով (1780—1799)

Հանձին Ղուկասի Սիմեոն Երևանցին ունեցավ յուր արժանավոր հաջորդը: Սրա ժամանակն էլ փոթորկալի էր: Ղուկաս կաթուղիկոսը մի շատ լուսամիտ, ժամանակի դրությունն ըմբռնող անձնավորություն էր: Նա լավ էր հասկանում մանավանդ ժամանակի քաղաքական կացությունը: Այդ երևվում է նրա մի կոնդակից[32], որ ուղղված է Մադրաս—Ծամիր աղային: Կաթուղիկոսին Ծամիրը գրել է հայոց երկրի ազատության մասին: Սակայն, ինչպես երևում է, նա ծանոթ չի եղել երկրի դրության և պայմաններին: Ղուկաս կաթուղիկոսը գրում է նրան. «Բայց ահա ըստ մեծի մասին մատնեցեալք կան (հայք) ի խստութիւնս թշնամեաց անողորմից, որ հաւասարապէս ծառայելով ևս չկարեն զողորմութիւն գտանել, ո՞ւր մնայ թէ զապրստամբութիւն ցուցանիցեն, որ բնաւ ոչ իսկ կարեն: Առ այս ասիցես թէ՝ հանիք ընդ ծառայութիւն այլազգեաց և ոչ սիրէք զազատութիւն. բայց լինէր թէ՝ օրհնեալդ այժմ յայս կողմանքս գայիր և շրջագայէիր ի Զուղայու մինչև ցաստ և յայլ կողմանս՝ յոր գոն ազգ մեր. և ականատես վերահասութեամբ իմանայիր զկացութիւնս մերազնէից և զանօգնականութիւն և զբռնութիւն իշխողացն, և ինքնին կնքէիր թէ՝ այս գիւրմանցս յառաջանալ ոչ լինի. ապա թէ հնարաւոր իցէ յառաջանալն, մի՞թէ յիմար իցեմք, որ ի տառապանաց զերծանիլ չկամեցիմք: Զկունք որսացեալք ի ցանցս և թռչունք ըմբռնեալք ի վարմս ջանան զերծանիլ, ապա ո՞րքան ևս առաւել բանականքն բաղձամբ ազատութեան. սակայն զի այժմս կարի դժուարին է առ մեզ և վտանգաւոր յոյժ, վասնորոյ երկուց չարեաց զփոքրն ընտրել պիտոյ է: Եւ հաստատապէս իմա, որ ոչ ի հիւսիսական տէրութենէն և ոչ յայլոց մեզ այցելութիւն կարէ լինել այժմ, բաց յԱստուծոյ»: Այսպես Հայոց Հայրապետը շեշտում էր նվիրակների գործունեության մեծ նշանակությունը: Նա շատ լավ հասկանում էր եկեղեցական այդ գործոնի ուժը և նրա բարոյական կրթիչ կողմը: Հայկական ցրված հատվածների մեջ բարոյական միություն հաստատելու և նրանց սիրտը Մայր Աթոռի հետ կապելու համար անհրաժեշտ են կարող և գիտնական նվիրակներ: Ղուկաս կաթուղիկոսը, գլխավորաբար կրթիչ կողմը նկատի ունենալով ջոկում, ընտրում էր ս. Էջմիածնի միաբաններից ավելի բանիմացներին ու լուրջ մարդկանց նվիրակության համար՝ այնպես որ համարյա Էջմիածնում կրթված հոգևորականն չի մնում, որ նա չուղարկե այդ պաշտոնով տարագրված հայության մեջ: 1791 թ. Հնդկաստանի նվիրակ Եփրեմին նամակ գրելիս Ղուկաս կաթուղիկոսը հիշում է, որ ահա «այժմ գրեթէ իսպառ զուրկ կամք ի խորհրդական մարդոց և անմխիթար յամենայնի», ուստի և գրում է, որ շտապի գա ի մխիթարություն և ի հանգստություն յուր[33]: Երջանկահիշատակ կաթուղիկոսի այդ վարմունքը շատերը սխալմամբ այլ կերպ են բացատրում, թե նա հեռացնում էր հասկացող, բանիմաց անձանց, որպեսզի ինքն ազատությամբ կառավարե, ինչպես կկամենար: Այս կարծիքի ջերմ պաշտպան է Մսեր Մսերյանց, որ յուր պատմության մեջ այսպես է ասում. «Բայց կամեցեալ յանկասկածս վարել զիւրն իշխանութիւն, եդ ի մտի ի բաց հեռացուցանել յԷջմիածնէ զխոհեմագոյն և զբանագէտ անձինս»[34]:

Ղուկաս կաթուղիկոսը յուր մահվանից հետո թողնում է մեծ հարստություն Էջմիածնի գանձարանում, մոտավորապես 100.000 թումանի պարսից դրամ[35]: Այդ հա-

[31] «Դիւան», Գ, էջ 172, 174—175:

[32] «Դիւան», Ա—Բ, էջ 17—18:

[33] «Դիւան», Դ, էջ 530:

[34] Մսերեանց, Պատմութիւն կաթող. Էջմիածնի, էջ 9:

[35] «Արարատ», 1875 թ., Գալուստ Ծիրմազանյան;

բրստությունն անշուշտ նվիրակության միջոցով էր դիզել Էջմիածնի բարեզարդության համար: Մյուս կողմից երբ նա բանիմաց վարդապետներին էր ուղարկում նվիրակության համար զանազան կողմեր, ոչ թե այն պատճառով էր, որ գիտուն վարդապետները կգրավեին ժողովրդի սիրտը շատ արդյունքներ դիզելու համար,—ինչպես այդ կարծում է Մսերյանց, և յուր պատմության շարունակության մեջ գրում. «... ուստի զորս մի անգամ ի միաբանից Աթոռոյն տեսանէր աչալուրջս և բանագէտս և փոքր ի շատէ գրոց տեղեակս յեպիսկոպոսաց կամ ի վարդապետաց, առաքէր զնոսա ի հեռաւոր քաղաքս նուիրակս, առաջնորդս և ժողովարարս, որպէս զի քարոզութեամբ իւրեանց գրաւեալ զսիրտս ջերմեռանդն ժողովրդոց, լիուլի քաղեսցեն ի նոցունց զտուրս նուիրականաց և հարստացուցեն զԱթոռն»: Որ Ղուկասն առավել սրտեր գանձելու, այսինքն՝ ժողովրդի սրտերը Էջմիածնի հետ կապելու համար էր այսպիսի նվիրակներ ուղարկում՝ այդ երևվում է նրա մի կոնդակում ասած հետևյալ խոսքերից, կոնդակ, որ ուղղում է Պոլսի մի ամիրայի. «...Սրբազան հայրապետացն մերոց նախանձելոց՝ միշտ այն է լեալ նուիրակացն սրբոյ Աթոռոյս պատուէր, զի ընդ ամենեսեան սիրով վարիցեն, ընդ առաջնորդ և ընդ նուիրակունս, տալով պատիւս ըստ իւրաքանչիւր արժանեաց, մի երբեք ատիթս ինչ գայթակղութեան տացեն միամտաց. մանաւանդ զսիրտս ժողովրդոց առաւել ջանալ գանձել սրբոյ Աթոռոյս, քան զբազմութիւն արդեանց»: Այս գաղափարի հետևող և ջերմ պաշտպանն է ինքը: Առհասարակ ուսումնական մարդկանց նվիրակ ուղարկել ձգտումը երևում է նրա թղթերից (Դիւան հայոց պատմության, Դ.): 1791 թ. Հնդկաստանի նվիրակ Եփրեմ վարդապետին նամակ գրելիս Ղուկաս կաթողիկոսը հիշում է, որ անա «այժմ գրեթէ իսպառ զուրկ կամք ի խորհրդական մարդոց և անմխիթար յամենայնի», ուստի և գրում է, որ շտապի գա ի մխիթարություն և հանգստություն յուր[36]: Այս ևս մի ապացույց է, որ գիտուններին իրենից հեռացնելով՝ անմխիթար է համարում իրեն:

Ղուկասը մեր այն կաթողիկոսներից էր, որ ամենքից առավել լավ ըմբռնեց նվիրակության բարոյական, հոգևոր նշանակությունը:

Ղուկաս կաթողիկոսը յուր գահակալության ողջ 20 տարիների գործունեության ընթացքում նվիրակներ է ուղարկել գավառները:

Ռուսաստանի, հանախ նաև **Հաշտարխանի** նվիրակ հիշվում է Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը: Ծայրագույն նվիրակ և առաջնորդ Հովսեփ վարդապետ «արհի եպիսկոպոսը» նշանակված է եղել նվիրակության և առաջնորդության պաշտոնում Սիմեոն կաթողիկոսի ժամանակվանից, իսկ Ղուկասը վերահաստատում է նրան նույն պաշտոնների մեջ 1780 թ. հոկտեմբերին[37]: Ապա Ղուկաս կաթողիկոսը պարտք է համարում հիշեցնել Մոզդոքի «կոմենդատ պոլկովնիկ Ալեքսանդր Ֆյոդորովիչ Իվանովին, որ կայսրուհու հրամանը գործադրեայն հրամանը, որի հիման վրա նա ոչ մի «ի կարգաւորաց ազգիս մերոյ» չպիտի թույլ տար մտնել ռուսաց սահմանը առանց կաթողիկոսի «կարմրակնիք թղթի». խնդրում է սեր և հարգանք ցույց տալ դեպի հայոց ազգն ու դեպի Հովսեփ նվիրակը[38]:

1792 թ. երկրորդ կեսից Հովսեփ Արղությանի՝ կաթողիկոսին գրած թղթերից իմանում ենք, որ նվիրակը ձեռնարկել է Գրիգորուպոլ քաղաքի շինության և հիմնարկության հանդեսն էլ արդեն կատարել է: Հետո՝ նա ուղարկել է Էջմիածին գրքեր—50 օրինակ վիպասանություն, 50 օրինակ աղոթամատույց, 50 օրինակ տետրակ՝ «Դուռն ողորմութեան» և 50 օրինակ օրացույց:

Որ նվիրակներն իրենց գործունեության շրջանում ենթարկվում են ամեն տեսակ նեղություններ և չարչարանքների, արդեն հայտնի է. անա և **Կարնո** նվիրակ Ներսես վարդապետին և վեքիլ գանձապետ Հայրապետին Կարնի մաքսապետը բռնել բանտն է դրել ու կամենում է նրանցից խլել Մայր Աթոռի արդյունքը, ժողոված նվերները, սատճառաբանելով, թե արդեն կաթողիկոսը (Սիմեոն) վախճանվել է, ուրեմն և նրանց մոտ եղած արդյունքներն հարբունիս պետք է գրավվեն: Այս երբ լսում է Ղուկաս կաթողիկոսը՝ դիմում է մի գրությամբ (1780 թ. օգոստոս) անմիջապես Կարնո ժողովրդին՝ միջնորդելու այդ ապօրինի վարմունքի համար և ազատելու բանտից նվիրակին ու գանձապետին. նրանք պետք է հասկացնեն փաշային, որ այդ արդյունքը ոչ թե կաթողիկոսին է պատկանում, այլ ամբողջ Մայր Աթոռին և որ նման դեպք բնավ չի պատահել յուր նախորդների ժամանակ[39]:

Զմյուռնիայի նախկին նվիրակ Փիլիպպոս վարդապետի տեղ կարգվում է Եսայի վարդապետ, որի մասին հայտնվում է ժողովոր-

[36] «Դիւան», Դ, էջ 530:

[37] «Դիւան», Դ, էջ 52:

[38] «Դիւան», Դ, էջ 70:

[39] «Դիւան», Դ, էջ 112—114:

ոին 1782 թ. նոյեմբերին, որ նրան լսեն և իրենց կամավոր տուրքն առատությամբ տան Մայր Աթոռին[40]:

Գաղատիայում նվիրակ է Հովհաննես վարդապետ, որի հաշիվը տեսնում է Վեհի հրամանով Կ. Պոլսում Մինաս ծայրագույն նվիրակը պատրիարքի հետ միասին[41]:

Ռումելիում հիշվում են՝ Մեսրոպ, Զուղայեցի Ստեփան և 1794 թ. Գրիգոր վարդապետներն իբրև նվիրակներ[42]:

Վանում՝ Հակոբ, Աստվածատուր, Մարտիրոս նվիրակներ:

Անկյուրիայում՝ Հովհաննես, Արապկիրցի Հարություն վարդապետներ[43]:

Տիգրանակերտի (Ամիթ) նվիրակ է Վարդան վարդապետ, որը, սակայն, գործը չվերջացրած վախճանվում է, իսկ նրա մնացած գործն ավարտում է նրա օգնական Աբրահամ վարդապետ[44]:

Բաղդատում 1796 թվին հիշվում է նվիրակ Հակոբ վարդապետ:

Հնդկաստանում նվիրակ է Եփրեմ վարդապետ, որին Վեհը 1791 թվին նամակ է գրում, որ 3 տարի է ինչ նրանից նամակ չունի, պատվիրում է շտապել գալու[45]:

Թիֆլիսի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսը 1781 թ. նշանակվում է և նվիրակ[46]:

Երջանկահիշատակ Ղուկաս կաթուղիկոսի հրամանով Արևմտյան Հայաստան է գընում նվիրակության պաշտոնով ժամանակի ականավոր աստվածաբան Գրիգորիս արքեպիսկոպոսը. «Եւ համբաւ իմաստութեան և շնորհալոյս վարդապետութեան նորա հռչակեալ տարածեցաւ ի մէջ քաղաքիս և յամենայն ուրեք և եհաս յունկն ի Վենետիկ վարժեցեալ կարդացողաց՝ աստ գտանեցելոց՝ որք ծպտեալ կերպարանօք եկեալ յեկեղեցին մեր առ ի լսել զհոգելի բանս նորին»: Այնուհետև նա կոչվում է «նորայայտ Շնորհալի» և «երկրորդ Նարեկացի հրեշտակական վարդապետ»[47]:

Այսպես նվիրակությունը ծագում է ԺԵ դարու կեսերից, ծաղկում և յուր զարգացման բարձր աստիճանին է հասնում 18-րդ դարում. իսկ այնուհետև Ղուկաս կաթուղիկոսից սկսած հետզհետե նվիրակության գործը թուլանում է և մինչև Եփրեմ կաթուղիկոս գրեթե վերջ է տրվում նվիրակության:

Նվիրակության նախկին գործունեությունից և փորձերից Եփրեմի ժամանակ կազմվում է նվիրակության վերաբերյալ մի կանոնադրություն, որով որոշվում է նվիրակների դերը և նվիրակության գործունեությունը: Այդ կանոնադրությունը բաղկացած է 18 հոդվածներից, որոնցից առաջին 6-ը նվիրակությանն է վերաբերում, իսկ վերջին 12-ը նվիրակներին[48]: Նվիրակության այս կանոնադրությունը մնաց առանց գործադրության, որովհետև Եփրեմ կաթուղիկոսից հետո քաղաքական թե ներքին և թե արտաքին կնճռոտ հանգամանքները թույլ չտվին նվիրակության գործունեության շարունակության:

Թեպետ Եփրեմի հաջորդ կաթուղիկոսների ժամանակներում էլ մերթ-մերթ նվիրակներ են ուղարկված այլ և այլ վայրեր, սակայն, նրանց դերը հետզհետե փոխվել է և չի ունեցել յուր առաջվան նշանակությունը:

Նվիրակները դուրս էին գալիս ս. Էջմիածնից ոգևորված իրենց կոչումով, զինված հայկական գիտությամբ, լցված ազգային ոգով— ու մտնում էին ժողովրդի մեջ, ազնիվ ու անկեղծ խոսքի կարոտ, լույսի ու հույսի ակնկալող մեր խավար անկյունները ստիպելով իրենց շուրջը՝ հավատ, հույս, սեր: Նվիրակները հանդիսանում էին հայոց եկեղեցու առաքյալները՝ Ավետարանի ճշմարտությունների քարոզիչները:

Հետևյալ կանոնադրության մեջ սահմանվել էին նվիրակների պաշտոնն ու կոչումը:

Ա. Գերագույն ս. Էջմիածնի—Մայր՝ Աթոռի նվիրակի պաշտոնն է յուր նվիրակության շրջանում ուսուցանել, պահել Փրկչի վարդապետությունը և Հայաստանյայց լուսավորիչների կանոնները:

Բ. Նվիրակները փոխանորդ են կաթուղիկոսին և պետք է տեղեկանան հավատացյալներից յուրաքանչյուրի, մեծի և փոքրի, հարստի և աղքատի, հոգևորականի և աշխարհականի մարմնավոր և հոգևոր հանգամանքներին, շեղվածներին ուղղության բերեն, խրատեն իբրև հայր և եղբայր կարեկցությամբ և մաքուր վշտակցությամբ: Նրանք պարտական են քահանայից մասին տեղեկանալու, թե զգա՞ստ են, արթո՞ւն են իրենց պաշտոնին, հսկում խոստովանության և հաղորդության վրա և չե՞ն թույլ տալիս, որ հավատացյալները մոլորության

[40] «Դիւան», Դ, էջ 471:
[41] «Դիւան», Դ, էջ 236:
[42] «Դիւան», Դ, էջ 98, 460, 636:
[43] «Դիւան», Դ, էջ 457, 458:
[44] «Դիւան», Դ, էջ 566:
[45] «Դիւան», Դ, էջ 528:
[46] «Դիւան», Դ, էջ 377, 400:
[47] Մի ձեռագիր տաղարանից. «Արձագանք», 1888 թ., № 2, էջ 22:
[48] «Դիւան», Գ, ծանոթ. 3, էջ 707—724: Տեսնել «Հավելվածը»:

սեջ մեռնեն: Նվիրակները պիտի հսկեն նաև քահանայից և առաջնորդաց վրա, որ նրանք ժողովրդի հետ համաձայն օրենքավարվին և չնեղեն:

Գ. Նվիրակների պաշտոնն է «պատմել ամենեցուն, որք հարցանին ծնողասիրաբար զողջութենէ և զշինութենէ մօրն լուսոյ, սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի» և ծանոթացնել ս. Էջմիածնի վիճակի հետ և բաժանել ս. մյուռոնն:

Դ. Նվիրակի պաշտոնն է շնորհակալությամբ և օրենությամբ ընդունել նվերները և ընծաները, որ ջերմեռանդությամբ կտրվեն հանուն ս. Էջմիածնի և նվիրակին:

Ե. Նվիրակների պարտքն է հանուն ս. Էջմիածնի տրված նվերները ստանալ, պահպանել զգուշությամբ և տեղ հասցնել համաձայն նվիրողների դիտավորությանց:

Զ. Նվիրակների պաշտոնն է ճանաչել իրենց ժողովուրդն և իրենց անձն և ամենայն անգամ պատշաճավոր տնօրենություններ անել, որպեսզի անկարգությունները բարձվեն: Այս նպատակի համար պատվիրվում է նվիրակներին հեռու մնալ հպարտությունից, բարկությունից, տիրաբար ճոխանալուց, շահասիրությունից:

Այս նպատակներին հասնելու համար 12 այլ կանոններ են սահմանված.

1. Նվիրակներն իբրև կաթուղիկոսի ներկայացուցիչ պիտի պահեն իրենց, պիտի զգուշանան անվայել բայլ անելուց և բառ արտասանելուց:

2. Անխափան եկեղեցի պիտի գնան և պիտի չծուլանան: Մինչև իսկ իրենց մարմնո կարիքները մոռանալով՝ նրանք պիտի մասնակցեն ժամերգությանց և ամենայն տեղ պիտի քարոզեն:

3. Նվիրակների աչքը միշտ դեպի Մայր Աթոռը պիտի լինի ուղղված: Նրանք Մայր Աթոռի օգուտը պիտի մտածեն և թեպետ 3 տարի է նվիրակության շրջանը, պիտի աշխատեն գործերը շուտով ավարտել և դառնալ ս. Էջմիածին, չծանրանան խեղճ ժողովրդի վրա:

4. Նվիրակները պիտի խուսափեն չափազանցությունից և ամեն անգամ ժողովրդի օգուտը պիտի մտածեն, որ չծանրաբեռնվի նա:

5. Պատվիրվում է նվիրակներին չափավոր լինեն իրենց զգեստների և կերակրի մեջ, այլ և զգուշանալ ագահությունից և ժլատությունից:

6. Նվիրակները պիտի տուրքերը խոհեմությամբ ժողվեն ամենայն տեղ, իրենց օժանդակ առնեն երկու խոհեմ քահանա և երկու հարգված աշխարհական, որոնք պիտի որոշեն յուրաքանչյուրի մասն ու հավաքեն: Ընդ ամին արգելված է բարկություն և անեծք:

7. Նվիրակներն ամեն մի տեսակ նվերների համար մանրամասն հաշիվ պիտի տան քահանայապետին:

8. Նվիրակները պիտի հսկեն ս. Էջմիածնի և այլ գանձանակների և գանձապահների վրա:

9. Իրավունք չի տրվում այլ Աթոռների գանձանակներին ձեռնամուխ լինելու:

10. Արգելվում է նվիրակ եպիսկոպոսներին միճակներում ձեռնադրություն անել, որովհետև այդ իրավունքը առաջնորդներինն է: Նվիրակներն իրավունք ունեն ձեռնադրելու միայն իրենց հատուկ սպասավոր ուարկավագներին: Իսկ եթե առաջնորդի համաձայնությունը լինի, պետք է ձեռնադրեն և վիճակի համար հոգևորականներ և այն խիստ քննությամբ:

11. Նվիրակներն իրավունք չունեն դատաստան կտրել առանց խորհրդակից քահանաների, իշխանների և երևելիների:

12. Պատվիրվում է նվիրակներին, որ քաղաքավարությամբ և աչալուրջ կերպով վարվեն առաջնորդների և ս. Երուսաղեմի նվիրակների հետ, իսկ եթե իրենց հորդորներին չլսեն զանցառուները, այդ մասին հայտնեն կաթուղիկոսին և պատրիարքին[49]:

[49] «Արարատ», 1896 թ., մայիս, էջ 230—231:



Ա. Ն. ՇԱՀԻՆՅԱՆ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Գուգարաց աշխարհի Կողբոփոր և Զոլոփոր գավառները (Սովետական Հայաստանի Նոյեմբերյանի, Թումանյանի և Իջևանի շրջաններ) հանդիսացել են Հայաստանի միջնադարյան նյութական մշակույթի ուրույն մի շրջան:

Կողբոփորի հուշարձաններից ուշագրավ է վերջերս դաշտային աշխատանքների միջոցին մեր կողմից հայտնաբերված գողտրիկ խաչքարի այն բեկորը, որն այժմ պահվում է Սանահնի վանքի թանգարանում: Այն կերտվել է ֆիլզիտից: 1071 թվակիր այս խաչքարի քանդակները հար և նման են Կողբի քառակող կոթողների քանդակներին (նկար 1) և իր թվագրությամբ ու հատկապես զարդաքանդակներով ելակետային կռվան կարող է հանդիսանալ վերջիններիս ժամանակագրությունը ճշտելու համար: Խաչքարի պահպանված արձանագրությունը հետևյալն է.

Ի:Շ:ԵՒ: Ի: [Թուխս կանգնեցի զխ]
աչս Յո .....
[Գրի]գորի ք[ահանայ]...:

Նոյեմբերյանի շրջանում ցարդ գրանցված են շուրջ երեք տասնյակ միջնադարյան հուշարձաններ: Դրանցից ուշադրության արժանի են՝ Բաղանիս գյուղի 4—5-րդ դդ. միանավ բազիլիկան, Ոսկեպարի 7-րդ դ. կենտրոնագմբեթ տաճարը, Կողբի հայտնի Մշակավանքի համալիրը, Ղալաչա գյուղի միջնադարյան ամրոցը և այլ բազմաթիվ գեղաքանդակ կոթողներն ու խաչքարերը: Ահա և այս ամենին վերջերս ավելացավ ևս չորսը:

Նորահայտ հուշարձանախումբը գտնվում է Նոյեմբերյանից 28 կմ դեպի հարավ-արևելք Զուխտագեղցի հնավայրում: Այստեղ, Գյոգդաղի անտառապատ և ընդարձակ բացատում՝ հյուսիսից հարավ գրեթե նույն շարքի վրա, իրար մոտիկ կանգնած են չորս կանգուն հուշարձաններ՝ որոնցից երեքը եկեղեցիներ են, իսկ չորրորդը՝ քավարան կոչվող յուրահատուկ, գողտիկ մի կառույց (նկար 2): Տեղի բնակիչները հուշարձանախումբը երկու զույգ լինելու պատճառով կոչում են Զուխտագեղցի (Զուխտ-ագեղցի): Բոլորն էլ թաղակապ են, շարված կիսա-

Նկ. 1. Կողբ. խաչքար (1071 թ.)



Նկ. 2. Ջուխտագեղցու I և II եկեղեցիները

տաշ բազալտով ու կրաշաղախով, ընդ որում դրանց մուտքերի, թաղերի ու քիվերի հիմնական մասերը շարված են սրբատաշ բազալտով: Օգտագործված է նաև ֆիլզիտը:

Հուշարձաններից առաջինը՝ թաղակապ ծածկով, ոչ մեծ չափերի եկեղեցի է: Մուտքը արևմուտքից է, անունը՝ սուրբ Կարապետ: Վերջինս նշված է հուշարձանի արևմտյան ճակատին, քիվի հյուսիս-արևմտյան ակյունաքարի վրա (նկար 3): Հինգտողանի նվիրատվական այս արձանագրության մեջ ասված է հետևյալը.

«.....ի սուրբ Կարապետս եւ միաբանքս էտուն մեզ ի հոգոյն Գալըստեն Ա: (=1) աւր պատարագ»:

Նույն տաճարի հյուսիսային կողմում դարձյալ քիվի վրա պահպանվել է նվիրատվական մեկ այլ՝ երկտողանի արձանագրություն[1]:

Ս. Կարապետ եկեղեցու առջևում, կարմրավուն քարից ընկած ու ջարդված թևավոր մի խաչի վրա պահպանվել է Աթաբեկ Սադունի անվամբ թեև թերի, բայց ուշագրավ մի հիշատակագրություն (նկար 4):

[1] Հարմարություն և անհրաժեշտ լուսավորություն չլինելու պատճառով հնարավոր չեղավ արձանագրությունն ամբողջությամբ վերծանել:

Նկ. 3. Ս. Կարապետ եկեղեցի (XII—XIII դդ.). արձանագրություն քիվի վրա

Նկ. 4. Թեավոր խաչարձան

Կոթողի նախնական տեղն անհայտ է, բայց անկասկած է, որ այն ժամանակին կանգնած է եղել առանձին պատվանդանի վրա: Խաչարձանի հիշատակարանից պարզվում է, որ Ականջակաղնեցու թոռ՝ Հասանը և իր կին Խոշաքը կանգնեցրել են հիշյալ խաչարձանը, ընծաներ նվիրել եկեղեցիներից մեկն ու մեկին խնդրելով Վարդավառի տոնին պատարագի մատուցում՝ ի հիշատակ իրենց ննջեցյալների:

Արձանագրության մեջ մասնավորապես ասված է (նկար 4).

Թվ(ին) ՉԻԵ (=1276) եւ իշխանութե(ան) Սադունին, ես Հ[ա]սան, թոռն Ականջակաղնեցի եւ ամուսին իմ Խոշաք, դուստր ——— ա կանկնեցաք զխ(ա)չս եւ ——— ընծայիւք ——— իս եւ եղբարքս Ս[ա]հ[ակ] ——— [ի տ]աւնի վ(ա)ղդավ(ա)ոին ———:

Արդ, ո՞վ է Ականջակաղնեցու թոռ Հասանն ու իր կին Խոշաքը՝ դժվարանում ենք ասել: Համենայնդեպս նրանք 13-րդ դ. 70-ական թթ. ունևոր խավի ներկայացուցիչներ են: Կարևոր է նաև այն, որ այստեղ Սադուն Արծրունին հիշատակված է առանց «աթաբեկ» տիտղոսի:

Անգամ եթե արձանագրությունը թվագրված չլիներ, ապա դժվար չէր լինի կռահել, որ նրանք 13-րդ դ. 70—80-ական թթ. գործիչներ են՝ քանի որ այն փորագրված է Աթաբեկ Սադունի իշխանության օրոք: Ինչպես հայտնի է, վերջինս Հայաստանում Աթաբեկ էր դարձել 1270 թ. սկզբից մինչև 80-ական թթ. սկիզբը: Աթաբեկ Սադունի մահվան ժամանակագրության հարցում ուսումնասիրողների մոտ որոշ տարակարծություններ կան[2]: Այսպես օրինակ՝ Գարեգին արքեպս. Հովսեփյանի կարծիքով Սադուն Արծրունին Աթաբեկ է եղել 1270—1284/5 թթ.[3], Ս. Ավագյանի ենթադրությամբ՝ 1270—1281/3 թթ.[4]: Վրաստանի պատմության համաձայն աթաբեկ Սադունը մահացել է 1281 թվին[5]: Սամվել Անեցին Սադունի մահը նշանակում է 1285 թ.[6], Ստ. Օրբելյանը՝ 1282 թ.[7], իսկ Մխ. Այրիվանեցին՝ 1281 թվից հետո[8]: Պրոֆեսոր Կ. Ղաֆադարյանը Հաղբատավանքում թաղված նույն այս Սադուն Արծրունու տապանագիր-հիշատակագրությունը թվագրում է 1282 և 1285 թվերով[9]: Նորադուզի կաուկածելի թվագրությամբ վիմագիր մի հիշատակարանում Սադուն Արծրունու Աթաբեկ անվանումը՝ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը բացատրում է վրաց արքունիքում նրա ունեցած խնամակալական հանգամանքներով անվերապահ ընդունելով Մ. Սմբատյանցի հիշյալ արձանագրության ՉԷ (=1258) թվագրումը[10]: Այնինչ հմուտ վիմագրագետ Ս. Բարխուդարյանի իրավացի ենթադրությամբ վերոհիշյալ արձանագրու-

---

[2] Նույնիսկ Սադունի աթաբեկ դառնալու ժամանակի սկզբի հարցը ևս վերջնականապես լուծված չէ:

[3] **Գարեգին արքեպս. Հովսեփյան,** Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ, Բ՝ հրատարակություն, Անթիլիաս-Լիբանան, 1969 թ., էջ 70, 230:

[4] **Ս. Ավագյան,** Վիմագրական սրբագրումներ, Պատմա-բանասիրական հանդես, 1967 թ., № 2—3, էջ 279:

[5] **Н. А. Бердзиниашвили** и др. История Грузии, Тбилиси, 1962, стр. 246.

[6] **Սամվել Անեցի,** Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 113:

[7] **Ստ. Օրբելյան,** ժամանակագրութիւն, Երևան, 1942, էջ 28:

[8] Մխիթարայ Այրիվանեցւոյ պատմութիւն հայոց, Մոսկվա, 1860, էջ 68:

[9] **Կ. Ղաֆադարյան,** Հաղբատ, էջ 189:

[10] **Աշոտ Հովհաննիսյան,** Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 213:



Նկ. 5. Քավարանի շինությունը

թյան թվականի տասնավորը «բաց է թողնված»: Մեր հաստատ համոզմամբ այն Ի (=20) կարող էր լինել ՉԻԷ (=1278) և որը լիովին կհամապատասխաներ Աթաբեկ Սադունի իշխանության տարիներին, որովհետև ինչպես ասացինք վերևում՝ Սադունը աթաբեկ տիտղոսն սկսում է կրել հատկապես 1271 թ. սկսած: Սադունի աթաբեկության և ամիրսպասալարության ժամանակաշրջանը 1270—80-ական թթ. են՝ ինչպես մեզանում ընդունված է ցարդ: Սակայն, նույն այդ ժամանակների հայկական վիմագիր հիշատակարաններում նրա այդ տիտղոսների հաճախակի բացակայությունը կարող է երբեմն թյուրիմացությունների առիթ հանդիսանալ: Մինչև անգամ Հաղբատավանքի 1280 թվագիր հայտնի հիշատակարանում Սադուն Արծրունու այդ տիտղոսներից և ոչ մեկը չի նշված «ի թվիս ՉԻԹ (=1280) յիշխանութե(ան) տեղոյս Սադունին ես...»[11]: Նոյեմբերյանի Զուիտագեղցու վերը նշված նորահայտ վիմագիր հիշատակարանում ևս՝ գրեթե իր իսկ անմիջական տիրության ասմունքներում, աթաբեկ Սադունը հիշատակված է լոկ «իշխանութեան Սադունին» ձևով: Այս հանգամանքը բացատրելի է դառնում նրանով, որ «իշխանութեան Սադունին» արտահայտությունը «ի տերութեան Սադունին» իմաստն ունի, հետևաբար այն ոչ մի ստվեր չի գցել նրա աթաբեկ տիտղոսի վրա: Այդ իսկ պատճառով զարմանալի չպետք է թվա Հաղբատավանքում աթաբեկ Սադունի վերը նշված համեստ տապանաքարի հիշատակարանը. «Այս է հանգիստ Սաթունին»[12]: Այս բոլորով հանդերձ, Սադուն աթաբեկի մահվան ժամանակի հարցում ամենահավատին համարում ենք Ստ. Օրբելյանի վկայությունը, որը և հաստատվում է վիմագրական կարևոր վավերագրով:

Այդ եզրակացությանը մեզ հանգեցնում է Առաքելոց վանքի (Իջևանի շրջան, Գետաշեն գյուղ) Գավթի մուտքի արձանագրությունը, որը թվագրված է ոչ թե ՉԽԲ (=1293), այլ ՉԼԲ (=1283), ինչպես պարզվում է այդ արձանագրության մեր նոր վերծանությամբ: Ստորև բերում ենք արձանագրությունն ամբողջովին.

Ի թվականին հայոց ի ՉԼԲ (=1283), կամաւ բարերարին Այ եւ ողորմութբ Աթաբակ եւ ամիրսպասալար Խուլոլբուղին, ես Գրիգոր, թոռն Խաչէնիսենց՝ միաբանեցա սբ Առաքելոցս իմ հալալ արդեմբ եւ բնակիչք սբ ուխտիս ետուն Բ (=2) սպատարագ ի տաւնի սբ Գրիգորի գիւտ նշխարացն: Կատարիչքն աւրինին յԱյ եւ խափանողքն դատին ի տէ: Ստեփ[ան] Գծ[ող]:

Անհա և այս ուշագրավ հիշատակարանով էլ հնարավոր է դառնում մեկընդմիշտ ճշտելու ոչ միայն աթաբեկ Սադունի մահվան, այնպես էլ նրա որդու՝ Խուլոլբուղայի աթաբեկության սկզբնավորության ճշգրիտ ժամանակը: Պարզվում է, որ 1283 թ. աթաբեկ է դառնում Խուլոլբուղան, ուրեմն հայրը նրանից առաջ մեռած էր: Եթե նկատի ունենանք, որ Սադունը 1280—81 թթ. դեռևս կենդանի էր[13], ուստի նա մեռած կարող էր լինել միայն 1282 թ.:

[11] **Կ. Դաֆթարյան,** նշվ. աշխ., էջ 197:

[12] **Ս. Ավագյան,** նշվ. աշխ., էջ 279: Բանասեր-վիմագրագետ Ս. Ավագյանը իրավացի կերպով ուղղել է այդ արձանագրության նախկին հրատարակիչների կողմից նշանակված սխալ՝ ՈՂԳ կամ ՈՂԴ (=1244, 1245) թթ. ՉԽԲ-ի (1293): Այս թվականության ՉԲ-ն անկանգնած են, տասնավորը մնում է Լ (=30), պետք է լինի ՉԼԲ (=1283):

[13] **Գ. Հովսեփյան,** Խաղբակյանք...,

Նկ. 6. Քավարանի արձանագրությունը

Մահկանաբերդի և Կայեանո տեր այթաբեկ Սադունը՝ Արծրունյաց Քուրդ ամիրայի որդին էր, Զաքարյան Շահնշահի կնոջ՝ Վանեանու հայրը:

Ինչ վերաբերում է Զուխտագեղցու վերոհիշյալ արձանագրության մեջ հիշատակված Հասանի մեծ հոր՝ Ականջակաղնեցու ինքնությանը, ապա դարձյալ հիշյալ արձանագրությունից բացի այլ տեղեկություններ առայժմ չունենք: Ականջ անվան հնագույն մի հիշատակություն ունենք Մակարավանքի Աստվածածին եկեղեցում (1198) ներքուստ փորագրված արձանագրության մեջ.

«ՅԱՆՈՒՆ ԱՅ ԱՅՍ ՄԵՐ ԳԻՐ Է ՅՈՀԱՆԻՍԻՆ ԵՒ ԻՄ ՄԻԱԲԱՆՔՍ ՈՐ ՏՈՒԱՔ ԱԿԱՆՋԱ, ՅՈՐԺԱՄ ՇԻՆԵՑԱՔ ԶԵԿԵՂԵՑԻՍ Ի ՄԵՐ ԾՆՈՂԱՑ ՅԱՆՈՒՆ ԱԿԱՆՋԱ... և այլն»[14]:

Կիլիկիայում կաղնի բառից առաջացած ենք տեսնում «Արքակաղնի» վանքի անունը, կաղնիների անտառում շինված լինելու պատճառով[14]: Հիրավի, Զուխտագեղցիում ևս պահպանված կաղնու ծառերից էլ հավանաբար առաջացել է Ականջակաղնի անունով գյուղատեղին և Ականջակաղնեցի անձնանունը:

Ս. Կարապետ եկեղեցին 12—13-րդ դդ. պատկանող և սրահ հիշեցնող, ուղղանկյուն մի դահլիճ է, որի արտաքին պատերին ագուցվել են տարբեր դարերի խաչքարեր՝ դրված հավանաբար հուշարձանի նորոգման ժամանակ:

Այս տաճարից դեպի հարավ, ոչ շատ հեռու պահպանվել է կառուցողական գրեթե նույնպիսի ոճով շինված թաղակապ երկրորդ եկեղեցին: Մուտքը արևմուտքից է, որի աջ կողմում, պատի մեջ ագուցված կարմրավուն բազալտե խաչքարի ներքևում պահպանված արձանագրության մեջ կարդում ենք հետևյալը.

ԵՍ ՓԻԼԻՊՈՍ ԵՒ ԱԾՈՏ ԵՂԲԱՅՐՍ ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ ՄԵԶ ԵՒ ԾՆՈՂԱՑ ՄԵՐ:

Թեև խաչքարը չի թվագրված, բայց իր զարդաքանդակներով և արձանագրության գրչությամբ 12—13-րդ դդ. կոթող է: Խաչքարը պոչուկ ունի, հետևաբար պետք է ենթադրել, որ իր ժամանակին այն կանգնած է եղել առանձին պատվանդանի վրա: Այն կարող էր եկեղեցու այժմյան տեղում դրված լինել միայն հուշարձանի նորոգման ժամանակ: Թե ե՞րբ է այդ տեղի ունեցել՝ դժվարանում ենք ասել: Ուշագրավ մի հանգամանք ևս: Տաճարի պատերին կան նաև ավելի հին ժամանակների՝ հավանաբար 10-րդ դարի խաչքարեր, որոնց խաչերի

[14] Ս. Էփրիկյան, Բնաշխարհիկ բառարան, հատոր 1, Վենետիկ, 1901—7, էջ 329, վանքն հիշվում է 1167 թ-ից:



Նկ. 7. Կողբ. բառակող կոթողի պատվանդան Արմավենու քանդակներով (VII դար)

թևերի ծայրերը երկուական գնդիկներով են վերջանում (որպես 10-րդ դարի խաչքարերի հնության հատկանիշ): Հավանաբար այստեղից էլ կարելի է եզրակացնել նաև, որ Զուխտագեղցում արդեն 10-րդ դարում եղել է բնակավայր՝ իր եկեղեցական շինություններով ու գերեզմանատներով:

Զուխտագեղցու երրորդ հուշարձանը դարձյալ թաղակապ, կիսավեր եկեղեցի է: Փոլ են եկել կառույցի հարավային և արևմտյան պատերը ծածկի հետ միասին՝ հավանաբար երկրաշարժի հետևանքով: Տեղում պահպանվել են տաճարի արևելյան պատն ու խորանը, հյուսիսային պատը և վերջինիս կից փոքրիկ ավանդատունը: Եկեղեցու պահպանված մուտքը հյուսիսից է: Հավանաբար մուտքեր է ունեցել նաև արևմուտքից ու հարավից: Երրորդ եկեղեցին համեմատաբար քիչ ավելի մեծ է եղել նախորդներից և գուցե հնագույնը այստեղի հուշարձաններից: Հենց այստեղ էլ գտնվել է 11-րդ դարին յուրահատուկ մի խաչքարի վրա պատկերվել են խաղողի մեկական ողկույզներ՝ Ցողաց քարի հայտնի 11-րդ դարի խաչքարի մոտավոր նմանությամբ:

Զուխտագեղցու չորրորդ հուշարձանը մի գողտրիկ, փոքր կառուցվածք է, որի արևմտյան ճակատն ամբողջությամբ զարդարված է գեղաքանդակ և արձանագիր խաչքարով (նկար 7): Խաչքարից ներքև հուշարձանի մուտքն է՝ 1,42 . 0,75 մ բացվածքով: Հուշարձանը նման է մատուռդամբարանի և հիշեցնում է Ցողաց քարի 11-րդ դարում կառուցված ս. Հովհաննես կամ Կաթողիկե կոչվող շինությանը: Վերջինիս ճակատը սակայն՝ զարդարում են միանգամից երկու խոշոր և ավելի գեղաքանդակ խաչքարեր՝ մեջտեղում ունենալով կրկնակի կամարներով ձևավորված մի խորշ:

Զուխտագեղցու այս չորրորդ հուշարձանը նրա հիշատակագրության համաձայն կոչվել է «քավարան», տերմին, որն աննախադեպ է միջնադարյան հայ ճարտարապետության մեջ իր կառուցողական և նպատակային իմաստով: Դա մի փոքրիկ շինություն է երկթեք տանիքով, որի ընդհանուր բարձրությունը 4,53 մ է, ընդ որում բուն խաչքարի բարձրությունը՝ 2,5 մ է, լայնքը՝ 0,91 մ, իսկ հաստությունը՝ 0,27—0,3 մ: Հուշարձանի արևմտյան ճակատի լայնքը 2,55 մ է: Արձանագրությունը փորագրված է խաչքարի ներքևի մասում, որի սկզբի ու վերջի տողերը գտնվում են հիշյալ խաչքարի ներքևի երկու կողմերում ավելացված սրբատաշ քարերի վրա: Արձանագրությունն ասում է.

... ԲԱՐԵՊԱՇՏ Ի[ՇԽԱՆՈՒԹԵԱՆ...]
[ՀԱՐ]ԱՋԱՏԻ ԻՇԽ[ԱՆԻՆ].....
..... ԱԻ ՍԱՐԳԻՍ ԵՒ ՄԻԱ[ԲԱՆՔՍ].....
[Շ]ԻՆԵՑԱՔ ՔԱՎԱՐԱՆ .....

. . . . . .

ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՉԻ ՀԱՍԱՐԱԿԱՑ ՆՋԷՑԵԼՈՑ ԿԱՏԱՐԻ. ՈՐ ԽԱՓԱՆԷ ՍԱՏԱՆԻ ԳՈՐԾԱԿԻՑ Է:

Հուշարձանախմբի տերիտորիայում պահպանված կավե խողովակները ապացույց են այն բանի, որ այստեղ խմելու ջուր է բերվել մոտակա աղբյուրներից:

Ջուխտագեղցու հուշարձանախմբի շուրջը, քիչ հեռու պահպանվել են կիսավեր գյուղատեղի և գերեզմանատուն՝ խաչքարերով ու տապանաքարերով: Այս հանգամանքը վկայում է, որ 10—12-րդ դդ. այստեղ բարգավաճ ու շեն բնակավայր է գոյություն ունեցել, ինչպես հուշում է արձանագրությունը՝ հավանաբար Ականջակաղին անունով: Տեղի բնակիչների պատմելով վերջինս անտառամիջի ճանապարհով հաղորդակցվել է Կիրանց և Առաքելոց վանքերի և համանուն բնակավայրերի հետ:



ՎԱՉԵ ՎՐԴ. ԻԳՆԱՏԻՈՍՅԱՆ, «ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐԸ», ՎԵՆԵՏԻԿ, Ս. ՂԱԶԱՐ, 1977 Թ., 36 ԷՋ

Մարսելի հայոց ս. Թադեոս եկեղեցու հոգևոր հովիվ Վաչե վրդ. Իգնատիոսյանը 1977 թվականին ս. Ղազարի տպարանից լույս ընծայեց 36 էջանոց «Աստվածամայրը» գրքույկը:

Գիրքը բացվում է Ծնորհք պատրիարք Գալուստյանի գնահատական խոսքով և հեղինակի առաջաբանով, ուր նշվում են սույն գրքի շարադրման պատճառն ու նպատակը:

Գրախոսվող գիրքը բաղկանում է երեք գլուխներից, որոնք իմաստով և բովանդակությամբ լրացնում են իրար:

Առաջին գլուխը կրում է «Աստվածամայրը» վերնագիրը (էջ 7—22), որն ունի հետևյալ ենթավերնագրերը. «Ս. Կույս Մարիամը և Աբրահամը», «Ս. Կույսը և Զաքարիա քահանան», «Հիսուս և իր մայրը», «Աստվածամայրը մեր ամենուն մայրն է»:

Երկրորդ գլխի վերնագիրն է «Վերափոխումն սուրբ Աստվածածնի» (էջ 23—27):

Երրորդ գլուխը կրում է «Հիսուս և իր կարծեցյալ եղբայրները» վերնագիրը, (էջ 29—36), որն ունի հետևյալ ենթավերնագրերը. «Որո՞նք էին Հիսուսի կարծեցյալ եղբայրները», «Ինչու չեն հիշված Հիսուսի եղբայրները» (Ղուկ. Բ 41), «Մարիամ իր անդրանիկ Որդին ծնավ» (Ղուկ. Բ 7), «Եվ Հոսեփ չէր գիտեր զայն՝ մինչև իր անդրանիկ Որդին ծնավ» (Մատթ. Ա 25):

Սույն գիրքը շարադրելիս հեղինակը օգտվել է իր թեմայի վերաբերյալ հայ և օտար համապատասխան աղբյուրներից, որոնց մասին իմանում ենք գրքի վերջում զետեղված «Մատենագիտություն» վերնագրից:

Վաչե վարդապետը Երուսաղեմի սրբոց Հակոբյանց վանքի միաբան է: Երկար տարիներ հովվական շնորհակալ աշխատանք է կատարում Փարիզի և Մարսելի հայկական համայնքներում: Սույն գրքույկը հեղինակի հոգևոր կյանքի փորձառության և եկեղեցական ծառայության արդյունքն է:

Գիրքը գրված է արևմտահայ գրական լեզվով, ոճը սահուն է, դյուրընթեռնելի և պատկերավոր:

Գրքում զետեղված են Աստվածամոր չորս գեղարվեստական նկարներ՝ գիրքը ավելի հետաքրքիր դարձնելու համար: Ավելի լավ կլիներ, որ բոլոր նկարներն էլ հայ դասական և նոր նկարիչների ստեղծագործություններից զետեղվեին:

Վաչե վարդապետը շնորհակալ աշխատանք է կատարել, որ արժան է խրախուսանքի և քաջալերման: Հայր սուրբը կատարում է իր հոգևոր պարտքը հայ եկեղեցու, հայ ժողովրդի նկատմամբ ի մտի ունենալով Պողոս առաքյալի հետևյալ ասույթը. «Արդ հատուցէք ամենեցուն զպարտս, որում զհարկս՝ զհարկն, որում զերկեղ՝ զերկեղն, որում զպատիւ՝ զպատիւն» (Հռոմ. ԺԳ 7):

Երիտասարդ վարդապետը գտնվում է իր հոգևոր և մտավոր ուժերի հասունացման շրջանում: Ծնորհավորում ենք նրա ստեղծագործական առաջին երախայրիքը և սպասում, որ նա հանդես գա ավելի ծավալուն, հոգեշահ, սուրբ գրական ուսումնասիրություններով:

ԱՆԱՍՏԱՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՄՈՎՍԻՍՅԱՆ



ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՀԽ-Ի ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՆԴԱՄ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Սույն թվականի մարտի 29—31 օրերին Բուդապեշտում տեղի ունեցավ ոչ պաշտոնական մի խորհրդակցություն՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ղեկավարների և Սովետական Միության ու Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների ԵՀԽ-ի անդամ եկեղեցիների ներկայացուցիչների միջև:

Խորհրդակցությունը կազմակերպել էր Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը՝ իրականացնելու համար 1975 թվականին Նայրոբիում գումարված ԵՀԽ-ի 5-րդ համաժողովի որոշումներից մեկը, այն է՝ սերտ հարաբերություններ հաստատել Սովետական Միության, ինչպես նաև Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների եկեղեցական գործիչների և համայնքների հետ:

Ժողովը տեղի ունեցավ Բուդապեշտի «Գրանդ հոթել» հյուրանոցում: ԵՀԽ-ի կողմից ժողովին մասնակցեցին կենտրոնական կոմիտեի նախագահ արքեպիսկոպոս դոկտ. Էդուարդ Սքոթը, գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթերը և պատգամավոր քարտուղար դոկտ. Կոնրադ Ռայզերը: Սույն խորհրդակցությանը մասնակցում էին Բուլղարիայի, Չեխոսլովակիայի, ԳԴՀ-ի, Հունգարիայի, Լեհաստանի, Սովետական Միության և Հարավսլավիայի մոտ 30 անդամ եկեղեցիների ներկայացուցիչներ՝ ընդամենը 50 հոգի:

Ժողովից բացակայում էին Ռումինիայի եկեղեցիների ներկայացուցիչները, որովհետև այդ օրերին վախճանվել էր ռումին օրթոդոքս եկեղեցու Պատրիարք Ժուստինիանը:

Հայաստանյայց առաքելական եկեղեցու կողմից ժողովին մասնակցում էր Մայր Աթոռի դիվանապետ և Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ տ. Արսեն եպս. Բերբերյանը:

Ժողովի բացումը կատարեց ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթերը: Պատասխան ճառով հանդես եկավ հունգարական եկեղեցիների էկումենիկ խորհրդի նախագահ դոկտ. Տիբոր Բարթա եպիսկոպոսը:

Ապա եղբայրական ջերմ և անկեղծ մթնոլորտում տեղի ունեցավ մտքերի և կարծիքների ազատ փոխանակում՝ օրակարգում նշված երեք հիմնական հարցերի շուրջ.

1. Համագործակցության հնարավորությունները Եկեղեցիների համաշխարհային խորհրդի և Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների անդամ եկեղեցիների միջև:

2. Աստվածաբանական խորհրդածու-

թյուններ Արևելյան Եվրոպայի եկեղեցիների կողմից՝ իրենց կացության մասին:

3. Ուսումնասիրություն ԵՀԽ-ի այն ծրագրերի, որոնք առանձին կարևորություն են ներկայացնում Արևելյան Եվրոպայի եկեղեցիների համար:

ԵՀԽ-ի և Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների եկեղեցիների միջև համագործակցության զարգացման հարցի առնչությամբ խորհրդակցության ընթացքում շոշափվեցին մասնավորապես հետևյալ կետերը.

ա. Շեշտվեց եկեղեցիների միության հարցի առաջիկա զարգացման կարևորությունը:

բ. Ուսումնասիրվեց և քննարկվեց զինաթափության հարցի շուրջ ԵՀԽ-ի ծրագիրը:

գ. Մանրամասն քննարկման ենթարկվեցին մարդկային իրավունքների պաշտպանության կապակցությամբ ԵՀԽ-ի կողմից առնվելիք քայլերը:

Ժողովում նշվեց, որ վերոհիշյալ բոլոր նպատակները կարելի է իրականացնել միայն լարվածության թուլացման և համագործակցության մթնոլորտի մեջ, որի հաջորդ հանգրվանը պիտի հանդիսանա Բելգրադում կայանալիք առաջիկա կոնֆերանսը:

Խորհրդակցության մասնակիցները շեշտեցին նույնպես ԵՀԽ-ի կենտրոնի և անդամ եկեղեցիների միջև հաղորդակցությունների լայն փոխանակման անհրաժեշտությունը, ինչպես նաև սոցիալիստական երկրների անդամ եկեղեցիների ներկայության հարցը էկումենիկ շարժման տարբեր կոմիտեների և օրգանների մեջ:

Ժողովում աստվածաբանական քննարկման առարկա հանդիսացան նմանապես Սովետական Միությունում և Արևելյան Եվրոպայում ապրող քրիստոնյաների կենցաղային հարցերը իրենց սոցիալիստական հասարակության մեջ:

Ժողովում ելույթ ունեցավ նաև տ. Արսեն եպս. Բերբերյանը՝ հանուն Հայոց Հայրապետի գնահատելով մեր օրերում էկումենիկ շարժման կարևորությունը, շարժում, որը բույր եկեղեցիներին տանում է դեպի մերձեցում և ապա միություն: Այս կապակցությամբ սրբազանը կարևորությամբ շեշտեց, որ մեր եկեղեցական նոր սերունդը և հավատացյալ ժողովուրդը պատշաճն է հատուցում էկումենիկ շարժմանը, որն իր դրական արձագանքն է գտնում մեր եկեղեցու և ժողովրդի կյանքում:

Կանգ առնելով Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո վերջին հինգամյակում ստեղծված նոր իրադրության մեջ հայ եկեղեցու վերածնունդի և զարգացման հարցի վրա, սրբազանը շեշտեց, որ հայ եկեղեցին այսօր էլ շարունակում է իր պատմական հոգևոր առաքելությունը մեր ժողովրդի կյանքում: «Բավական է արձանագրել,—նշեց նա,—որ վերջին երկու տասնամյակներում Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի գլխավորությամբ և ջանքերով ս. Էջմիածնում ստեղծվել է միաբանական նոր կյանք և սերունդ, գործում է ս. Էջմիածնի աստվածաբանական ճեմարանը, Մայր Աթոռի տպարանում տպագրվում են «Էջմիածին» ամսագիրը և կրոնական այլ հրատարակություններ, որոնց մեջ կարևոր տեղ են գրավում Նոր Կտակարանի մասնակի և ապա ամբողջական թարգմանությունները հայ ժողովրդի ժամանակակից գրական լեզվով:

Վերջին երկու տասնամյակներում հայ եկեղեցին օժտվել է նաև 35 երիտասարդ եպիսկոպոսների ձեռնադրությամբ, որոնք և՛ Սովետական Հայաստանում, և՛ եղբայրական հանրապետություններում, և՛ ափյուռքի հայ համայնքներում կատարում են շնորհակալ աշխատանքներ հայ ժողովրդի հոգևոր-քրիստոնեական դաստիարակության գործում»:

Իր ելույթի վերջում սրբազանը շեշտեց, որ ԵՀԽ-ն պետք է իր բոլոր ջանքերը ի գործ դնի՝ եղբայրական անշահախնդիր հարաբերություններն էլ ավելի ամրապնդելու համար եկեղեցիների միջև քրիստոնեական և էկումենիկ ոգով:

Մարտի 31-ի առավոտյան, ժողովի ավարտին, հրապարակվեց մի հաղորդագրություն, որի մեջ ժողովի մասնակիցները միաձայն արտահայտում էին իրենց գոհունակությունը սույն խորհրդակցության մասին, որ առիթ էր ընծայել փորձի լայն փոխանակման:

Հաղորդագրության մեջ նշվում էր նաև, որ «ապրված այս կենդանի գործակցությունը պիտի օգնի մասնակիցներին հետագայում առավել արդյունավետ կերպով սատարելու քրիստոնեական վկայության գործին»:

Նույն օրը Հունգարիայի եկեղեցիների էկումենիկ խորհուրդը «Գրանդ հոթել» հյուրանոցում, ի պատիվ հյուրերի, կազմակերպեց պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա գտնվեցին նաև Հունգարիայի պետական և հասարակական տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ և զանազան թերթերի թղթակիցներ:



ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 10բ.—(Ամբողջ էջի ծավալով նկարի տակ գրված է երկաթագրով)

Ծառա Խուպիեար:

Թ. 103բ.—Եղբայր զայս ամէն արուեստն որ գործես քանի կարես պարկեշտ տեղիք գործէ, զի խիստ վատաչիչ աճունի աչք չի վերցներ, աճա ասացի ձեզ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկզբի պահպանակի վրա գրված է)
Բիրիգուն ծաղիկ ասին:
Խիլիջ աղի լինին:
Խուտավիրտ:
Խալիլ Հալ:
Նոյեմբերի ԺԸ-ին Ժ Ղոշ Ալտարին տվի:

Թ. 1բ.—Երանեալ է:

Այս է Սիմօնին գրչ.:

Թ. 9բ.—Աբգդեզէը (գրված բազմաթիվ անգամ, որպես գրչափորձ):

Թ. 10ա.—(Գլխացավի դեղատոմս է տրված այստեղ:)

Թ. 11ա.—Կա մի փոքրիկ կնիք, 1,3×1,1 սմ. չափերով, որի վրա գրված է)

Քի. ծո. Սարգիս վդպտ.:

Թ. 20ա.—Երեմ ցաւ ու խիստ պիտի:

Թ. 23բ.—(Կա մի փոքրիկ կնիք, 0,9×0,8 սմ. չափերով, որի վրա գրված է)

Քի. ծո. Խպիար:

Թ. 24բ.—(Նույն կնիքը կրկնվում է այստեղ:)

Թ. 58բ.—(Կա մի փոքրիկ կնիք, 1×0,8 սմ. չափերով, որի վրա գրված է կապգրերով)

Կարապետ

Թ. 59ա.—(Կա մի փոքրիկ կնիք, 1,3×1,1 սմ. չափերով, որի վրա գրված է)

Քի. ծո. Սարգիս վդպտ.:

Թ. 68բ.—Ջուզ հիտի:

Թ. 92ա.—Ջխաղողին որթուն տերևն և զոստն ծեծեն:

Թ 92բ.—...կոնն ծեծէ և մաղէ և բեր խառ... յիրար, որ միաւորի դիրամ ... օգտէլ:

Թ. 94ա.—Թուլանխան ասին:

Թ. 95բ.—... որոյք արա և շիպ և սապուն և սակաւ զաֆրան աղա մանր զպատրոյքն թաց և դիր:

Թ. 106բ... զամենն պարապար և Բ մեղր տուր ծերոցն, Գ տրմ. կտրիճ մարդոց Բ օգտէ փորձած է:

Թ. 138ա.—Հին հազի և թոքի և պալղամի:

Թ. 156բ.—Այս հէ(քի)մարանը 101 թուխտ այ:

Թ. 157ա.—Սբ. երկուրդուն. հօր և ուրդոյ և Սբ. հոգ. մեղա յերկինս և արաչ, աչի. ոքէ. Ճ Տէր մեղա այսէ:

10 թուտէ: Ֆիլիպ:

Թ. 157բ.—(Տրված է մի դեղատոմս:)
Այս է տապան դիր հանգստի, որ է Մարի:

Թ. 158ա.—(Տրված է երկու դեղատոմս:)

Թ. 158բ.—(Տրված է մի դեղատոմս:)

(Կազմի կոնակի թղթին գրված է)
Կամացկութեամբ Աստուածային,
զայն որ խորհի միշտ առ բարին,
Անապականել մի:
Պաղատանօք Աստուածածնին,
անապական և միշտ Կուսին:
Գիժ, որ է գիթապ հէքիմարանին, գիթ.:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից և 1977 թվականի № Գ-ից:

№ 412
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Թերթերը՝ 190։— **Պրակները՝** 18, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի Ա՝ 3, Բ՝ 4, Գ՝ 9, Դ, Է, ԺԲ, ԺԹ՝ 11, Ի՝ 10 թերթից են։ Սրանից բացի սկզբնական ձեռագրից պակասում են ամբողջ 8-րդ և 9-րդ պրակները։—**Մեծությունը՝** 14,5×10,2×4,3 սմ.։— **Նյութը՝** դեղնած և կնդրտոտած հատ թուղթ։— **Կազմը՝** կաշեպատ տախտակ, որի երկու բռնիչներն ընկել են։— **Պահպանակներ՝** չունի։— **Վիճակը՝** անբավարար, երկու պրակ (Ը և Թ) ամբողջությամբ պակասում են, իսկ բազմաթիվ պրակներ էլ թերի են, շատ թերթեր թափվելով ժամանակի ընթացքում։— **Գրությունը՝** միասյուն։— **Դատարկ թղթեր՝** չունի։— **Տողերը՝** 19։— **Գծումները՝** ճնշումով։— **Գիրը՝** բոլորգիր։— **Զարդագրություն՝** ձեռագիրն ունի միջակ գեղեցկությամբ վեց հատ գլխազարդեր (թթ. 23բ, 49բ, 81ա, 103բ, 138ա և 170բ), բազմաթիվ թոչնագրեր, զարդագրեր և լուսանցազարդեր։— **Գրիչը՝** Մարտիրոս քահանա։— **Ժամփրատուն՝** անհայտ։— **Ծաղկողը՝** անհայտ։— **Ժամանակը՝** 1595 թ.։— **Վայրը՝** Սեբաստիա։— **Մանոթություն՝** ձեռագիրն ստացվել է Կահիրեից եգիպտահայոց թեմի առաջնորդական տեղապահ Զավեն Եպիսկոպոս Չինչինյանի ձեռամբ 1973 թ. նոյեմբեր ամսին։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 190ա.—Փառք ամենատուրբ Երրորդութեանն և մի աստուածութեանն Հաւր և Որդոյ և Հոգւոյն սրբոյ(յ)։ Որ ետ կարողութիւն տկար անձին իմոյ՝ Մարտիրոս գրչի հասանել յաւարդ սաղմոսարանի և աղաւթմատուցիս։ Ի թվին ՌԽԴ (1595 թ.—Ն. Մ.), ի քաղաքս Սեբաստիոյ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և Սուրբ Սարգսին զաւրավարին։

Արդ աղաչեմ զամենեսեան որք հանդիպիք սմա կարդալով կամ ուրինակելով յիշեցէք յաղաւթս ձեր զիս զբա(զ)մամեղ երեցս, և զծնաւղքս իմ. հանդերձ ամենայն կենդանեաւքս և ննջեցելովք, և որ յիշէ յիշեալ լինի ի Քրիստոսէ, որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն։ Ի յայս ամիս նահատակին զՏատուրն զորդին Շատա(թ. 190բ)րևին յունիսի Բ յետ բազում չարչարանաց ի տախտակն խաչանման բևեռեցին, զերկու ուսն դան(ա)կով ծակեցին ու ֆիթիլ վառեցին, իսկ նայ սաղմոսէր և զՔրիստոս կենդանին աւրհնէր, յետո(յ) տարան ի գետեզերն ի ծառն ի վար կախեցին, նայ չուանն կտրեցաւ շնորհօքն Քրիստոսի որ կենդանի անկօի մէջ դրին և նայ զդէմն յարևելս ունելով գոհութիւն մատուցանէր Քրիստոսի և սուրբ հաւատոյս մերոյ Լուսաւորչին. և տեսեալ կատաղի ազգն տաճկաց զբաչութիւն և զհամ(բ)երութիւն նորին. քարիւ քարկոծեցին և սրով գլխատեցին, և զայն գիշեր անթաղ թողին և գնացին, բայց ի յերկնից լոյս ծագեաց ի մէջ գիշերին. ի վերայ նոր նահատակին երանելի մանկանն Տատուրին և յետո(յ) զմարմին խողխ(ո)ղեալ և կըտրատեալ ժողովեցին և տարեալ ի Սուրբ Քառասունք ի հանգիստ եդին։ Ի յայսմ ամիս թագաւորեաց սուլտան Մահմատն, որդի սուլտան Մուրատին։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ձեռագրի կազմի կռնակում գրված է)

Թիւ 6։

Թ. 1բ.—Թիւ 6։

Թ. 124ա.—Ալէ, ըթ, իլ, խմ, ձկ, ճղ (գրչափորձ)։

Թ. 135բ.—Անել, ամենայնի։

Թ. 136ա.—Զոր արկեր յերկիր։

Առաջի քո ամեն այս ժամ զիս և։

Թ. 137.—Աննին իմոյ։

Թ. 190բ.—Նազարէթ Շատուրեան (սա այն անձն է, որ ձեռագիրը նույն մատիտով համարակալել է ամբողջությամբ սկզբից մինչև վերջը, նշելով 1—380 էջերը)։

№ 413
ԽԱՉԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 154։— **Պրակները՝** 8, յուրաքանչյուրը 20-ական թերթից, բացի Ա՝ 16 և Ը՝ 18 թերթից են։—**Մեծությունը՝** 20,5×13,3×1,4 սմ.։— **Նյութը՝** դեղնած բարակ թուղթ։—**Կազմը՝** բարակ ստվարաթուղթ։— **Պահպանակները՝** սկզբում և վերջում կա մնկական հաստակ բարակ թուղթ, կարմիր և կապույտ գծավոր։— **Վիճակը՝** բավարար։— **Գրությունը՝** միասյուն։— **Դատարկ թղթերը՝** 1ա, 1բ, 145բ—153բ, 154բ։— **Տողերը՝** 8։— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է։— **Գիրը՝** բոլորգիր և հայկական նոր խազեր։— **Զարդագրություն՝** չունի։— **Գրիչը՝** Սերովբե Սիրունյան, աշակերտ Գրիգոր Մեհթերյանի։— **Ժամանակը՝** 20-րդ դար։— **Վայրը՝** Կոստանդնուպոլիս։— **Մանոթություն՝** ձեռագիրն ստացվել է Ստամբուլից 1974 թ. ձեռամբ Բագարատ Սեմերջյանի։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայկական նոր խազագրության սույն ձեռագիրը գրված և նոտագրված է պոլսահայ անվանի երաժշտագետ Գրիգոր Մեհթերյանի աշակերտ և Գումգապուի Սուրբ Հարություն եկեղեցու երաժշտապետ Սերովբե Սիրունյանի կողմից։ Գրքի գլխավոր վերնագրերը տրվում են ստորև.—

Թ. 2ա.—Հարց յարութեան (թկ)։

Թ. 4բ.—Մեծացուցէ (թկ)։

Ողորմեա (թկ)։

Թ. 5ա.—Տէր յերկնից (թկ)։

Թ. 9ա.—Հարց երևման խաչի (դձ)։

Թ. 18ա.—Հարց Բ.րդ Ծաղկազարդի (դկ)։

Թ. 24բ.—Շարական Հոգեգալստեան (թկ)։

Թ. 26ա.—Հարց տօն կաթողիկէ եկեղեցւոյ (գձ)։

Թ. 30ա.—Շարական թափօրի (դկ)։

Թ. 38ա.—Կանոն վարդավառի (աձ)։

Թ. 40ա.—Շարական (ստեղի) դկ։

Թ. 44բ.—Մեծացուսցէ (գկ):
Թ. 45ա.—Ողորմեա (գկ):
Տէր յերկնից (գկ):
Թ. 46ա.—Տաղ Աստուածածնայ (պէյաթի: աղբր սէմայի: Պապա Հ. Լիմոնճեան):
Թ. 48ա.—Երգ Աստուածածնայ:
Թ. 50ա.—Կանոն վերացման Ս. Խաչի (ած):
Թ. 52բ.—Հարց (գկ):
Թ. 56բ.—Շարական խաչի (գկ):
Թ. 63ա.—Օրհնութիւն Վարագայ Ս. Խաչի (ակ):
Թ. 78ա.—Հարց (բձ) Գիւտ Խաչի:
Թ. 119բ.—Կանոն Է-րդ աւուր Ծննդեան (բձ):
Թ. 142ա.— Հարց Բուն Բարեկենդանի:
Թ. 154ա.—Ցանկ յատուկ շարականաց (այստեղ տրված է միայն 15 շարականների մի ցուցակ):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ձեռագրի սկզբում գտնվող պահպանակի վրա գրված)
Աղաւնի, 85, դպրոց:
Թ. 1ա.—Գրեց Սերովբէ Սիրունեան
(Աշակերտ Գրիգոր Մեհթերեանի)
վաստակաւոր երաժշտապէտ
Ս. Ցարութիւն եկեղեցւոյ
ի Գումգաբու, 1945:

№ 414
ԱՂՕԹԱԳԻՐՔ
(Եթովպերեն)

Թերթերը՝ 66:— **Պրակները՝** 9, յուրաքանչյուրը 8-ական թերթից, բացի Ա՝ 4 և Թ՝ 6 թերթից են:— **Մեծությունը՝** 13,4×9,6×3 սմ.:— **Նյութը՝** դեղնած հաստ մագաղաթ:— **Կազմը՝** կաշեպատ տախտակ, որ ծածկված է հասարակ կտորով: Ներքևում կա 30 սմ. բարակ և երկար մի կտոր, ծալրը օղով, մի տեղից կախելու նպատակով:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** թթ. 5ա—52ա և 59ա—60բ երկսյուն, իսկ 53ա—59ա և 61ա—63բ միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա—4բ, 52բ, 64ա—66բ:— **Տողերը՝** 13, միայն մի քանի էջ՝ 17 տող:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** ամհարերեն:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 17—18 դարեր:— **Վայրը՝** շատ հավանաբար Եթովպիա:— **Ծանոթություն՝** Վեհափառ Հայրապետը սույն ձեռագիրը հանձնել է Ձեռագրատուն 1974 թ. նոյեմբերի 16-ին:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 2բ.—Կա երկու բառ փոքրատառերով գրված:
Թ. 3բ.—Կա մի բառ փոքրատառերով գրված:
Թ. 4ա.—Կա յոթ տող մեծատառերով գրված:
(Այս բոլորը եթովպերեն է:)

№ 415
ԽԱԶԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 464+2 (թթ. 5ա և 9ա)=466:— **Պրակները՝** 26, բոլորովին անհամաչափ, Ա՝ 10, Է՝ 12, Ը և ԻԴ՝ 14, Դ և ԻԶ՝ 15, Ժ, ԺԳ, ԺԶ, ԺԷ, ԺԹ և ԻԱ՝ 16, Ե և ԻԵ՝ 17, Թ, ԺԱ, ԺԵ, ԺԸ, Ի, ԻԲ և ԻԳ՝ 18, ԺԴ՝ 19, Բ՝ 20, Զ՝ 24, ԺԲ՝ 33 և Գ՝ 34 թերթից են:— **Մեծությունը՝** 20,1×16,8×4,7 սմ.:— **Նյութը՝** դպրոցական հասարակ թուղթ:— **Կազմը՝** լաթակազմ տախտակ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական կարմիր հաստ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 39բ—62բ, 140բ—162բ, 172ա—193ա, 196բ, 237բ, 251ա—264բ, 286բ—298ա, 311բ—315բ, 325բ—332բ, 338բ, 342ա, 351բ—366ա, 376ա—384բ, 392ա—433բ, 446ա—464բ:— **Տողերը՝** 9, սակայն երբեմն 6—8:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր և հայկական նոր խազեր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Հակոբ քահանա Մխիչան (1889—1954 թթ.):—**Ժամանակը՝** 1930 թ.:—**Վայրը՝** Մարսել (Ֆրանսիա):— **Ծանոթություն՝** Վեհափառ Հայրապետը սույն ձեռագիրը հանձնել է Ձեռագրատուն 1974 թ. նոյեմբերի 16-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ստորև տրվում է ձեռագրի գլխավոր վերնագրերը միայն.—
Թ. 1ա.—Մանկունք Դկ. Ստեղի Ը-րդ աւուր Ս. Խաչի:
Թ. 4ա.—Մանկունք Բկ. Ստեղի Բ-րդ աւուր Վարդավառի:
Թ. 7բ.—Թագաւոր յաւիտեան հրեշտակապետաց:
Թ. 11ա.—Կանոն 72 աշակերտացն Քրիստոսի, հարց Դկ.:
Թ. 29ա.—Հարց Ակ. Մեծ պահոց Բ-րդ շաբաթուն:
Թ. 36ա.—Հարց Աձ. Դարձուածք Ս. Ծննդեան ութօրէիցի:
Թ. 38ա.—Շար. Դձ. (ողտ.) ծննդ. Յովհ. ու Մկրտչի (ի պէտս Գշ. աւուր մեծ պահոց միջինքի):
Թ. 63ա.—Կանոն Գ-րդ կիւրակէի մեծ պահոց, օրհ. Գկ.:
Թ. 101ա.—Աւագ հինգշաբթի շարականք ապաշխարողաց, ողորմեա Դկ.:
Թ. 106բ.—Կանոն Ծննդեան և Աստուածայայտնութեան ճրագալոյցին, օրհ. բձ.:
Թ. 121բ.—Մանկունք և համբարձի բձ. Սրբոց Սուքիասեանց:
Թ. 122բ.—Մանկունք և համբարձի Դկ. Սրբոց Վարդանանց:
Թ. 124ա.—Մանկունք Դկ. Նիկողայոսի Զմիւռնիոյ հայրապետին:
Թ. 126ա.—Մանկունք Դկ. Սրբոյն Բարս(ե)ղի հայրապետին:
Թ. 127բ.—Մանկունք Դկ. Յովհաննու Ոսկեբերանին:

Թ. 129ա.—Մանկունք Դկ. Մանկանցն Բեթղեհէմի:

Թ. 131ա.—Կանոն Ս. Գրիգոր Լուսաւորչին, լիշ(ատակ) ելանելոյն ի Վիրապէն, օրհ. Բձ.:

Թ. 163ա.—Տէր յերկնից Դձ. (Պէնտէկոստէի Գ-րդ աւուր):

Թ. 168բ.—Տաղ Աւետեաց:

Թ. 169ա.—Տաղ Խաչի:

Թ. 169բ.—Տաղ Մարտիրոսաց:

Թ. 170ա.—Տաղ Հայրապետաց:

Թ. 170բ.—Տաղ Ս. Կուսին (Աղբր Սէմայի):

Թ. 197ա.—Մեղեդի Յարութեան (Սֆահան):

Թ. 198բ.—Մեղեդի Յարութեան և Ծաղկազարդի (Էվին):

Թ. 216բ.—Տաղ Ծննդեան և Յարութեան:

Թ. 226բ.—Մեղեդի խնկարկութեան (Սապա):

Թ. 228բ.—Մեղեդի Համբարձման, Հոգեգալստեան և Վարդավառի:

Թ. 229բ.—Թափորի շարական Ս. Զատկի և Յիսնից կիւրակէից:

Թ. 238ա.—Շարական Գկ. ի պէտս հանդիսաւոր աւուրց:

Թ. 301բ.—Սրբասացութիւն Ծննդեան, Աւետեաց, Վարդավառի և Աստուածածնայ:

Թ. 310բ.—Եռաձայն երգ, զկնի Իւղաբերից Աւետարանի:

Թ. 434ա.—Յանկ գրուածոց:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Կազմի վրայի սպիտակ պիտակի վրա գրված է)
Տէտր եկեղեցական երգեցողութեանց
վերաբերի Յակոբ քհյ. Մխճեանի:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի ներսի կողմը կա քահանա գրչի փոքրիկ լուսանկարը, 5,7×3,7 սմ. չափերով, որի կողքը սպիտակ թղթի վրա մեքենագրված է հետևյալը.)

Համառօտ կենսագրականը Տէր Յակոբ քհնյ. Մխճեանի

Բնիկ Ատաբազարցի, ծնած է 1889ին, անունն է Գրիգոր: Իր ծննդավայրին Արամեան Վարժարանը աւարտելէն յետոյ 1906ին կը դրկուի Արմաշի Դըպրեվանքը. ուր աշխարհականաց դասընթացը լրացնելէն վերջ կը վերադառնայ Ատաբազար: Ան կը ծառայէ իր ազգին որպէս ուսուցիչ և երաժշտապետ:

1919ին Պոլսոյ Պէշիկթաշ թաղին եկեղեցիին դպրապետութիւնը կը վարէ:

1929ին Մարսէյլի մէջ Ս. Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ դպրապետ կը պաշտօնավարէ ապա կը ձեռնադրուի քահանայ:

1932ին կը մեկնի Ուստր, Միացեալ Նահանգներ: Կը ծառայէ քսան և երկու տարիներ Ս. Փրկիչ եկեղեցւոյ մէջ: Նաև տարի մըն ալ անոր նորակարոյց եկեղեցւոյ մէջ կը պաշտօնավարէ: Ան շատ սիրուած և յարգուած հովիւ մըն էր իր հոտին:

Ստացած էր լանջախաչ կրելու և Աւագ քահանայութեան աստիճանը: Տէր Հայրը անխոնջ, անձնուէր և նուիրուած հոգևորական մըն էր: Ինքը արդէն շատ քաջ շարականագէտ մըն էր ըստ լատինական մասնագետներու դատումով:

1908ին Ատաբազարի մէջ հրատարակած է **Երգեցողութիւնք Սուրբ Պատարագի** անուն գրքոյկ մը, նաև երգարան մը: 1930ին Մարսէյլի մէջ դասաւորած և հրատարակած է **Եկեղեցական երգեցողութիւնք** անուն ընթարցակ գիրքը: Հայկական և Եւրոպական ձայնագրութեանց մօտէն տեղեակ ըլլալուն: Ուստրի մէջ տարիներու տքնաջան աշխատանքով մեր եկեղեցական բոլոր տաղերը, մեղեդիները, շարականները եւրոպական ձայնագրերով և տառերով 1944ին յաջողած է գրի առնել 265 մեծադաւալ էջերէ բաղկացեալ շարականագիրք մը, որը արտօնուած է Հայաստանեաց եկեղեցիներուն մէջ երգել համաչափ և ներդաշնակ երգեցողութեան սատար հանդիսանալով, և մատչելի ըլլալով անգլիախօս հայ նոր սերունդին:

1946ին ալ 130 էջերէ բաղկացեալ մեծադիր ձայնագրեալ երգարան մը, որուն մէջ ամփոփուած են եօթանասուն երկու հատընտիր երգեր: Ինչպէս նաև վաթսուն և չորս արեւելեան սիրերգներ հայերէնի թարգմանած է: Այս ևս անգլիախօս նոր սերունդին օգտակար ըլլալու համար:

Արժանաշնորհ Տէր Յակոբ Աւագ Քահանայ Մրխճեան վախճանած է ապրիլ 26, 1954, Ուստր քաղաքին մէջ. Միացեալ Նահանգներ:

Վերոյիշեալ հակիրճ կենսագրականը քաղուած (է) Տէր Հօր ինքնակենսագրութենէն:

Երէցկին Տիգրանուհի Մխճեան:

(Պահպանակի կոնակում)

Գրելիքներս են՝

Սապահի ամեն և ընդ հոգւոյդ բում.

Համեմատ քիչ ...

Վահանայ Գողթնացւոյն զարմանալի է ինձ:

Թ. 2բ.—Երկնաւոր հօր...ը տե՛ս Գաբրիէլի և Միքայէլի կանոնին մէջ (էջ 21):

Թ. 121ա.—Մաշու Աձ. (դարձուածք) Անսկիզբն Աստուած: Տես էջ 334:

Թ. 200բ.—Զաւէնի գրած եմ (նոյնը էջ 202ա և 207ա):

№ 416
ՀԱՄԱՅԻԼ

Թերթերը՝ 1:— **Մեծությունը՝** 130,2×10,8 սմ.:— **Նյութը՝** դեղնած բարակ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** բավարար, սակայն տեղ-տեղ ներկի ազդեցության տակ թղթի որոշ մասերը մաշվել և ծակվել են:— **Գրությունը** միապլան:— **Տողերը՝** 88:—**Գծումները՝** առանց ճնշումի:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** հմայիլի երկու լուսանցքները երեք գույնի երիզ է ներկված: Կարմիր և դեղին երիզները բարակ են, իսկ կապույտը ավելի հաստ: Զեռագիրն ունի բավականի գեղեցիկ երեք նկար, որոնք ներկայացնում են Հիսուսը, Աստվածածինն և Սուրբ Գեորգը: Կա նաև երեք

թոչնագիր և չորս ծաղիկ: Այս բոլորն էլ ջրաներկ են:— **Գրիչը՝** ներընծա Ամենայն Տեր Ղազար:— **Պատվիրատուն՝** Գրիգոր Աբգարյան:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1830 թ.:— **Վայրը՝** Սրբո Աստվածածնա եկեղեցի (սակայն տեղավայրը անհայտ է):— **Մանոթություն՝** Վեհափառ Հայրապետը սույն հմայիլը հանձնել է Զեռագրատուն 1974 թ. նոյեմբերի 16-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մեջբերում Ղուկասու Ավետարանից և մի քանի աղոթքներ ու մաղթանքներ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Եւ եղիցի բժշկութիւն ծառայիս Պրն. Գրիգորին, իւր Խաթունին և որդոցն:

Աստուած բարեխօս լեր ի փորձան(ա)ց զմեզ փրկեալ և մանաւանդ զծառայս Պրն. Գրիգորին, իւր Խաթունին և որդոցն:

... պահեա տէր զծառայս Պրն. Գրիգորին, իւր Խաթունին և որդոցն:

... փրկեա՛ և ազատեա զծառայս և Պրն. Գրիգորին, իւր Խաթունին և որդոցն:

Գրեցաւ Հմայիլս ի Դրան Սրբոյ Աստուածածնայ եկեղեցւոյն ձեռամբ նորընծայ Աւետ Տէր Ղազարին վասն պահպանութեան:

Յամի Տեառն 1830 տամս 25:

(Հմայիլի կոնակի վերևի մասում գրված է)

Ազնիւ Պրն. Գրիգոր Աբգարեան

№ 417

ԿՈՆԴԱԿ

Թերթերը՝ 1:— **Մեծությունը՝** 71,5×51,6 սմ.:— **Նյութը՝** դիմացկուն հաստ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** երկսյուն:— **Տողերը՝** 33:— **Գծումները՝** մատիտով:— **Գիրը՝** շղագիր:— **Զարդագրություն՝** կոնդակի վերևի կենտրոնական մասում նկարված է երկինքը, որտեղ ամպերի մեջ գտնվում են երկու աղջիկներ, հրեշտակների թևերով, մեկ ձեռքով բռնած են մեկական կանաչ ճյուղ, իսկ մյուս ձեռքով միասին պահում են մի մեծ ծաղկեպսակ, կարմիր ծաղիկներով, կանաչ տերևներով և կարմիր երկայն երիզով: Այս ծաղկեպսակի մեջ կա Գեորգ Ե-ի կաթողիկոսական կարմիր մեծ կնիքը, 5,6 սմ. տրամագծով, որի շուրջ բոլորը երկու տողով գրված է հետևյալը. «Գէորգ կաթուղիկոս ամ(ենայն) հայոց և Ծայրագոյն պտրրք. Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի: Էջմիածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա— ՌՑԿԱ» (1912 թ.—Ն. Մ.): Կնիքի կենտրոնում նկարված է մի կաթողիկոս, ձախին՝ Էջմիածնի Մայր Տաճարը, աջին՝ Արարատ լեռը և գագաթին Նոյան տապանը, իսկ վերևում՝ երկնքում՝ երկու հրեշտակներ: Կոնդակի վերևի երեք տողը տպված է երկաթագրով, որը կարդացվում է «Գէորգ ծառայ Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ, Եպիսկոպոսապետ և կաթուղիկոս Ամենայն հայոց, Ծայրագոյն պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան առաքելական Մայր եկեղեցւոյ Սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի»: Առաջին տողը ոսկեգրով է տպված, իսկ 2-րդ և 3-րդ տողերը՝ կարմիր թանաքով: Սկզբի «Գ» տառը գեղեցիկ մի մեծ (9,5×7,5 սմ. չափերով) զարդագիր է, որի հետևում մի հրեշտակ է կանգնած: Սա գտնվում է կոնդակի ձախակողմյան մասում, իսկ աջակողմում նկարված է Էջմիածնի Մայր տաճարը, մանկահասակ երկու հրեշտակներ, որոնց մեկ ձեռքին կա եկեղեցական գավազան, իսկ մյուս ձեռքով բռնած են մի ժապավեն, որի վրա գրված է «կաթուղիկոս» բառը:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** Գեորգ Ե. Սուրենյանց, կաթողիկոս ամենայն հայոց (1911—1930 թթ.):— **Ծաղկողը՝** անհայտ: Սույն կոնդակը մի գեղեցիկ նմուշ է, որ տպված է Տփխիսի Հ. Շահբազյանցի Գեղարվեստ վիմագրատան մեջ:— **Ժամանակը՝** 1922 թ.:— **Վայրը՝** Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վանք:— **Մանոթություն՝** Վեհափառ Հայրապետը սույն կոնդակը հանձնել է Զեռագրատուն 1974 թ. մայիսի 18-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոգեզգոն Միաբանից Ս. Ուխտին հոչակաւոր Մենաստանին Սևանայ, բարեկրօն քահանայից, պատուարժան Ծխական հոգաբարձութեանց, քրտնաջան երկրագործաց և շինականաց շրջակայ գիւղորէից Սևանայ, հարազատ որդւոց Մայր Աթոռոյն նուիրեմք զՀայրապետական օրհնութիւն և զՓրկչաւանդ սէր առ ի կալ և մնալ Ձեզ՝ անարատ ի վարս, անբիծ ի հաւատս, անփորձ ի կեանս լցեալ բարեպաշտութեամբ և պտղովք արդարութեան ըստ հաճոյից կամացն Աստուծոյ, Ամէն:

Եւ ընդ Հայրական ողջունիս և Հայրապետական օրհնութեանս յայտ առնեմք սիրեցելոյդ առ ի Մէնջ որդւոց, զի համաձայն խնդրանաց Միաբանութեան Մենաստանին Սևանայ և տեսանել զնորոգ ընտրեալ և հաստատեալ ի Մէնջ զվանահայր Մենաստանիդ զՏ. Գիւտ Ծ. վարդապետ յԱռաքելական աստիճան Եպիսկոպոսութեան վասն օգտաւէտ ծառայութեան իւրոյ և ի խրախոյս առ յապայն գործունէութիւն, Մեք, ի 16 յուլիս ամսոյ, ի տօնի Գիւտի Ս. Նշխարաց Ս. Հօրն Մերոյ Գրիգորի Լուսաւորչի, շնորհեցաք նմա զբարձր կոչումն Եպիսկոպոսութեան, ձեռն եդեալ ի վերայ նորա և օծեալ Ս. Միւռոնիւ ի Քրիստոսաէջ Մայր Տաճարիս: Անհաւասիկ առաքեցաք զնա առ Ձեզ ի մխիթարել զՁեզ և զբարեպաշտ Ուխտդ և զքրտնաջան երկրագործս շրջակայ գիւղորէից ի շարունակել զպաշտօն իւր, ի պայծառացուցանել զեկեղեցի Աստուծոյ, հաւատացեալ տեսչութեան իւրում, ի կրթել և վարժել զամենեսեանդ յԱստուածային օրէնս և Աւետարանական պատուէրս:

(Շարունակելի)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի քարոզը Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Մայր տաճարում 3

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները 6

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմական բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին 9

Փրկչի հրաշափառ Հարության տոնի առթիվ հանդիսավոր սուրբ պատարագ և հայրապետական քարոզ Մայր տաճարում 11

Հանգիստ ռումին օրթոդոքս եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Ժուստինիանին 13

Ապրիլի 24-ը Մայր Աթոռում 19

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական թեմ. լուրեր 21

ՍԻՎԱՆ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ—Ապրիլի 24. Երևան 24

ՄԱՐԿ ՌԻԺԿՈՎ—Հայ մարդու հոգում, հիշողության մեջ 27

ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ—Ավագ հինգշաբթի 28

Ա. Հ.—Սուրբ Կյուրեղ Հայրապետ Ալեքսանդրացի 34

Սիոնի... (շարական, մշակումը՝ Գրիգոր Փիտեճյանի) 40

ԽԱՉԱՏՈՒՐ ԿԱՆԱՉՅԱՆ—Էջմիածնի նվիրակությունը ԺԸ դարում 44

Ա. Ն. ՇԱՀԻՆՅԱՆ—Միջնադարյան նորահայտ հուշարձաններ 49

ԱՆԱՍՏԱՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՄՈՎՍԻՍՅԱՆ—Գրախոսություն—Վաչե վրդ. Իգնատիոսյան, «Աստվածամայրը», Վենետիկ, ս. Ղազար, 1977 թ., 36 էջ 56

Խորհրդակցություն ԵՀԽ-ի և Արևելյան Եվրոպայի երկրների անդամ եկեղեցիների ներկայացուցիչների միջև 57

Ցուցակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի 59

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 15.4.1977 թ.: Ստորագրված է տպագրության 17.5.1977 թ.:
Տպագրական 4 մամուլ + 3 ներդիր, թուղթ 60×84 1/8, պատվեր 287:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1977 թ.